UNITED NATIONS
GEORGIA

World Vision
GEORGIA

ԴՊՐՈՑՆԵՐԸ
ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

2021

World Vision
GEORGIA

UNITED NATIONS
GEORGIA

ԴՊՐՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԺԱՄԱՆԱԿ

Գործնական ուղեցույց
հանրակրթական հաստատությունների համար

(փորձնական տարբերակ)

ՍԱՔԱՐԹՎԵԼՈՍ ԳԱՆԱԹԼԵԳԻՍ,
ՄԵՑՆԻԵՐԵԳԻՍ, ԿՈՒԼՏՈՒՐԻՍԱ
ԴԱ ՍՊՈՐՏԻՍ ՍԱՄԻՆԻՍՏՐՈ

2021

Ուղեցույցի վրա աշխատել են.

Նաթիա Մժավանաձե՝ կրթության հետազոտող, միջազգային և համեմատական կրթության դոկտոր, WV Վրաստանի Թբիլիսիի ուրբանային ծրագրի մենեջեր

Ցիրա Բարքաիա՝ MPhil SNE, հոգեբան, ներառական և վաղ կրթության մասնագետ, «WV Վրաստանի» Վաղ տարիքում երեխայի զարգացման ծրագրի համակարգող

Ռևազ Ափխազավա՝ քաղաքականության շահերի պաշտպանության պատասխանատու, WV Վրաստանի խորհրդատու, հանրակրթության փորձագետ

Գիորգի Ճանտուրիա՝ Կրթական կոալիցիայի տնօրեն, քաղաքացիական կրթության ուսուցիչ, WV Վրաստանի խորհրդատու, կրթության կառավարման փորձագետ

Զուրաբ Ալխանիշվիլի՝ առողջապահության աջակցության մագիստրոս, «WV Վրաստանի» խորհրդատու, Ուղեցույցի առողջապահության փորձագետ

Մարիամ Խվադագիանի՝ նյարդահոգեբան, «WV Վրաստանի» խորհրդատու, Ուղեցույցի հոգեբան

Նանա Գոչիաշվիլի՝ սոցիալական աշխատող, իրավաբան, «WV Վրաստանի» փորձագետ, Ուղեցույցի երեխաների պաշտպանության փորձագետ

Մայա Բագրատիոնի-Գրուզինսկի՝ ներառական կրթության խորհրդատու, նյարդահոգեբանության մագիստրոս, «WV Վրաստանի» խորհրդատու, սահմանափակ հնարավորությունների հարցերով փորձագետ

Խմբագիր՝ **Ճաբուկի Քիրիա**
Շապիկի ձևավորումը՝ **Նիկոլոզ Լոմիձե**
Դիզայնը՝ **Գվանցա Մախաթաձե**
Հայերեն թարգմանությունը՝ **Զոյա Մխիթարյանի**

World Vision Վրաստան
Թբիլիսի, 2020 թ

Սույն Ուղեցույցի վրացերեն տեքստի հայերեն թարգմանությունը պատրաստվել է World Vision Վրաստանի (WVG) կողմից, Վրաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողի գրասենյակի (RCO) աջակցությամբ։

«World Vision Վրաստանը» 20 տարի շարունակ հոգ է տանում երեխաների պաշտպանության համակարգերի հզորացման և հասարակության դերի ակտիվացման մասին՝ երեխաների բարեկեցության համար ներառական, հանդուրժող, արդար և հավասար միջավայր խթանելու նպատակով:

Այս նպատակին հասնելու համար կազմակերպությունն օգտագործում է համալիր մոտեցում, որը ներառում է ընտանիքի ամրապնդում, կրթական հաստատությունների աջակցություն և համայնքի ներգրավվածության մեծացում:

COVID-19-ի համավարակն առանձնահատուկ մարտահրավերների առջև կանգնեցրեց կրթական համակարգն ամբողջ աշխարհում: Վրաստանում առկա նախադպրոցական և հանրակրթական հաստատությունները ևս բացառություն չէին: Վտանգի առջև կանգնեցին ինչպես հաստատությունների պատշաճ գործունեությունը և ուսումնական գործընթացի հեռավար վարումը, այնպես էլ կրթության մատչելիությունը:

2020 թվականի նոր ուսումնական տարվանից պետության կողմից մշակված կանոնակարգերի և հանձնարարականների նախատեսման համար նախադպրոցական հաստատությունները լրացուցիչ աջակցության կարիք ունեն:

Այդ նպատակով **«World Vision Վրաստանի»** նախաձեռնությամբ կազմվեց տարբեր մասնագիտությունների փորձագետների խումբ ինչպես դպրոցական, այնպես էլ նախադպրոցական կրթության ուղղությամբ:

Միջառարկայական թիմի նպատակն էր Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Հիվանդությունների վերահսկման ու հանրային առողջության ազգային կենտրոնի հետ համագործակցությամբ ստեղծել գործնական ուղեցույց դպրոցների և նախադպրոցական հաստատությունների համար, որը կնպաստի կրթական գործընթացը վարելուն՝ համաձայն առողջապահական կանոնակարգերի:

Նշենք նաև, որ ուղեցույցի ստեղծման և կատարելագործման գործընթացում ներգրավված էին ինչպես գործող ղեկավարները, այնպես էլ ոլորտի մասնագետներ:

Համավարակի պայմաններում կրթական հաստատությունների գործունեությունը բավականին բարդ և փոփոխական գործընթաց է: Վրաստանում գործող դպրոցներն ու նախակրթական հաստատությունները տարբեր մարտահրավերների առջև են կանգնել:

Սույն փաստաթուղթը՝ «Մանկապարտեզները համավարակի ժամանակ: Գործնական ուղեցույց նախադպրոցական հաստատությունների համար», փորձնական տարբերակ է: Այն կատարելագործելու համար ընթացիկ կիսամյակում կհավաքվեն տվյալներ, գործնական աշխատողների արձագանքներ, որոնք հնարավորինս կարտացոլվեն ուղեցույցում, և դրանից հետո այն վերջնական տեսքի կբերվի:

Այստեղ ցանկանում ենք նաև համագործակցության և կոնկրետ հանձնարարականների համար շնորհակալություն հայտնել Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը և Հիվանդությունների վերահսկման ու հանրային առողջության ազգային կենտրոնին:

Հատկապես կարևոր էին այն արձագանքները և գործնական խորհուրդները, որոնք խորհրդատվական խմբի անդամները մեզ են տրամադրել Ուղեցույցի մշակման տարբեր փուլերում, ինչի համար խորապես շնորհակալ ենք:

World Vision Վրաստանը շնորհակալություն է հայտնում Վրաստանում ՄԱԿ-ի մշտական համակարգողիգրասենյակին (RCO)՝ սույն Ուղեցույցի թարգմանությանն աջակցելու համար:

Հուսով ենք, որ Ուղեցույցը զգալի աջակցություն կցուցաբերի հաստատություններին՝ համավարակի պայմաններում կրթական գործընթացը վերսկսելու և վարելու մեջ:

Ուղեցույցը կատարելագործելու նպատակով ուղարկե՛ք մեզ ձեր առաջարկությունները, մարտահրավերները, հարցերը էլ.փոստի միջոցով՝ tsira_barkaia@wvi.org կամ էլեկտրոնային նամակով մեզ ֆեյսբուքյան էջին՝ World Vision Georgia

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 6

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 7

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ 8

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ 10

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ 11

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԴՊՈՑՆԵՐՈՒՄ 18

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ 27

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ 29

ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ 33

ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ 35

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ 38

ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ Covid-19-ՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ 43

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ 52

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 72

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 81

Նախաբան

Սույն ուղեցույցը պատրաստվել է համավարակի շրջանում ուսումնական գործընթացն արդյունավետ վարելու հարցում դպրոցներին աջակցելու և նրանց՝ գործող կանոնակարգերին համապատասխան նպաստելու նպատակով:

Փաստաթուղթը հիմնված է հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

- Բոլոր կարգավորումները և փոփոխությունները, որոնք կնախաձեռնվեն կրթական համակարգում, հիմնվում են աշակերտների լավագույն շահերի վրա:
- Կրթության իրավունքի իրացումը կարևորագույն գերակայություններից է, և դրա ցանկացած սահմանափակում կարող է կատարվել միայն՝ ելնելով աշակերտների կյանքին և առողջությանն սպառնացող վտանգից բխող անհրաժեշտությունից:
- Վրաստանում գործող բոլոր հանրակրթական հաստատությունները եզակի են և տարբերվում են այլ հաստատություններից ժողովրդագրական, սոցիալական, մշակութային և այլ պարամետրերով: Ըստ այդմ, պետության և դպրոցների կողմից կայացված փոփոխություններն ու որոշումները պետք է հնարավորինս տարբերակված և հարմարեցված լինեն տվյալ հաստատության առանձնահատկություններին և կարիքներին:
- Աշակերտների կրթության իրավունքի իրացման մեջ ծայրահեղ կարևոր է դպրոցի և դպրոցական համայնքի դերը: Հետևաբար, դպրոցը և դպրոցական համայնքը բարձր պատասխանատվությամբ և ինքնավար ձևով պետք է հոգ տանեն ուսումնական գործընթացի արդյունավետ վարման մասին: Պետությունն իր հերթին պետք է խրախուսի և աջակցի անկախ նախաձեռնությունները:

Հաշվի առնելով, որ 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում ուսումնական գործընթացն ընթանում էր ֆորսմաժորային իրավիճակում, 2020-2021 ուսումնական տարվա հիմնական հանգրվաններից մեկը պետք է լինի նախորդ տարվա թերությունների վերացումը, ռիսկերի նվազեցումը և մարտահրավերներին արդյունավետ արձագանքումը:

Սույն փաստաթուղթը պարզապես ուսումնական գործընթացը սկսելուն նպաստող առաջարկությունների ամբողջություն չէ: Խորհուրդների մեծ մասը կարող է օգտագործվել ողջ ուսումնական տարվա ընթացքում:

Ներածություն

Ուղեցույցը նախատեսված է Վրաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների տնօրինության, վարչակազմի ներկայացուցիչների, ուսուցիչների, ծնողների, դպրոցական համայնքի այլ ներկայացուցիչների համար և նպատակ ունի աջակցելու աշակերտների համար ուսանման և ուսուցման արդյունավետ համակարգի ստեղծմանը:

Ուղեցույցը մշակվել է Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կողմից կազմված՝ նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) հարուցված վարակի հետ (COVID-19) կապված բոլոր հանձնարարականների նախատեսմամբ:

Փաստաթղթի ստեղծմանը, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցելով, մասնակցել են դպրոցների, քաղաքացիական հասարակության, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ և անկախ փորձագետներ: Ուղեցույցը հիմնված է 2020-2021 ուսումնական տարվա համար գոյություն ունեցած տեղական և միջազգային հետազոտությունների, գնահատումների և լավագույն փորձի վերլուծության վրա:

Ուղեցույցում նշված հարցերը երաշխավորական բնույթի են և դպրոցների կողմից դրանց ամբողջությամբ կամ մասամբ նախատեսումը կամավոր է: Դպրոցները կարող են ինքնուրույն մշակել և իրականացնել անկախ ռազմավարություններ կորոնավիրուսի համավարակի ընթացքում ուսուցումն արդյունավետորեն վարելու համար:

Հուսով ենք, որ սույն ուղեցույցը կօգնի դպրոցներին արդյունավետ կառավարել և համակարգել ուսուցման գործընթացը:

ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ

Նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) հարուցված վարակին (COVID-19) արձագանքման շրջանակներում 2020 թվականի մարտից մինչև ուսումնական տարվա ավարտը Կառավարության որոշմամբ փակվեցին ուսումնական հաստատությունները: Այս ամենը վիճակագրական առումով հետևյալ կերպ է արտահայտվում. փակվեց 1,621 նախադպրոցական հաստատություն և 2,312 դպրոց, ինչի հետևանքով դադարեց ուսումնառությունը 164,605 նախադպրոցական տարիքի և 590,034 դպրոցահասակ աշակերտների համար:

Չնայած պետության կողմից ձեռնարկված դրական քայլերին (ինչպիսիք են. հեռուստադպրոցի նախագծի իրականացումը, տարբեր կրթական ռեսուրսների ստեղծմանն աջակցելը, առցանց հավելվածների հասանելիության ավելացումը և այլն)՝ կրթական համակարգը բախվել է էական խնդիրների: Խնդիրներ առաջացան հասանելիության առումով ինչպես ինտերնետի, այնպես էլ համապատասխան սարքերի հետ կապված, բացի այդ՝ թվային իրավասությունների առումով. ինչպես ուսուցիչների, այնպես էլ աշակերտների և ծնողների մոտ: Ինչպես նաև, պարզ են դարձել հեռավար ուսուցման ուղղությամբ եղած մարտահրավերները: Այս առումով կարևոր հարց է համավարակի հետևանքով ստացած ծանր հոգեբանական հետևանքը, աշակերտների շրջանում սոցիալ-հուզական և ակադեմիական առաջադիմության հետ մնալը:

Նոր ուսումնական տարվա համար կարևոր է նախատեսել վերը նշված բոլոր մարտահրավերներն ու դպրոցների անհատական կարիքը և պատշաճ կերպով արձագանքել դրանց:

Համաձայն ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մշակված հանձնարարական փաստաթղթերի, կարևոր է, որ դպրոցներն ու որոշումներ կայացնող գերատեսչությունները դիտարկեն հետևյալ հիմնական խնդիրները՝

1. Անվտանգ աշխատանքային պայմաններ և առողջապահական կանոնակարգեր.
2. Ուսուցչի պատրաստակամություն, հոգեբանական և սոցիալ-հուզական վիճակ.
3. Ուսուցիչների և դպրոցի տնօրինության աշխատանքային իրավունքների նախատեսում.
4. Որակի կառավարման և արդյունավետ մշտադիտարկման համակարգի առկայություն:

Ամենակարևորը, այդ ոլորտները քննարկելու և դպրոցների արդյունավետ գործունեությունն ապահովելու համար անհրաժեշտ է նախատեսել պետության կողմից ֆինանսական միջոցներ ու լրացուցիչ ներդրումներ:

Այս խնդիրներից յուրաքանչյուրի վրա աշխատելու ժամանակ ծայրահեղորեն կարևոր է հասարակական երկխոսության ու հաղորդակցության առկայությունը: Հետևաբար, սա ամենակարևոր հանձնարարականն է որոշում կայացնողների և դպրոցների համար: Ավելի կոնկրետ, պլանավորման գործընթացում պետք է հաշվի առնվի բոլոր կողմերի (ուսուցիչների, ծնողների, կրթության մասնագետների, հասարակական, համայնքային և դոնոր կազմակերպությունների, խոցելի և մարգինալ խմբերի) ներգրավվածությունը:

Նկատի առնելով այս հանձնարարականները, միջազգային փորձը և տեղական համատեքստը՝ մշակված փաստաթուղթը կանդրադառնա հետևյալ հարցերին՝

- Դպրոցների նախապատրաստական փուլը մինչ ուսումնական գործընթացի մեկնարկը.
- Ուսուցման գործընթացի կազմակերպում.
- Դպրոցի անձնակազմի և ուսուցիչների աջակցության ռազմավարություններ.
- Ծնողների ներգրավում.
- Արտաքին հաղորդակցություն:

Ուղեցույցում ներկայացված են ներառական կրթության ընդհանուր հարցեր և ուսումնական գործընթացում հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների ինտեգրման հետ կապված թեմաներ:

ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈՒԼ

2020 թվականի օգոստոսի 14-ին Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կողմից հրապարակվեց «Նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) հարուցված վարակի (COVID-19) հետ կապված ընդհանուր հանձնարարականներ հանրակրթական հաստատությունների համար»: Հետևաբար, նախապատրաստական փուլում հատկապես կարևոր է տվյալ փաստաթղթի նախատեսումը: Փաստաթղթում տրված խորհուրդներն ու կանոնակարգերը ուղղակիորեն կապված են ուսանման ու ուսուցման խնդիրների հետ: Մասնավորապես, փաստաթուղթն անդրադառնում է հետևյալ ուղղություններին՝

- Դպրոցներում ուսումնական գործընթացի մեկնարկ-վերսկսում.
- Դպրոցի շենքի և բակի մաքրում-հիգիենա.
- Դպրոցական տարածքում տեղաշարժը.
- Ուսումնական գործընթացի կազմակերպում.
- Պարտադիր հեռավորությունը աշակերտների միջև դասապրոցեսի ժամանակ փակ և բաց տարածքներում.
- Դպրոցի ընդհանուր տարածքներում տեղաշարժվելու կանոնները.
- Հանձնարարականներ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների համար.
- Հանձնարարականներ՝ կապված սնվելու գործընթացին հետ.
- Հանձնարարականներ՝ կապված աշակերտների տրանսպորտային միջոցով փոխադրման հետ.
- Ուսումնական հաստատության գրադարան.
- Հանձնարարականներ՝ կապված գիշերօթիկ դպրոցների գործունեության հետ (շուրջօրյա ծառայություն).
- Լրացուցիչ հրահանգ՝ կապված սանհանգույցները մաքրելու հետ.
- Դպրոցի բժշկական անձնակազմի մասնակցությունը տարբեր միջոցառումների:

Բացի այդ, փաստաթղթում տրված են աշակերտների, ուսուցիչների և ծնողների պարտականությունները:

Սույն հանձնարարականների նախատեսման, ուսումնական գործընթացն արդյունավետ վարելու և դպրոցական գործընթացներում դպրոցական համայնքը ներգրավելու համար կարևոր է, որ դպրոցը պլանավորի և իրականացնի նախապատրաստական աշխատանքներ:

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

COVID 19-ի կանխարգելման համար յուրաքանչյուր հանրակրթական հաստատությունից պահանջվում է անցկացնել մի շարք միջոցառումներ, որոնք հիմնված են հանրային առողջության պահպանման խնդիրները կարգավորող համաշխարհային և տեղական հանձնարարականների վրա: Հանրակրթական հաստատություններում նախապատվությունը պետք է տրվի կանխարգելիչ միջոցառումներին, հետևելիության արդյունավետ մեխանիզմի ստեղծմանը և շփումների կրճատմանը:

Կարևոր է, որ հանրակրթական հաստատությունը գիտակցի այն պատասխանատվությունը, որ ունի աշակերտների և աշխատակիցների նկատմամբ: Յուրաքանչյուր աշխատողի պետք է մանրամասն տեղեկատվություն տրամադրվի COVID 19-ի համավարակի պայմաններում առկա մարտահրավերների, ցանկալի և անցանկալի վարքագծի, ներքին պրոտոկոլների, կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ: Հենց հանրակրթական հաստատության պատասխանատվությունն է որոշում որոշակի խմբի կամ հանրակրթական հաստատության կրթական գործընթացի իրականացման և կառավարման առօրյա ընթացքի պահպանման հարցը, քանի որ անձնակազմի կամ աշակերտի COVID 19-ով վարակվելու դեպքում կրթական գործընթացը շարունակելու, կասեցնելու կամ ձևափոխելու մասին որոշումը կայացվում է համաճարակաբանական հետազոտության հիման վրա: Ուսումնասիրվելու են և հաշվի առնվելու հանրակրթության տարածքում շփումները, շփումների ինտենսիվությունը, պաշտպանության միջոցների և առկա հանձնարարականների որակն ու այլ խնդիրներ: Ուստի կարևոր է նկատի առնել և գործնականում կիրառել այնպիսի գործողություններ, որոնք ապահովում են, որ յուրաքանչյուր խմբի հետ աշխատի միայն միևնույն թիմը: Պակաս լինի ուսուցիչների շարժունակությունը տարբեր խմբերում:

Կարևոր է, որ հանրակրթական հաստատությունը սահմանի այն պատասխանատուին, ով կհամակարգի հետևյալ հարցերը.

- Այցելուների (այցելու է ցանկացած անձ, որը մուտք է գործում հաստատություն) ջերմաչափում և օրենքով սահմանված փաստաթղթերի վարում համավարակի պայմաններում (Նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) հարուցված վարակի (COVID-19) հետ կապված ընդհանուր հանձնարարականներ հանրակրթական հաստատությունների համար: Հավելված № 37):
- Անձնական պաշտպանիչ միջոցների մատակարարում, այցելուների կողմից դրանց պատշաճ և ճիշտ օգտագործում:
- Աշխատակիցների կողմից անձնական պաշտպանիչ միջոցների օգտագործում:
- Աշխատակիցների միջև 1 մետրանոց հեռավորության ապահովում:
- Մակերեսների ախտահանման պրոտոկոլի պահպանում և մշտադիտարկում:
- Աշակերտների ընդունման/ճանապարհման գործընթացի պլանավորում, կառավարում և մշտադիտարկում:
- Բնական կամ արհեստական օդափոխության համակարգի արդյունավետ շահագործում:
- Անձնակազմի նախապատրաստում կարգավորող մարմինների կողմից տրված հանձնարարականները նախատեսելու և կանոնակարգերն իրականացնելու համար:
- Կարգավորող մարմինների կողմից տրված հանձնարարականների և կանոնակարգերի պահպանման ու վերահսկողության ապահովում (Նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) հարուցված վարակի (COVID-19) հետ կապված ընդհանուր հանձնարարականներ հանրակրթական հաստատությունների համար, Հավելված № 37),

մասնավորապես.

- Ապահովել հավաքման, մաքրման, ախտահանման, սննդի և ջրի սպառման պրոտոկոլների պահպանումն ու վերահսկումը:
- Խոհանոցի սանիտարահիգիենիկ վիճակը և սննդի հետ կապված խնդիրների կառավարում:
- COVID19-ի համավարակի պայմաններում գործող հանրակրթական հաստատությունների հետ կապված այլ հանձնարարականների և պահանջների իրականացում և մշտադիտարկում:

- Ծնողների իրազեկում COVID 19-ի համավարակի հետ կապված մարտահրավերների և հանրակրթական հաստատությունում իրականացված կամ/և պլանավորված գործառնական փոփոխությունների մասին:

Վերոնշյալ պարտականությունները կարող են վերաբաշխվել տարբեր պաշտոններում աշխատող անձնակազմի վրա:

Իրազեկում հանձնարարականներին հետևելու անհրաժեշտության և կարևորության մասին

Որպեսզի Հիվանդությունների վերահսկման կենտրոնի և դպրոցի կողմից մշակված հանձնարարականներն ավելի լավ պահպանվեն, կարևոր է, որ դպրոցական համայնքը քաջատեղյակ լինի դրանց անտեսման վտանգներից և իմանա, թե ինչու է անհրաժեշտ հետևել դրանց: Ուստի, լավ է, եթե դպրոցը տեղեկատվություն տարածելիս ուշադրություն դարձնի հետևյալ ուղղություններին.

- Աշակերտները Covid 19-ով վարակվելու հետևանքով հարուցված բարդությունների ցածր ռիսկ-խմբում են գտնվում, բայց նրանք կարող են դառնալ վարակը տեղափոխողներ: Հետևաբար, հանձնարարականների չպահպանումը կարող է վտանգ առաջացնել դպրոցի ղեկավարության, ուսուցիչների, նրանց ընտանիքների և այն անձանց համար, որոնց հետ աշակերտները անմիջական կապի մեջ են:
- Համավարակի պայմաններում հանձնարարականների պահպանման նկատմամբ մակերեսային վերաբերմունքը կարող է դառնալ ինչպես երկրի, այնպես էլ համաշխարհային մակարդակով վարակի տարածման և համաճարակաբանական իրավիճակը ծանրանալու պատճառ:
- Հանձնարարականների չպահպանումը կարող է հանգեցնել կարանտինի լրացուցիչ գոտիների առաջացման: Աշակերտի կամ դպրոցական համայնքի մեկ այլ անդամի հիվանդանալու դեպքում, կարող է ուսումնական գործընթացը դադարեցվել կոնկրետ դպրոցում կամ ամբողջ երկրի տարածքում, ինչը երկարաժամկետ հեռանկարում լրացուցիչ խնդիրներ կստեղծի ինչպես աշակերտների, ուսուցիչների և դպրոցի ղեկավարության, այնպես էլ նրանց ընտանիքների համար:
- Եթե աշակերտն ունի ջերմության կամ վարակի ախտանշաններ, նրան դպրոց ուղարկելն ավելի շատ տհաճություն կպատճառի ընտանիքին, քան տանը թողնելը: Հիվանդությունների վերահսկման կենտրոնի կողմից մշակված հանձնարարականների համաձայն, եթե աշակերտի մոտ արձանագրվում են ջերմության կամ քովիդ վարակի ախտանշաններ, ծնողը պարտավոր է ողջամիտ ժամկետում աշակերտին տանել դպրոցից: Հակառակ դեպքում կկանչվի 112-ը, և աշակերտը կտեղափոխվի տենդի կենտրոն կամ համապատասխան բժշկական հաստատություն: Աշակերտի մոտ դպրոցում ջերմություն կամ վարակի ախտանշաններ հայտնաբերելուց հետո, աշակերտի դպրոց վերադառնալու համար ծնողները ստիպված կլինեն զավակին ենթարկել պարտադիր PCR թեստավորման և արդյունքը դպրոց ներկայացնել:

Այց հանրակրթական հաստատություն

Հանրակրթական հաստատության տարածքում պետք է հնարավորինս սահմանափակել կողմնակի անձանց մուտքը: Աշակերտներին ընդունելն ու ճանապարհելը իրականացվում է հանրակրթական հաստատության մուտքի մոտ: Գործընթացին ներգրավված է հանրակրթական հաստատության ներկայացուցիչը, որը շփվում է ծնողի/օրինական ներկայացուցչի հետ և պարտավորություն է ստանձնում աշակերտին ընդունել/ճանապարհելու համար:

Անհրաժեշտության դեպքում, առաքող ընկերությունների ներկայացուցիչները շենք են մտնում միայն դիմակով: Բախիլներ հագնելը պարտադիր պահանջ է, եթե հանրակրթական հաստատությունը չունի ախտահանիչ արգելագորգիկ:

Բոլոր այցելուներն անցնում են ջերմադիտարկում՝ օգտագործելով անհպում ջերմաչափ: Եթե այցելուի մոտ արձանագրվում է ավելացած ջերմություն (37^{0}C կամ ավելի բարձր), նրան թույլ չի տրվում մտնել հանրակրթական հաստատության շենք: Հարկ է նշել, որ տարբեր պատճառներով ջերմության բարձրացումը կարող է ժամանակավորապես արտահայտվել, ուստի խորհուրդ է տրվում այն վերստուգել նաև 15-30 րոպե անց: Այցելուին պետք է տրվի հանգստանալու հնարավորություն և շենքի մուտքի մոտ պետք է ապահովված լինի համապատասխան տարածք:

Բոլոր անձինք շենք են մտնում անցնելով ախտահանիչ արգելագորգիկով, ջերմաչափվելուց և ձեռքի հիգիենա անցնելուց հետո: Շենքում բոլոր անձինք, բացառությամբ աշակերտի, շենք են մտնում դիմակով:

Եթե այցելուի մոտ ավելացած ջերմություն է արձանագրվում, և նրան թույլ չեն տալիս մուտք գործել հանրակրթական հաստատություն, նրան պետք է խորհուրդ տրվի չօգտվել հասարակական տրանսպորտից և դիմել ընտանեկան բժշկի կամ տենդի կենտրոն:

Եթե հատուկ հանգամանքների պատճառով կողմնակի անձի շենք մուտք գործելը պարտադիր է, նա պետք է ապահովվի դիմակով, դիմավահանով կամ պաշտպանության այլ միջոցներով՝ այցի նպատակի ու առանձնահատկությունների նախատեսմամբ:

Վարակների վերահսկման միջոցառումներ

Երաշխավորվում է, որ վարչակազմն աշխատակիցների համար ապահովի տեղեկատվական հանդիպումներ վարակների կանխարգելման հարցերի վերաբերյալ (ինչպիսիք են՝ ձեռքերի հիգիենան, հազի և փռշտալու հետ կապված վարվելակարգը, դիմակի օգտագործման կանոնները, վարակի փոխանցման ուղիները), ծանոթացնի կանխարգելիչ մեթոդները և առկա կանոնակարգերը: Կարևոր է ապահովել այս տեղեկատվական հանդիպումների շարունակականություն:

Ցանկալի է տեղեկատվական հանդիպումներ անցկացնել ծնողների, աշակերտների և այլ շահագրգիռ/ներգրավված կողմերի հետ:

Հանրակրթական հաստատություն (շենք) բոլոր այցելուները (ներառյալ աշակերտները) մտնում են միայն ջերմասքրինինգի և ձեռքերի հիգիենայի ընթացակարգեր անցնելուց հետո: Ձեռքերի ախտահանման համար նախատեսված հակասեպտիկ միջոցները պետք է լինեն 70%-անոց ալկոհոլային հիմքով, և դրանց դիսպենսերները պետք է տեղադրվեն հանրակրթական հաստատության շենքի մուտքի մոտ, ընդհանուր օգտագործման տարածքների մոտ (մեկուսանալու համար նախատեսված սենյակ, ճաշասենյակ և այլն) հասանելի լինեն բոլորի համար և պետք է կից տրված լինի ձեռքերի մշակման հրահանգ:

Ընդունարանի տարածքում և անձնակազմի հավաքման տեղերում պետք է տեղադրված լինեն տեղեկատվական պաստառներ COVID 19-ի հետ կապված կանխարգելիչ միջոցառումների մասին, սանհանգույցներում՝ ձեռքերը լվանալու և հակամանրէային միջոցների օգտագործման հրահանգ: Շենքի մուտքում առկա ախտահանիչ արհելագորգիկի մոտ պետք է տեղադրված լինի դրա օգտագործման հրահանգ: Պաստառները պետք է լինեն հնարավորինս ըմբռնելի և մատչելի բոլոր անձանց, այդ թվում՝ աշակերտների համար:

Պետք է նշել, որ հակասեպտիկ լուծույթով ձեռքի մշակումը չի հանդիսանում օճառով ձեռքերը լվանալու այլընտրանք: Ձեռքերի հակամանրէային միջոցներն օգտագործվում են այն դեպքում, երբ որոշակի պատճառներով անհնար է ձեռքերը լվանալ: Հետևաբար, լվացարանակոնքերը / սանհանգույցները և հակամանրէային միջոցների դիսպենսերները պետք է ողջամտորեն բաշխվեն շենքի տարածքներում:

Ձեռքերը լվանալու համար պետք է ապահովված լինի լվացարանակոնք, հոսող ջրի շարունակական մատակարարում, հեղուկ օճառ և մեկանգամյա անձեռոցիկներ: Անցանկալի է օգտագործել ձեռքի էլեկտրաչորացման սարքեր և չի թույլատրվում օգտագործել բազմանգամյա սրբիչներ: Լվացարանների մոտ պետք է փակցված լինի պաստառ. «Ձեռքերի լվացման քայլեր» (տեսանելի տեղում):

Սանհագույցների թաց կարգով մշակման և մաքրման համար հանրակրթական հաստատությունը պետք է մշակի պրոտոկոլ, որում նկարագրված կլինեն մաքրման պարբերականությունը, օգտագործված սանիտարահիգիենիկ միջոցների, լվացարանների, զուգարանների և այլ մակերեսների մշակման կանոնները: Կարևոր է, որ բոլոր մակերեսները տեսանելի աղտոտման առկայության դեպքում անմիջապես մաքրվեն, իսկ պարբերական մաքրումը երաշխավորվում է խմբերը փոխելու կամ դասամիջոցի ժամանակ (նմուշի տեսքով տե՛ս՝ Հավելված №1):

Հավաքարարն աշխատանքային գործընթացում օգտագործում է անհատական պաշտպանության հետևյալ միջոցները.

- բազմակի օգտագործման ձեռնոցներ,
- դիմավահան,
- անջրանցիկ մեկանգամյա խալաթ,
- բժշկական դիմակ,
- փակ կոշիկներ:

Աշակերտների և անձնակազմի մեկուսացման անհրաժեշտություն

Աշակերտները և անձնակազմը աշխատանքային օրվա ընթացքում կարող են զգալ ջերմության բարձրացում (37^{0}C և ավելի բարձր), որի ընթացքում անհրաժեշտ է նրանց մեկուսացնել հատուկ առանձնացված սենյակում: Աշակերտների մեկուսացման ժամանակ անպայման պետք է հաշվի առնվեն հոգեբանական- սոցիալական կարիքները:

Մեկուսացման սենյակն անպայման պետք է ունենա բնական կամ արհեստական օդափոխության համակարգ: Եթե սենյակում մեկից ավելի աշակերտ կա, ապա պետք է հնարավոր լինի նրանց միջև պահպանել 1 մետրանոց ֆիզիկական հեռավորություն, և եթե նկատվում են այնպիսի ախտանշաններ, ինչպիսիք են հազը և փռշտոցը, կարող են օգտագործվել տարանջատող պատնեշներ:

Մեկուսացման սենյակում պետք է լինի. աթոռ/բազկաթոռ/բազմոց, լվացարան, մեկանգամյա անձեռոցիկներ, հեղուկ օճառ և ձեռքերի մանրէազերծ միջոցներ:

Ջերմությունը չափելու համար օգտագործվում են անհպում ջերմաչափեր: Անհրաժեշտության դեպքում կարող են օգտագործվել սնդիկի ջերմաչափեր, սակայն այն հետո պետք է մաքրվի ախտահանող միջոցներով:

Բարձր ջերմության արձանագրման պես, հաստատության ներկայացուցիչը պետք է կապվի ծնողի հետ, տեղեկություններ տրամադրի աշակերտի առողջական վիճակի մասին, խնդրի նրան տանել աշակերտին հանրակրթական հաստատությունից և խորհուրդներ տա հետագա քայլերի վերաբերյալ, մասնավորապես.

- Ծնողը պետք է դիմի ընտանեկան բժշկի/տենդի կենտրոն:
- Ծնողը չպետք է օգտվի հասարակական տրանսպորտից:

Աշակերտին մեկուսացման սենյակից հանելիս պետք է գործենք ընդհանուր կանոնակարգերով և ցանկալի է, որ ծնողի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ աշակերտին ճանապարհենք առանց նրա՝ հաստատության շենք մուտք գործելու: Շտապ օգնության բրիգադ կարելի է կանչել միայն աշակերտի բժշկական կարիքի (բժշկական ցուցման) պատճառով: Շենքում նրանց տեղաշարժին խոչընդոտներ չպետք է լինեն: Կարևոր է, որ շտապ օգնություն կանչելու մասին տեղեկացվի ծնողը կամ նրա օրինական ներկայացուցիչը:

Չի թույլատրվում աշակերտին/աշակերտներին մենակ թողնել մեկուսացման սենյակում: Աշակերտը պետք է գտնվի պատասխանատու անձի հսկողության ներքո, ինչը պետք է ապահովի հանրակրթական հաստատությունը: Պատասխանատու անձը (գերադասելի է սա լինի անձ, որի հետ աշակերտը իրեն հարմարավետ է զգում տվյալ իրավիճակում) պետք է հագեցած լինի հետևյալ անհատական պաշտպանության միջոցներով.

- դիմակ,
- պաշտպանիչ դիմավահան,
- մեկանգամյա անջրանցիկ խալաթ:

Կարևոր է հիշել, որ աշակերտների մոտ ավելացած ջերմություն կարող է արձանագրվել նաև ֆիզիկական ակտիվության և հուզական ֆոնի պատճառով, ուստի ցանկալի է նրանց 15-30 րոպե հանգստանալու հնարավորություն տալ, ապա նորից չափել ջերմությունը: Եթե կրկնակի չափումից հետո աշակերտի մոտ չարձանագրվի 37^{0}C կամ ավելի բարձր ջերմություն, նա կարող է վերադառնալ ուսումնական միջավայր: Նույն կերպ ենք գործում, եթե ջերմություն է գրանցվում հանրակրթական հաստատության աշխատակիցների մոտ:

Աշակերտին մեկուսացման սենյակ տեղափոխելու դեպքում կարևոր է նկատի ունենալ, որ դասարանը չպետք է մնա առանց մեծահասակի հսկողության: Աշակերտին դասարանից դուրսբերումը պետք է տեղի ունենա հանգիստ միջավայրում, այնպես, որ դա որևէ աշակերտի համար սթրեսային չլինի, դասարանում պետք է պահպանել ուսումնական գործընթացը:

Հանրակրթական հաստատությունը պարտավոր է պահպանել բարձր ջերմություն (37^{0}C կամ ավելի բարձր) ունեցող աշակերտի և անձնակազմի ինքնության և նրա առողջական վիճակի մասին տեղեկատվության գաղտնիությունը: Հանրակրթական հաստատությունը պարտավոր չէ այլ աշակերտների ծնողներին/օրինական ներկայացուցիչներին տեղեկատվություն տրամադրել խմբում առկա ենթադրյալ դեպքի մասին: Կարևոր է, որ հաստատությունը նախապես տեղեկացնի դրա և պրոտոկոլի այլ կետերի մասին աշակերտների ծնողներին կամ օրինական ներկայացուցիչներին:

Ամենօրյա հաճախումով կրթական գործընթացը շարունակվում է այնքան ժամանակ, մինչև շնչառական համակարգի հիվանդության ախտանիշներով աշակերտի կամ անձնակազմի COVID 19-ի ախտորոշումը լաբորատոր եղանակով հաստատվի, իսկ դրանից հետո կրթական գործընթացը շարունակելու մասին

որոշումը կայացվում է համաճարակաբանական խմբի եզրակացության և հանձնարարականի հիման վրա:

Մեկուսացման սենյակում կարևոր է ստեղծել աշակերտակենտրոն, պաշտպանված և անվտանգ, առանց սթրեսի ֆիզիկական և սոցիալական միջավայր (այս առումով, հանձնարարականները տեսե՛ք ստորև տրված գլխում՝ «Բարեկեցությունը COVID 19-ով հարուցված համավարակի պայմաններում»):

Մեկուսացման սենյակը պետք է մշակվի խոնավ եղանակով և ախտահանվի այն ազատվելուն պես (տե՛ս՝ Հավելված 1. Մաքրման պրոտոկոլի նմուշ: Բոլոր հավելվածները վերջնական փաստաթղթում ներկայացված կլինեն վերջում՝ համապատասխան համարակալումով և ցուցումով):

Ընդհանուր հանձնարարականներ.

- Հանրակրթական հաստատությունում աշխատակիցները պետք է պահպանեն 1 մետրանոց հեռավորություն, այդ թվում, ընդհանուր օգտագործման տարածքներում (ինչպիսիք են, օրինակ՝ ճաշասենյակը կամ հանգստանալու սենյակը):
- Ընդհանուր օգտագործման տարածքներում (բակ, նախասրահ, ճաշասենյակ և այլն) գործողությունները պետք է իրականացվեն ըստ նախապես սահմանված ժամանակացույցի (աղյուսակի), - մեկ տարածքում աշակերտների և անձնակազմի քանակը առավելագույնս նվազագույնի հասցվի, այնպես, որպեսզի հնարավոր լինի պահպանել 1 մետրանոց հեռավորությունը: Վերոնշյալ հարցերի կազմակերպումը պետք է իրականացվի ըստ կարգավորողի տրամադրված հանձնարարականների (Նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) հարուցված համավարակի հետ (COVID-19) կապված ընդհանուր հանձնարարականներ հանրակրթական հաստատությունների համար: Հավելված №37):

Առողջապահության նախարարության կողմից մշակված կանոնակարգերը նախատեսելիս՝ չափազանց կարևոր է դպրոցական համայնքի ներգրավումը և իրազեկումը նոր կանոնակարգերի և փոփոխությունների մասին: Հետևաբար.

- Դպրոցը պետք է ապահովի, որ աշակերտները, ուսուցիչները, ծնողները և դպրոցի հետ կապված այլ անձինք տեղեկանան նոր կանոնակարգերի և փոփոխությունների մասին: Որպեսզի գործընթացն արդյունավետ լինի, դպրոցը պետք է որոշի թիրախային խմբեր, որոնց պետք է տրամադրվեն ինչպես ընդհանուր, այնպես էլ կոնկրետ այս խմբերի համար հատկացված տեղեկություններ (օրինակ ՝ տարրական դպրոցի աշակերտների ծնողներ, միջնակարգ դպրոցի աշակերտներ և այլն):
- Թիրախային խմբերի համար պետք է որոշվեն նրանց տեղեկատվություն տրամադրելու համար պատասխանատու անձինք և նրանց համակարգողը, որոնք պատասխանատու կլինեն գործընթացը պլանավորելու, վերահսկելու և աջակցելու համար: Փոքր քանակակազմով դպրոցներում տեղեկատվության տարածման գործընթացի համակարգողը կարող է լինել տնօրենը կամ փոխտնօրենը: Մեծ դպրոցներում կարող են լինել մի քանի համակարգողներ, որոնք հաշվետու կլինեն տնօրենին:
- Թիրախային խմբերին տեղեկատվության տրամադրման գործընթացում արդյունավետ կլինի նույն խմբի ակտիվ ներկայացուցիչների ներգրավումը (օրինակ՝ աշակերտների ինքնակառավարման, ծնողների և այլն):
- Տեղեկատվությունն արդյունավետորեն տարածելու համար դպրոցը, ելնելով սեփական առանձնահատկություններից, պետք է սահմանի տեղեկատվության տրամադրման մեկ կամ մի քանի աղբյուրներ (էլ. Փոստ, հեռավար հանդիպումների համար հարմար հարթակ և այլն):
- Տեղեկատվություն տարածելիս՝ դրա տարածման համար պատասխանատու անձը պետք է համոզվի, որ իր թիրախային խմբի բոլոր անդամները ծանոթ են տրամադրված տեղեկատվությանը (տեղեկատվություն ստանալու և ծանոթանալու հաստատում էլեկտրոնային փոստով և

հանդիպումների հաշվառում և այլն):

- Տեղեկատվության տարածումից հետո պետք է պլանավորվեն փոփոխությունների ներդրման գործողությունները: Նոր կանոնակարգերի ներդրման համար կարելի է մշակել համապատասխան խրախուսման և կարգապահական հարցերի ամբողջություն, ինչը պետք է նախապես տեղեկացվի դպրոցական համայնքին: Կարևոր է նախապատվությունը շնորհել ավելի խրախուսման և մոտիվացման ռազմավարություններին, քան պատժի կիրառման պրակտիկային (օրինակ՝ որոշվեն և պարգևատրվեն դասարաններ, որոնք առավելագույնս պահպանում են գործող կանոնակարգերը և այլն):
- Լրացուցիչ հարցերին պատասխանելու համար դպրոցական համայնքի բոլոր անդամները պետք է տեղյակ լինեն տեղեկատվության տրամադրման համար պատասխանատու անձի կոնտակտային տվյալներին:

ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆԸ ՄԻՏՎԱԾ ՄՈՏԵՑՈՒՄԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Այս գլխում կքննարկենք աշակերտների իրավունքները, որոնց նախատեսումը կարևոր է յուրաքանչյուրի համար, ով աշխատում է նրանց հետ: Անհրաժեշտ է առօրյա պրակտիկայում կիրառել դրա հիմնական սկզբունքները: Այստեղ վերլուծվում է դպրոցների դերը COVID-19-ի համավարակի ընթացքում աշակերտների իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

Աշակերտի իրավունքների պաշտպանությունը նոր մարտահրավերների առջև կանգնեց COVID-19-ի համավարակի պայմաններում, - դա անհրաժեշտ դարձրեց լրացուցիչ միջոցառումներ անցկացնել նրա առողջության և անձնական տվյալների պաշտպանության, կիբերանվտանգության ապահովման և կրթության իրավունքի իրացման ուղղությամբ: Այդ պատճառով կարևոր է, որ ընդհանուր կրթության ապահովումը հանրային առողջության ճգնաժամի պայմաններում հիմնված լինի աշակերտի իրավունքների պաշտպանության հեռանկարի վրա:

Աշակերտների իրավունքները բաժանվում են չորս հիմնական կատեգորիաների. կյանք, զարգացում, պաշտպանություն և մասնակցություն: Կյանքի իրավունքը նշանակում է, որ աշակերտին պետք է տրամադրվի համապատասխան որակյալ բժշկական ծառայություն, ջուր և հիգիենայի պահպանման միջոցներ: Պաշտպանություն նշանակում է պաշտպանել բոլոր աշակերտներին խտրականության և շահագործման ցանկացած ձևից, այդ թվում՝ պաշտպանել աշակերտների անվտանգությունը ցանկացած միջավայրում, օրինակ դպրոցներում: Դպրոցի ղեկավարությունը պարտավոր է COVID-19-ի համավարակի պայմաններում առավելագույնս օգտագործել իր ռեսուրսները՝ աշակերտի անվտանգությունը պաշտպանելու համար: Աշակերտներն իրավունք ունեն իրենց հասկանալի լեզվով տեղեկատվություն ստանալու այն երևույթների մասին, որոնք ազդում են իրենց վրա և վերաբերում են իրենց: Միևնույն ժամանակ, արտահայտել իրենց կարծիքը, որը պետք է հաշվի առնվի չափահասի կողմից որոշումներ կայացնելիս: Օրինակ, եթե աշակերտների մոտ հարց է առաջանում, թե ինչու պետք է հետևեն նոր կանոններին, ինչ է COVID-19-ը, նրանք իրենց տարիքին համապատասխան ձևով պետք է ստանան այս հարցի պատասխանը: Ինչ վերաբերում է չորրորդ կատեգորիային (աշակերտի զարգացման իրավունքին), այն իրականում վերաբերում է բոլոր մյուսներին և ներառում է. աշակերտին որակյալ ընդհանուր կրթության տրամադրում և համապատասխան պայմանների ստեղծում նրա ներուժի լիարժեք դրսևորման համար:

Դպրոցի դերը աշակերտի իրավունքների պաշտպանության ուղղությամբ

Աշակերտի իրավունքները պաշտպանելը նշանակում է ըմբռնել այն փաստը, որ նա կանգնած է բոլոր իրադարձությունների կենտրոնում: Դպրոցների այս պարտականություններն էլ ավելի հրատապ են COVID-19-ի համավարակի պայմաններում, երբ լրացուցիչ մարտահրավերներ են առաջացել աշակերտներին ընդհանուր կրթություն տրամադրելու և այս գործընթացում նրանց առողջության իրավունքը պաշտպանելու ուղղությամբ:

> Կարևոր է, որ դպրոցները հանրային առողջապահական ճգնաժամի պայմաններում ստեղծեն անվտանգ միջավայր, որպեսզի հնարավորինս կանխարգելվի COVID-19-ի տարածումը: Օրինակ՝ նկատի ունենան հանրային առողջության հարցերը կարգավորող բոլոր հանձնարարականները և աշակերտի համար ստեղծեն անվտանգ ֆիզիկական և սոցիալական միջավայր:

Եթե համավարակի պատճառով անհրաժեշտ դառնա հեռավար ծառայությունների տրամադրում, մատուցել որակյալ ծառայություններ և հնարավորինս փորձել հեռավար ծառայություններ մատուցել բոլոր աշակերտներին:

Հանրային առողջության ճգնաժամի պայմաններում երեխայի զարգացման իրավունքը, որը, ի թիվս այլ իրավունքների, ենթադրում է որակյալ և անհատական կարիքին հարմարեցված հանրային կրթության ստացում, բախվել է նոր դժվարությունների: Ուսումնական գործընթացի հեռավար ձևը առաջացրել է տանը աշակերտների համար համապատասխան միջավայր ստեղծելու անհրաժեշտություն: Որպեսզի հեռավար կրթության ժամանակ աշակերտի համար ստեղծվի իրեն կենտրոնացված միջավայր, նրան անհրաժեշտ է նախապես սահմանված և կայուն միջավայր, որպեսզի նրա համար օրվա ընթացքում ապահովվի առօրյա կյանքի, քնի, ուտելու, պարապելու և բակում ակտիվությունների հետևողական ժամանակացույց:

> Կանոնավոր և հետևողական ժամանակացույցը կօգնի աշակերտներին բարելավել քունը: Պատշաճ կերպով կառուցքավորումը աշակերտի համար ապահովում է կայունություն, բարելավվում է նրա վարքը և, ի վերջո, նրան առողջությունը:
>
> Նախապես սահմանված և կայուն միջավայրը կարևոր նախապայման է աշակերտներին հեռավար նախադպրոցական կրթություն ստանալու գործընթացի մեջ արդյունավետ ներգրավման համար: Առաջարկվում է, որ առցանց միացումներն իրականացվեն մեկ որոշակի նախապես սահմանված տեղից, որտեղ աշակերտին հնարավորություն կտրվի հանգիստ, առանց արտաքին անհարկի միջամտությունների մասնակցել առցանց գործողություններին:

Աշակերտակենտրոն միջավայր ստեղծելը հատկապես կարևոր է աշակերտին մեկուսացման սենյակ տեղափոխելու դեպքում: Այս ժամանակ անհրաժեշտ է, որ ամբողջ գործընթացը հիմնված լինի աշակերտի համար սթրեսը նվազագույնի հասցնելու վրա: Դրա համար կարևոր է ինչպես մեկուսացման սենյակի ֆիզիկական միջավայրը, այնպես էլ աշակերտի հետ շփումը, նրա համար պաշտպանված և անվտանգ միջավայրի ստեղծումը:

Ընդհանուր կրթություն տրամադրելիս անհրաժեշտ է նկատի առնել աշակերտների անհատական կարիքը, և միջավայրը լինի հնարավորինս ներառական: Այս պահանջը վերաբերում է ինչպես առկա, այնպես էլ հեռավար կրթական ձևաչափին: Օրինակ՝ սահմանափակ հնարավորություն ունեցող աշակերտների դեպքում պետք է տրամադրվեն լրացուցիչ մարդկային և ֆինանսական ռեսուրսներ, որպեսզի նրանք կարողանան ընդհանուր կրթություն ստանալ այլ աշակերտների հետ հավասար պայմաններում:

> Կարևոր է հիշել, որ սահմանափակ հնարավորություն և/կամ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների համար ոչ միայն կրթություն ստանալու մերժումն է խտրականություն, այլ նաև այն, որ մենք պատշաճ պայմաններ չենք ստեղծում նրանց կրթություն ստանալու համար:

Առողջության իրավունքի պաշտպանություն

Աշակերտին վերաբերող ցանկացած գործողություն իրականացնելիս՝ հիմնական ուշադրությունը կենտրոնանում է աշակերտի լավագույն շահերի պաշտպանության վրա: Չնայած նրան, որ աշակերտներն ընդհանուր առմամբ ունեն ընդհանուր ունիվերսալ կարիքներ, այդ կարիքների արտահայտումը կախված է անհատական, ֆիզիկական, սոցիալական և մշակութային ասպեկտներից, այդ թվում՝ նրանց զարգացման հնարավորությունից: Ուստի բոլոր աշակերտները պետք է ապահովված

լինեն այնպիսի պաշտպանությամբ և հոգատարությամբ, որն անհրաժեշտ է նրանց բարեկեցության համար:

Աշակերտի լավագույն շահերի մասին խոսելիս պետք է նկատի ունենալ ինչպես անհատական աշակերտի լավագույն շահը, այնպես էլ աշակերտների՝ որպես խմբի: Կոնկրետ աշակերտի լավագույն շահը ենթադրում է, որ ցանկացած որոշում, որը կապված է աշակերտի մասին հոգածության, նրա առողջության և կրթության իրավունքի պաշտպանության հետ, հիմնվի նրա լավագույն շահի վրա, այդ թվում ծնողի և այլ արհեստավարժների որոշումների վրա: Ինչ վերաբերում է աշակերտների խմբի լավագույն շահին, այս դեպքում հանրային կրթություն իրականացնողները ցանկացած որոշում այնպես պետք է կայացնեն, որ հաշվի առնեն ինչպես անհատական, այնպես էլ բոլոր աշակերտների լավագույն շահերը, գնահատեն, թե ինչ ազդեցություն կունենա այս որոշումը ինչպես մեկ աշակերտի, այնպես էլ՝ ամբողջությամբ հանրակրթական հաստատության աշակերտների վրա:

Աշակերտի առողջության իրավունքի պաշտպանությունը աշակերտի լավագույն շահերը գնահատելու կենտրոնական խնդիրներից մեկն է: Առողջության իրավունքի մեջ ենթադրվում է ինչպես աշակերտի ֆիզիկական, այնպես էլ հոգեկան առողջությունը: Առողջության իրավունքի պաշտպանության ժամանակ պետք է նախատեսվեն այն ռիսկերն ու կողմնակի երևույթները, որոնք կարող են վնասել ինչպես մեկ կոնկրետ աշակերտի առողջությանը, այնպես էլ աշակերտների խմբի առողջությանը:

COVID-19-ի համավարակի պայմաններում հատկապես կարևոր է, որ հանրակրթական հաստատության ցանկացած որոշում հիմնվի ճիշտ աշակերտի լավագույն շահերի պաշտպանության, նրա առողջության պահպանման կարիքի նախատեսման և վիրուսի տարածումը կանխելու վրա:

Հանրային առողջության ճգնաժամի պայմաններում կրթական գործընթացը հեռավար կարգով տրամադրելու անհրաժեշտության հետ մեկտեղ նոր մարտահրավերներ են առաջացել երեխաների առողջության իրավունքը պաշտպանելու ուղղությամբ: Մասնավորապես, աշակերտների և դեռահասների զարգացման և նրանց կրթության իրավունքի պաշտպանության ուղղությամբ էլ ավելի արդիական է դարձել համակարգչային և հեռուստակրթական ծրագրերի օգտագործումը: Ճիշտ է, տեղեկատվության փոխանակման նշված միջոցները օգնում են աշակերտին զարգացնել տարբեր հմտություններ ու կարողություններ, բայց համակարգչի և հեռուստացույցի էկրանի առջև շատ ժամանակ անցկացնելն ունի իր բացասական ազդեցությունը նրա հուզական զարգացման, ֆիզիկական և մտավոր առողջության առումով (օրինակ՝ տեսողության խնդիրներ, վարքային խանգարումներ, անքնություն, քաշի ավելացում և այլն): Ահա թե ինչու առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել աշակերտների կողմից համակարգիչների օգտագործման և հեռուստացույցի էկրանի առջև անցկացրած ժամանակի կարգավորմանը: Այս հարցն էլ ավելի կարևոր դարձավ COVID-19-ի համավարակի պայմաններում, երբ աշակերտները հեռավար ձևով են կարողանում ստանալ ընդհանուր կրթություն և շփվել մանկավարժների հետ:

Կարևոր է, որ էլեկտրոնային համաժամանակյա ձևով հեռավար ուսուցման ընթացքում տարրական դասարաններում դասերի տևողությունը չգերազանցի 15-20 րոպեն, հիմնական աստիճանում՝ 25-30 րոպեն, իսկ միջնակարգ աստիճանում՝ 35-40 րոպեն: Դասերի միջև անհրաժեշտ է կատարել 10-15 րոպեանոց ընդմիջումներ, որոնց ընթացքում աշակերտը ժամանակը չի անցկացնի էկրանի մոտ: Առաջարկվում է, որ դասերը ներառեն տարբեր ինտերակտիվ մեթոդներ: Պարբերաբար կարող են անցկացվել աչքերի վարժություններ, օրինակ՝ հայացքը էկրանից տեղափոխել հեռու գտնվող առարկայի վրա, 5-6 անգամ թարթել աչքերը:

11 տարեկանից ցածր աշակերտների ծնողները հեռավար դասաժամերին գերադասելի է լինեն պասիվ դիտարկող անձանց դերում: Սա կօգնի աշակերտներին ավելի կենտրոնանալ դասի բովանդակության

վրա: Կարևոր է, որ էկրանի մոտ աշխատելու ընթացքում սենյակը լավ լուսավորված լինի, և աշակերտը նստած լինի գրասեղանի մոտ:

Աշակերտի անձնական տվյալների պաշտպանությունը և անվտանգությունը

Յուրաքանչյուր ոք ունի անձնական կյանքի անձեռնմխելիության իրավունք, այդ թվում նաև աշակերտները: Դպրոցն այն վայրն է, որտեղ աշակերտն անցկացնում է օրվա մեծ մասը, և նրա մասին շատ տվյալներ են պահվում: Դպրոցը պարտավոր է պաշտպանել աշակերտի անձնական տվյալները և գործել՝ ելնելով աշակերտի լավագույն շահերից, ինչը բոլոր դեպքերում նշանակում է աշակերտի շահերը այլ անձանց / կազմակերպությունների շահերից վեր դասել: Միևնույն ժամանակ, աշակերտի լավագույն շահերը պետք է գնահատվեն յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհատապես՝ հաշվի առնելով այնպիսի հանգամանքներ, ինչպիսիք են աշակերտի հայացքներն ու նկրտումները, տարիքը, անձնական պատմությունը, անվտանգությունը, ընտանեկան միջավայրը, բարեկեցությունը, հասակակիցների և մեծահասակների հետ հարաբերությունները և այլն:

COVID 19-ի համավարակի պայմաններում աշակերտներին կրթություն տրամադրելու նպատակով օրակարգ է բերվել առցանց ուսուցման օգտագործման անհրաժեշտությունը, ինչը լրացուցիչ մարտահրավերներ է առաջացրել՝ կապված աշակերտների անհատական տեղեկությունների և անվտանգության պաշտպանության հետ:

Աշակերտը, որպես տվյալների սուբյեկտ, իրավունք ունի, որ իր անձնական տվյալները մշակվեն օրինական, արդար և առանց արժանապատվության ոտնահարման: Նա իրավունք ունի իմանալու, թե ով և ինչ տեսակի տվյալներ է մշակում իր մասին, ինչ նպատակով և ինչ հիմքով:

Ի՞նչ են անձնական տվյալները:

Անձնական տվյալները ցանկացած տեսակի տեղեկատվությունն է, որը կարող է օգտագործվել աշակերտին նույնականացնելու համար (օրինակ՝ անունը, ազգանունը, անձնական համարը, լուսանկարը և տեսագրությունը, սոցիալական ցանցի հաշիվը, անձնական նամակագրությունը, որ դպրոցում և դասարանում է սովորում, տեղեկություններ նրա հետաքրքրությունների, առողջական վիճակի և այլնի մասին):

Ի՞նչ են առանձնահատուկ կարգի անձնական տվյալները:

Գոյություն ունեն նաև առանձնահատուկ կարգի տվյալներ: Սա նշանակում է, որ դրանց պաշտպանության համար սահմանվում է բացառապես բարձր չափորոշիչ, քանի որ այդպիսի տվյալների բացահայտման դեպքում աշակերտին հասցված վնասի չափն ավելի մեծ է: Այս կատեգորիան ներառում է տեղեկություններ՝ կապված աշակերտի ռասայական կամ էթնիկական ծագման, առողջական վիճակի, վարչական կալանքի, խափանման միջոց սահմանելու հետ, ընթացակարգային համաձայնագրի կնքման, հանցանքի օբյեկտից մեկուսացնելու, հանցագործության զոհ ճանաչելու, տուժած ճանաչելու հետ և այլն:

Ինչպե՞ս պետք է պաշտպանենք աշակերտի առողջական վիճակի մասին տեղեկությունները:

Առողջությունը մեզանից յուրաքանչյուրի համար առանձնահատուկ արժեք է, և դրա վերաբերյալ տեղեկատվությունը պատկանում է տվյալների հատուկ կարգի: Սրա պատճառն այն է, որ մեր առողջության վերաբերյալ տվյալները (ներառյալ ախտորոշումը, բժշկական պատմությունը, դեղատոմսը կամ բուժման պլանը) կարող են պարունակել բավականին ծավալուն և զգայուն տեղեկություններ մեր անձնական կյանքի մասին, իսկ դրանց բացահայտմամբ կարող է լուրջ վնաս հասցվել մեզ: Միայն մեր համաձայնությամբ կարող է այն փոխանցվել երրորդ կողմի, թեպետ, դա պետք է արտահայտվի գրավոր:

Անձնական տվյալների մշակումն էլ ավելի խնդրահարույց է դառնում հանրային առողջության ճգնաժամի պայմաններում: Մենք բոլորս իրավունք ունենք տեղեկություններ ստանալու վիրուսի տարածման վտանգների և այլ կանխարգելիչ միջոցառումների մասին: Սակայն, ոչ պակաս կարևոր է յուրաքանչյուր անձի իրավունքների, այդ թվում անձնական տվյալների պաշտպանությունը: Ահա թե ինչու, եթե դպրոցում աշակերտի ջերմությունը բարձրանա (37^0 և ավելի), անհրաժեշտ է պահպանել գաղտնիությունը և չհրապարակել այդ տեղեկատվությունը:

Կարևոր է հիշել, որ պարտադիր չէ աշակերտի անունն ու ազգանունը նշելը, բավական է այնպիսի տեղեկատվության տարածումը, որը տալիս է անձի նույնականացման հնարավորություն:

Ինչպե՞ս պաշտպանել աշակերտի անձնական տվյալները կրթական գործընթացը հեռավար վարելիս:

COVID 19-ի համավարակի ընթացքում դպրոցներն անցան հեռավար ուսուցման: Առցանց կրթական գործընթացներին զուգահեռ սոցիալական ցանցերում տարածվում էին առցանց ուսուցումն արտացոլող լուսանկաչական նյութեր և տեսանյութեր:

Առցանց ուսուցում արտացոլող նյութերը (լուսանկարներ, տեսապատկեր) աշակերտի անձնական տվյալներն են, ինչը պետք է հաշվի առնել դրանք հանրայնացնելիս, քանի որ համացանցում հասանելի ձևով այդ տվյալները հրապարակելը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա վրա (դառնա բուլիինգի կամ այլ վատ վերաբերմունքի օբյեկտ):

Հետևաբար, դպրոցները, այդ հաստատություններում աշխատող անձինք, ինչպես նաև ծնողներն ու ընտանիքի անդամները պետք է ավելի մեծ պատասխանատվությամբ մոտենան աշակերտի տվյալների հանրայնացմանը և գործեն աշակերտի լավագույն շահերի նախատեսմամբ:

Ի՞նչ պարտականություններ ունի դպրոցն աշակերտի անձնական տվյալների պաշտպանության ուղղությամբ:

- Աշակերտի անձնական տվյալների վերաբերյալ տեղեկությունները չբացահայտել այլ անձանց:
- Ուղղել ոչ ճիշտ տվյալները և ոչնչացնել անհիմն հավաքած տվյալները: Օրինակ ՝ սոցիալական ցանցում լուսանկարներ և տեսանյութեր:
- Ջնջել աշակերտի անձնական տվյալներ պարունակող տեղեկատվությունը ծնողի և/կամ աշակերտի պահանջով (օրինակ՝ եթե ծնողը կամ/և աշակերտը թույլ է տվել նախադպրոցական հաստատության կայքում/սոցիալական ցանցում տեղադրել լուսանկարը, և այնուհետև մտափոխվել է: Նա իրավունք ունի պահանջել ջնջել նշված լուսանկարը առանց որևէ բացատրության պահանջելու):

- Պաշտպանել աշակերտի անձնական տվյալների անվտանգությունը:
- Վերահսկել շենք այցելուների մուտքն ու ելքը, ինչպես նաև գրանցել նրանց անունը և ազգանունը, նույնականացման փաստաթղթի համարը և տեսակը, հասցեն, մուտքի և ելքի ամսաթվերը և ժամանակը, ինչպես նաև շենք մուտք գործելու և դուրս գալու պատճառները:

Ինչպե՞ս պաշտպանել աշակերտի անվտանգությունը ինտերնետից օգտվելիս:

Չնայած նրան, որ ինտերնետ տարածքի օգտագործումն ունի իր դրական կողմերը, այն աշակերտների համար պարունակում է էական վտանգներ (օրինակ՝ վիրուսի ներբեռնում, անպատշաճ բովանդակության նյութի դիտում, անձնական տեղեկատվության արտահոսք, սեռական ոտնձգություն / հետապնդում, կիբերբուլիինգ և այլն): Ինտերնետում անտեղյակ ու անխոհեմ գործողությունները կարող են վտանգել աշակերտի անձնական կյանքի անձեռնմխելիությունը: Առցանց ուսուցման ընթացքում աշակերտներն էլ ավելի շատ ժամանակ են անցկացնում առցանց տարածքում և, համապատասխանաբար, մեծանում է կիբերանվտանգության կարևորությունը: Այդ պատճառով կարևոր է աշակերտներին իրազեկել ինտերնետի անվտանգ օգտագործման մասին:

- Բացատրե՛ք աշակերտներին, թե ինչ են անձնական տվյալները և ասե՛ք նրանց, որ ինտերնետում չպետք է տեղակայեն այնպիսի տվյալներ, ինչպիսիք են տան հասցեն, հեռախոսահամարը, գաղտնաբառը և այլն:
- Բացատրե՛ք նրանց, որ ցանցում անծանոթ մարդկանց հետ շփումը վտանգավոր է (անծանոթները կարող են ստել և թաքցնել իրենց իրական տարիքը, ինքնությունը):
- Բացատրե՛ք աշակերտին, որ չի թույլատրվում անծանոթ մարդկանց հանդիպել ինտերնետից դուրս, առանց ձեր համաձայնության և վերահսկողության:
- Հասկացրե՛ք աշակերտներին, որ չբացեն անծանոթ մարդկանցից ստացած էլեկտրոնային նամակներ և հղումներ, քանի որ դրանք կարող են վիրուս պարունակել:
- Աշակերտներին զգուշացրե՛ք, որ ուրիշի էլեկտրոնային սարքն օգտագործելիս չպետք է ընտրեն օգտատիրոջ/գաղտնաբառի «հիշի՛ր» դաշտը (remember me/remember password) և ծրագրից / ցանցից պետք է դուրս գան (log out) օգտագործումն ավարտելուն պես:

COVID 19-ի համավարակի ժամանակ աշակերտներն էլ ավելի շատ ժամանակ են անցկացնում առցանց, ինչը կարող է մեծացնել կիբերբուլիինգի շատ տարածվելու ռիսկը: Բուլիինգը մեկ աշակերտի կամ աշակերտների խմբի կողմից մեկ այլ աշակերտի նկատմամբ անցանկալի, ագրեսիվ վարքի ձև է: Այն ներառում է ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական վնաս հասցնող կրկնվող վարքեր: Կիբերբուլիինգը կարող է նաև համարվել սոցիալական բուլիինգի մի ձև, որը ներառում է չարամիտ տեքստերի կամ լուսանկարների հրապարակում համացանցի միջոցով: Ուստի խորհուրդ է տրվում էլ ավելի մեծ ուշադրություն դարձնել սոցիալական ցանցում աշակերտների պահվածքին, որպեսզի ձեր աչքից չվրիպի աշակերտների անցանկալի, ագրեսիվ պահվածքը միմյանց նկատմամբ:

Աշակերտի իրազեկվածությունը և ներգրավվածությունը որոշումների կայացման գործընթացի մեջ

Աշակերտի կարծիքի ունկնդրումը և որոշումների կայացման գործընթացի մեջ ներգրավվածությունը այն թեմաների վերաբերյալ, որոնք նրան են վերաբերում, երեխաների իրավունքների կարևորագույն սկզբունքներից մեկն է: Այս սկզբունքը պետք է նկատի առնվի ցանկացած իրավունքի իրականացման ընթացքում, հատկապես առողջության և կրթության իրավունքների պաշտպանության գործում: Աշակերտի կարծիքը լսելը միաժամանակ նախատեսում է նրան տեղեկատվություն տրամադրում նրա համար հասկանալի եղանակով:

Ինչպե՞ս աջակցել աշակերտին՝ արտահայտելու իր կարծիքը:

- Մենք միշտ պետք է ցույց տանք նրան, որ մեզ հետաքրքրում է նրա կարծիքը, և ուշադիր լսենք նրան:
- Նրա համար ստեղծենք այնպիսի միջավայր, որտեղ իրեն հարմարավետ է զգում կամ սիրում է լինել:
- Նախքան աշակերտին խնդրենք արտահայտել իր կարծիքը, պետք է բացատրենք, թե ինչու ենք հարցնում այս տեղեկատվությունը և ինչի համար է դա մեզ անհրաժեշտ:
- Խոսելիս անընդհատ պետք է զգացնել տանք, որ հարգում ենք նրան:

Հիշենք, որ որոշ աշակերտներ (օրինակ՝ հատուկ կրթական կարիք ունեցող) հնարավոր է դժվարանան բանավոր հաղորդակցվելիս, այսինքն՝ սեփական կարծիքներն արտահատել բանավոր հաղորդակցության ձևով, այսինքն՝ բառերով, և առավելությունը այլ՝ այլընտրանքային ձևերին շնորհել (օրինակ ՝ խաղ, մարմնի շարժում, նկարչություն և ծեփակերպում):

Աշակերտի իրազեկման և նրա կարծիքը լսելու իրավունքը COVID 19-ի համավարակի պայմաններում լրացուցիչ նշանակություն է ստացել: Նրանք պետք է ներգրավված լինեն իրենց առողջության և բարեկեցության հետ կապված հարցերի որոշմանը (օրինակ, ինչպիսի բուժում պետք է ստանան, ինչ ազդեցություն և հետևանքներ կունենա այն, այդ թվում, սահմանափակ հնարավորություն ունեցող աշակերտները):

Դպրոցահասակ աշակերտներն ավելի շատ հարցեր ունեն: Ձեր բացատրությունը պետք է լինի պարզ և փաստերի վրա հիմնված:

- Օգտագործե՛ք հանգիստ տոն, լսե՛ք նրանց վախերը, հարցերին պատասխանե՛ք փաստերով և ոչ հորինված պատմություններով:
- Արտահայտե՛ք, որ հասկանում եք նրանց զգացմունքներն ու մտահոգությունները.
- Նշե՛ք, որ այն մարդիկ, ովքեր նրանց մասին հոգ են տանում, հոգ կտանեն իրենց անվտանգության մասին:
- Հետաքրքրվե՛ք նրանց գաղափարներով և հմտություններով:
- Սկսե՛ք այնպիսի զգայուն թեմաներ ծանոթացնել, ինչպիսիք են զայրույթը, բռնությունը, սահմանափակ հնարավորությունը, առանձնահատուկ շեշտադրումն արե՛ք համավարակային թեմաների վրա:
- Մոդելավորե՛ք այնպիսի սոցիալամետ ակտիվություններ, ինչպիսիք են բարությունն ու հոգատարությունը:
- Առաջարկե՛ք աշակերտակենտրոն պատմություններ և հերոսներ:

I-VI դասարանների դեպքում աշակերտների հարցերին պատասխանը պետք է լինի պարզ և հիմնվի փաստերի վրա: Կարող եք օգտագործել ստորև տրված պատասխանները, որպեսզի հեշտ և հասկանալի եղանակով նրանց տրամադրեք (տարիքը՝ 6-11 տարեկան) տեղեկատվությունը COVID-19-ի համավարակի հետ կապված թեմաների մասին:

Ի՞նչ է կորոնավիրուսը:

Կորոնավիրուսը նոր տեսակի մանրէ է, որը տարածվում է ամբողջ աշխարհում: Վիրուսով վարակվելու դեպքում մարդ ունենում է մրսածության ախտանշաններ: Մարդիկ, որոնք վարակվում են վիրուսով, հազում են, փռշտում, հնարավոր է ջերմություն ունենան և դժվարաշնչություն: Հազալու կամ փռշտալու ժամանակ վիրուսը հայտնվում է օդում և վարակում մարդկանց:

Ես կհիվանդանա՞մ:

Բոլոր մարդիկ երբեմն հիվանդանում են, բայց աշակերտների մեծ մասը ուժեղ չի հիվանդանում կորոնավիրուսով: Եթե հիվանդանաս, կունենաս այնպիսի զգացողություն, կարծես մրսածություն ունես: Այդ ժամանակ հատկապես զգույշ պետք է լինես, որպեսզի պաշտպանես այլ մարդկանց: Առողջ սնունդը և ըմպելիքը, երկար քնելը կօգնեն քեզ առողջացման հարցում:

Ինչո՞ւ չեմ կարող այցելել իմ տատիկին և պապիկին:

Տարեց մարդիկ և այն մարդիկ, որոնք ուրիշ հիվանդություններ ունեն, ավելի շուտ կարող են հիվանդանալ: Ուստի, մենք ամեն ինչ անում ենք, որպեսզի նրանց առողջությանը վտանգ չստեղծվի:

Ինչո՞ւ են մարդիկ դիմակ կրում:

Դիմակը դադարեցնում է վիրուսի տարածումը: Նրա միջով մտնում և դուրս է գալիս օդը, բայց ոչ՝ մանրէները: Դիմակ կրելը հեշտ չէ, բայց սա միջոց է, որպեսզի կանգնեցնենք վարակի տարածումը:

12-18 տարեկան աշակերտների (VII-XII դասարան) դեպքում կարող եք օգտագործել ստորև տրված պատասխանները, որպեսզի պարզ և հասկանալի ձևով նրանց տրամադրեք (տարիքը՝ 6-11) տեղեկատվություն՝ COVID-19-ի համավարակի հետ կապված թեմաների մասին.

Ի՞նչ է կորոնավիրուսը:

2019 թվականի վերջին հայտնվեց կորոնավիրուսի նոր տեսակ, որը բնութագրվում է գրիպի ախտանշաններով: Հիվանդությունը կոչվում է կորոնավիրուս-19: Դա կորոնավիրուսների ընտանիքից է, ունի պսակի ձև: Կորոնավիրուսը կարող է առաջացնել հազ, դժվարաշնչություն, փռշտոց: Ախտանշաններն այնպիսին են, կարծես մարդը մրսածություն կամ գրիպ ունի: Հիվանդությունն ավելի բարդ է ընթանում այն դեպքում, երբ անձն ընդհանրապես առողջական խնդիրներ ունի: Բայց մարդկանց մեծ մասը, հատկապես աշակերտները, կարող են ընդհանրապես չզգալ հիվանդությունը կամ շատ թույլ ախտանշաններ ունենալ:

Ինչպե՞ս են մարդիկ հիվանդանում կորոնավիրուսով:

Կորոնավիրուսը փոխանցվում է մարդուց մարդուն: Դու կարող ես վարակվել օդում վիրուսի հայտնվելով, երբ մեկ այլ անձ հազում է, խոսում կամ փռշտում: Հնարավոր է վարակվես նաև՝ հպվելով այնպիսի մակերեսների, որոնց վրա վիրուս կա, և այնուհետև դիպչես բերանիդ, քթիդ կամ աչքերիդ:

Ինչպե՞ս պաշտպանվենք վարակվելուց:

Մենք կարող ենք պաշտպանել ինքներս մեզ և ուրիշներին, եթե պահպանենք մարդկանցից հեռավորություն, հաճախակի լվանանք ձեռքերը և խուսափենք ձեռքով բերանին, քթին և աչքերին դիպչելուց: Որոշ մարդիկ կարող են վարակվել, բայց չունենալ ախտանշաններ: Չնայած դրան՝ հնարավոր է, որ նրանք ուրիշներին վարակեն վիրուսով:

Աշակերտի պաշտպանությունը բռնությունից

Աշակերտի նկատմամբ բռնություն է համարվում ցանկացած գործողություն, դաստիարակության բռնություն պարունակող ձև, որը սպառնում է նրա զարգացմանը, ֆիզիկական և հոգեկան բարեկեցությանը: Բռնությունը աշակերտի իրավունքների ոտնահարում է: Այս ժամանակ նշանակություն չունի գործողությունն իրականացվում է դիտավորյալ, թե՝ ոչ դիտավորյալ: Ելակետը այն վնասակար ազդեցությունն է, որն աշակերտն ունենում է բռնության հետևանքով:

Հանրային առողջության ճգնաժամի պայմաններում, ի թիվս այլ մարտահրավերների, մեծանում է նաև աշակերտների նկատմամբ բռնության ռիսկը, որն անմիջականորեն կապված է նման ճգնաժամերի հետևանքով առաջացած սոցիալական, տնտեսական և հուզական մարտահրավերների հետ: Ուստի հատուկ ուշադրություն պետք է դարձնել աշակերտի խնամքի մեջ ներգրավված անձանց կողմից բռնության նշանների հայտնաբերմանը և համապատասխան պատասխանատու մարմիններին այդպիսի դեպքերի հաղորդմանը:

Բռնության նշանների դիտարկումը և որոշումը պետք է իրականացվի ինչպես առկա ծառայությունների մատուցման, այնպես էլ հիբրիդային կամ հեռավար ծառայությունների մատուցման գործընթացում: Ուսուցիչները պետք է ուշադրությունը կենտրոնացնեն բռնության այնպիսի նշանների վրա, որոնք հնարավոր է տեսնել և լսելով հասկանալ: Օրինակ՝ ուսուցչի ներկայությամբ ծնողը հոգեբանորեն բռնության է ենթարկում աշակերտին, բղավում նրա վրա, ցնցում նրան, կմշտում, սպառնում մարմնական պատժով, անարգանք հասցնում, հարվածում նրան և այլն:

ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԴՊՐՈՑՆԵՐՈՒՄ

Աշխարհում անցումը հեռավար ուսուցման հիբրիդային մոդելին մինչև համավարակի սկիզբն էլ տեղի էր ունենում փուլերով: Հետևաբար, այս մոդելը նորություն չէր: Այս պարագայում դժվարությունը ժամանակի գործոնն էր, որի ընթացքում դպրոցական համակարգը ստիպված եղավ վերադասավորվել, իսկ հեռավար կրթությունը պահանջում է համակարգված նախապատրաստում և աստիճանական անցում կրթության այդ եղանակին:

Ինչպես հայտնի է, 2019-2020 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակը Վրաստանում ևս այնպիսի էական թերություններով ընթացավ, ինչպիսիք են աշակերտների ներգրավվածության և հեռավար ուսուցման ցածր որակը: Այս հանգամանքները աշակերտների համար ստեղծեցին տարբեր տիպի խնդիրներ՝ինչպես ուսանման ու ուսուցման, այնպես էլ հոգեբանական և սոցիալ-հուզական առումով: Որպեսզի աշակերտները լիովին ներգրավվեն սովորելու սովորական ռեժիմի մեջ, կարևոր է արդյունավետորեն պլանավորել ուսուցման գործընթացը (տե՛ս՝ Ուսուցման կազմակերպման տարբեր տարբերակներ՝Հավելված N2):

Հետևաբար, նախապատրաստական փուլում դպրոցները պետք է հաշվի առնեն ինչպես տեխնիկական հարցերը (օրինակ՝ուսումնառության կազմակերպման հարցերը), այնպես էլ բովանդակային թեմատիկան՝ դպրոցական ուսումնական պլան, ուսուցման մոտեցումներ, գնահատում և այլն:

Առաջին հերթին դպրոցը մինչև ուսումնական տարվա սկիզբը պետք է որոշած լինի ուսումը վարելու ձևը: Այս դեպքում հիմնական հարցն է՝ արդյոք դպրոցը կօգտագործի՞ հեռավար ուսուցման հնարավորությունը: Ցանկացած դեպքում, ստանդարտ հարցերի հետ մեկտեղ, անվտանգության չափանիշներին համապատասխանելու համար պետք է նախատեսել գործող կանոնակարգերը, օրինակ՝ դասի պլան կազմելիս տարբեր դասարանների աշակերտների համար տարբեր ժամանակներում պլանավորել դասամիջոցները, ինչպես նաև՝ անհրաժեշտության դեպքում, յուրաքանչյուր դասարանի կամ աշակերտների խմբի համար դասամիջոցների ժամանակ հատկացնել հատուկ ազատ տարածքներ, սահմանել տեղաշարժման կամ շարժման հոսքեր և վերահսկել այն և այլն:

2020-2021 ակադեմիական տարվա ուսումնական գործընթացի կազմակերպման առումով կարող ենք առանձնացնել երկու հիմնական խնդիր.

ա) 2019-2020 տարվա երկրորդ կիսամյակում վերացնել աշակերտների ձեռքբերումներում եղած թերությունները:
բ) 2020-2021 ուսումնական տարվա դպրոցական ծրագիրը զարգացնել ուսանման և ուսուցման բոլոր սցենարների նախատեսմամբ:

ա) 2019-2020 տարվա երկրորդ կիսամյակում վերացնել աշակերտների ձեռքբերումներում եղած թերությունները:

- Դպրոցը պետք է ստեղծի աշխատանքային խումբ՝բացահայտելու այն աշակերտներին, ովքեր անցյալ կիսամյակում ճգնաժամային իրավիճակում վարած ուսումնական գործընթացի պատճառով խնդիրներ են ունեցել ուսանման և ուսուցման կամ հոգեբանական և սոցիալ-հուզական ուղղությամբ:
- Անհրաժեշտության դեպքում առարկայական ամբիոնների կողմից պետք է մշակվեն նույնականացման այնպիսի գործիքներ, որոնք կլինեն առավելագույնս ճկուն և տեղեկատվական (օրինակ ՝ վերջին կիսամյակի ամփոփիչ առաջադրանք, անհատական հարցազրույց և այլն):

- Այն աշակերտների համար, ովքեր չեն կարողացել մշակել նախորդ կիսամյակի ուսումնական թեմաները, հնարավոր է մշակել և իրականացնել լրացուցիչ ակտիվություններ (տե՛ս՝ Նպատակային ծրագրեր), որպեսզի նրանք դուրս չմնան ուսումնական գործընթացից:
- Հնարավոր է նախորդ կիսամյակի ուսումնական թեմաները մանրակրկիտ մշակելու և ամրապնդելու համար տվյալ թեմաներն ինտեգրել ընթացիկ ուսումնական գործընթացին (նոր թեմաների հետ միասին):
- 2019-2020 թվականների երկրորդ կիսամյակում արտակարգ իրավիճակում ուսուցման արդյունքում առաջացած ուսանման և ուսուցման գործընթացի թերությունները վերացնելու համար դպրոցը մշակի փոխհատուցման ծրագիր:
- Ուսանման և ուսուցման գործընթացի թերությունները վերացնելու փոխհատուցման ծրագիրը կարող է ներառել աշակերտների և/կամ դասարանների ցուցակ, ուսուցման թեմաներ, փոխհատուցման գործողությունների ձևեր (օրինակ՝ դաս, անհատական աշխատանք, լրացուցիչ դաս, ակումբային աշխատանք, նախագիծ և այլն), գործունեության ժամանակացույց, պատասխանատու անձինք և այլն:
- Փոխհատուցման պլանը գերադասելի է մշակել առարկայական ամբիոններում, քննարկել մանկավարժական խորհրդի ժամանակ, և այն դառնա դպրոցի ուսումնական ծրագրի մի մաս: Ծրագրի մասին տեղեկատվությունը պետք է տրամադրվի շահառու աշակերտների ծնողներին:

բ) Դպրոցական ուսումնական ծրագրի զարգացում և ուսանման-ուսուցման գործընթացի կազմակերպում

Ինչպես հայտնի է, որ դպրոցները բաց համակարգեր են և, բացի ներքին կանոնակարգերից, դրանց վրա էական ազդեցություն են ունենում նաև այլ արտաքին գործոններ, ինչպիսիք են ընտանիքը և սոցիալական պատկերը: Բացի այդ, դպրոցի դերը շատ ավելի մեծ է, քան աշակերտներին կոնկրետ տեղեկություններ տրամադրելը և որոշակի գիտելիքներ հաղորդելը: Եթե մենք դպրոցը համարում ենք հասարակական զարգացման վայր, ապա տվյալ հարցերի նախատեսումը բավականի նշանակալի է դառնում:

Մասնավորապես, համավարակի պայմաններում երկրում ծանր սոցիալական պատկերն էլ ավելի է սրվել, և հասարակությունը բախվել է էլ ավելի մեծ մարտահրավերների: Հետևաբար, պետք է նկատի ունենալ այս իրավիճակին ուղեկցող ծանր հոգեբանական ազդեցությունները:

Հաշվի առնելով այս և այլ գործոններ, կարևոր է, որ ուսումնական գործընթացի սկզբնական փուլը հատկացվի աշակերտների սոցիալ-հուզական զարգացման և շրջապատին հարմարվելու հարցերին և ռազմավարություններին: Այս պարագայում կարևոր է կենտրոնանալ հարաբերությունների զարգացման վրա ինչպես աշակերտների, այնպես էլ աշակերտ-ուսուցչի միջև:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Դպրոցական կրթության նպատակը, բացի քաղաքացի կրթելուց և նրան հետագա կյանքի նախապատրաստելուց, հասարակության ձևավորմանը և աշակերտների սոցիալականացմանը նպաստելն է: Մասնավորապես՝ աշակերտների հարաբերությունների, նրանց սոցիալական հմտությունների ու կարողությունների զարգացման խթանումը և այլն:

Հաշվի առնելով այս և վերոնշյալ գործոնները՝ կարևոր կլինի առաջին կիսամյակի սկզբնական փուլում հարմարեցնել դպրոցական ուսումնական ծրագիրը և, ելնելով համատեքստից, նախանշել համապատասխան առաջնահերթություններ:

1. Ուսումնական ծրագրի ձևափոխումը և սոցիալ-հուզական հմտությունների ու կարողությունների զարգացումը

Առաջին փուլում ցանկալի է ավելի շատ կենտրոնանալ սոցիալական-հուզական հմտությունների ու կարողությունների և անձնական հմտությունների զարգացման վրա: Դա հնարավոր է դառնում ուսումնական ծրագրերի բեռնաթափման միջոցով, որոնք պետք է քննարկվեն և համաձայնեցվեն առարկայական ամբիոններում: Բացի այդ, սոցիալ-հուզական և անձնական հմտությունների ու կարողությունների զարգացման լավագույն ուղիներից մեկը նպատակային ծրագրերն են (այս թեմայի հետ կապված՝ տե՛ս հետևյալ ենթաբաժինը. Նպատակային ծրագրերի մշակում):

Անչափ կարևոր է խթանել աշակերտների մասնակցությունը ուսումնական գործընթացի յուրաքանչյուր փուլում: Դա կարելի է անել ինչպես աշակերտների ինքնակառավարման միջոցով, այնպես էլ այլ միջոցներով, օր., աշակերտների հարցումներ, անհատական կամ խմբային հանդիպումներ և այլն: Այս ժամանակահատվածը շատ հարմար է աշակերտների ներգրավվածության և ընդհանուր կառավարման գործընթացներում աշակերտների ակտիվացման համար: Այս առումով ամենակարևորն է, որ աշակերտներն ունենան փոփոխության համար իրական լծակներ և որոշումների կայացման գործընթացում միայն ֆորմալ դեր չկատարեն: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է, որ այսպիսի գործունեության մեջ դպրոցի կողմից չլինի այսպես կոչված ֆավորիտիզմը, և միայն ակտիվ և բարձր ակադեմիական առաջադիմությամբ աշակերտները չմասնակցեն դրան: Այս դեպքում դպրոցը պետք է փորձի նախատեսել բոլոր աշակերտների հետաքրքրությունները, ինչպես նաև բացահայտել նրանց կարիքները, խրախուսել նախաձեռնությունները:

Ինչ վերաբերում է հանձնարարականներին անմիջապես դասավանդման ուղղությամբ, ապա ցանկալի է, որ դպրոցի ուսուցիչները գործեն համաձայնեցված և սկզբնական շրջանը (օրինակ՝ առաջին ամիսը) տրամադրեն աշակերտների հետաքրքրություններին, նրանց հոգեբանական-հուզական պատրաստվածությանը: Այս առումով նախընտրելի են պակաս ձևամոլության և վերահսկողության մեխանիզմները, ավելի գործնական և ոչ թե՝ ձևական գործողությունները, գնահատման դեպքում՝ զարգացնող, այլ ոչ թե՝ որոշող գնահատումները: Ընդհանրապես, այս և այլ հարցերի նախատեսման համար լավագույն ռազմավարություններից մեկը աշակերտների քննարկումները խրախուսելն ու ակտիվ հաղորդակցությանն աջակցելն է, ինչը ներառում է նաև ունկնդրման հմտությունների զարգացում: Աշակերտների հուզական բարեկեցությանն օժանդակող հանձնարարականներին ծանոթանալու համար տե՛ս՝ «Բարկեցությունը COVID-19-ով հարուցված համավարակի պայմաններում» գլուխը:

Ինչ վերաբերում է դասավանդման ռազմավարություններին, ապա այս դեպքում նույնպես հնարավոր է զգալի փոփոխություններ կատարել: Այսօր ամբողջ աշխարհում ակտիվորեն կիրառվող մեթոդներից

մեկը շրջված դասարանի մոդելն է, որն ուսուցիչը կարող է օգտագործել ինչպես հեռավար, այնպես էլ առկա ուսուցման ժամանակ:

Շրջված դասարան մոդելը: Սա հիբրիդային ուսուցման (blended learning) ամենատարածված ձևերից մեկն է, որի գաղափարը սկիզբ է առել դեռ 2000-ական թվականների սկզբին: Դրա հիմնադիրներ են համարվում են Ջոն Բերգմանը և Արոն Սեմսը: Շրջված դասարանի հիմնական նպատակը ինտերակտիվ ուսուցումն է, որի նպատակն է օպտիմալ օգտագործել աշակերտի հետ անհատական հանդիպումը: Ուղեցույց փաստաթղթում շրջված դասասենյակը սահմանվում է հետևյալ կերպ. Այն ամենը, ինչ ավանդաբար տեղի է ունենում դասարանում, տեղափոխվում է տուն: Իսկ այն, ինչ տնային առաջադրանք է, արվում է դասապրոցեսի ընթացքում: Ավելի կոնկրետ՝ յուրաքանչյուր նոր թեման աշակերտներին տրվում է տեսանյութի միջոցով՝ ինքնուրույն դիտելու, իսկ տնային աշխատանքները կատարվում են դասարանում գործնական աշխատանքների, խմբային կամ անհատական գործողությունների միջոցով:

Ավանդական դասասենյակում ժամանակի մեծ մասը տրամադրվում է դասերի կամ տնային առաջադրանքների հարցումներին կամ ստուգմանը, ինչպես նաև նոր դասի բացատրմանը: Այս պարագայում աշակերտներն ավելի շատ պասիվ ստացողի դերում են, քան ակտիվ, իսկ դասապրոցեսը՝ ավելի պակաս ինտերակտիվ է: Շրջված դասարանի ժամանակ ուսուցիչն ավելի շատ ժամանակ է հատկացնում աշակերտների անհատական զարգացմանը՝ յուրաքանչյուր աշակերտին հետադարձ կապ տալով, խմբային աշխատանքին և տարբեր գործնական առաջադրանքների կատարմանը:

Ինչպե՞ս պետք է իրականացնենք այս մոդելը, կամ «շրջենք դասարանը»:

Նախևառաջ, կարևոր է աշակերտներին բացատրել այս մոդելը: Ինչպես նաև՝ շփումը ծնողների հետ և նրանց տեղեկացումը: Ուսուցիչը պետք է հասկանա, թե ինչու է օգտագործում այս մոդելը: Ըստ Ջոն Բերգմանի, մոդելն իրականում չի հեշտացնի ուսուցիչների կյանքը, բայց հաստատ դասավանդման գործընթացը շատ ավելի որակյալ կդարձնի:

Ինչ վերաբերում է բուն գործընթացին, կարևոր է մշակել հատուկ ուսումնական ծրագիր, որը բաղկացած է հատուկ թեմաներից կամ նպատակային հասկացություններից, օրինակ՝ քաղաքացիական կրթության ոլորտում այդպիսի թեմաներ են ակտիվ քաղաքացիության կամ ինքնակառավարման հարցերը: Նշված թեմատիկայի մասին ուսուցիչը պատրաստում կամ օգտագործում է արդեն պատրաստված տեսանյութեր, որոնք աշակերտները դիտում են տանը: Այս գործընթացի բացասական կողմերից մեկն այն է, որ աշակերտները լսելու ընթացքում հարցեր տալու հնարավորություն չունեն: Ուստի կարևոր է շեշտել այս գործընթացի կարևորությունը և գործնական հանձնարարականներ տալ աշակերտներին (օրինակ ՝ ինչպես և ինչ սկզբունքով անեն նշումներ, նշեն հարցեր և այլն):

Որպեսզի տեսանյութերը լինեն դիտելի և աշակերտների համար ձանձրալի չլինեն, դրանց տևողությունը պետք է լինի 10-15 րոպե: Ցանկալի է, որ տեսանյութը չլինի միապաղաղ: Նախնական փուլում՝ նախապատրաստման գործընթացում, դուք կարող եք օգտվել այն աշակերտների օգնությունից, որոնց հիշյալ հմտությունները զարգացած են և լավ տիրապետում են տեխնոլոգիաներին: Բացի այդ, լավ մոտեցումներից է նաև այլ ուսուցիչների հետ տեսանյութեր ձայնագրելը: Թեման բացատրելիս եղեք հնարավորինս բնական, կարող եք օգտագործել հումորը, հնարավորինս հակիրճ ու հասկանալի բացատրեք հարցը, պահպանեք ժամանակը:

Ինչ վերաբերում է բուն դասավանդման գործընթացին, ապա այս պարագայում ուսուցիչն այլևս ժամանակ չի ծախսում հին կամ նոր թեմաներ բացատրելու վրա: Հետևաբար, ամբողջ ժամանակը կարող է տրամադրվել աշակերտների հարցերին, գործնական կամ անհատական աշխատանքներին:

Ցանկալի է, որ ուսուցիչը պատրաստած ունենան կառուցքավորված պլան, որը նախապես հայտնի կլինի աշակերտներին: Օրինակ ՝ առաջին 10-15 րոպեն հարց ու պատասխան, հաջորդ 15-20 րոպեն՝ խմբային աշխատանքներ, վերջին 10 րոպեն՝ գնահատում/ամփոփում և հաջորդ դասի հարցերը:

Այս մոդելի կիրառումը հատկապես դյուրին է **հեռուստադպրոց**ի առկայության դեպքում: Ուսուցիչները կարող են օգտագործել պատրաստված տեսանյութեր, նախօրոք պլանավորեն և պատրաստեն դասապրոցեսը կամ պլանները: Այս առումով **հեռուստադպրոցը լավագույն օժանդակ միջոց է ուսուցիչների համար**:

Եվ վերջում, հակիրճ այս առավելությունների մասին, որ ունի տվյալ մոդելը.

- Աշակերտների մոտ զարգացնում է պատասխանատվության զգացում, քանի որ ուսումնական գործընթացի համար նրանց վրա ևս որոշակի պարտավորություններ են դրվում:
- Դասի գործընթացն ամբողջությամբ աշակերտակենտրոն է, և նրանք գտնվում են ավելի ակտիվ դիրքում:
- Գործընթացը ճկուն է և աշակերտակենտրոն՝ աշակերտները կարող են իրենց համար հարմար ժամանակ և վայրում ծանոթանալ դասի թեմատիկային, դիտել ցանկալի արագությամբ և քանակով: Հաճախ պատահում է, որ աշակերտը դուրս է մնում դասը բացատրելու գործընթացից (օրինակ՝ այդ պահին չի լսում ուսուցչին), հետագայում դժվարանում է վերադառնալ գործընթացին: Բացի այդ, այն աշակերտը, որը չի հաճախում դասի աշխատանքին, փաստորեն դուրս է մնում գործընթացից և գտնվում է անհավասար վիճակում: Շրջված դասարանի ընթացքում նյութերը բոլոր աշակերտների համար մատչելի են:
- Մոդելը նպաստում է ինչպես աշակերտների միջև, այնպես էլ՝ աշակերտ-ուսուցիչների միջև հարաբերությունների զարգացմանը: Սրա պատճառը պարզ է. ուսուցչին ավելի շատ ժամանակ է մնում գործնական և աշակերտակենտրոն աշխատանք կատարելու համար:
- Ուսուցման գործընթացը շատ ավելի թափանցիկ է, ինչն օգնում է աշակերտներին տեղեկացնել և ներգրավել դպրոցական կյանքում:
- Մոդելը նպաստում է ուսուցիչների կազմակերպված և արդյունավետ աշխատանքին: Այս պարագայում նա ժամանակ չի ծախսում տարբեր դասարաններում նույն առարկան բացատրելու համար: Փոխարենը, նա ավելի շատ ժամանակ ունի կոնկրետ դասարանին հարմարեցված աշխատանք պլանավորելու համար:

2. Նպատակային (շարունակական) ծրագրերի մշակում

Հաշվի առնելով դպրոցի առջև ծառացած մարտահրավերները, հնարավոր է, որ դպրոցը մշակի նպատակային ծրագրեր: Նպատակային ծրագիրը գործողությունների ամբողջություն է, որն ուղղված է կարճաժամկետ կամ երկարաժամկետ հեռանկարում որոշակի խնդրի վերացմանը կամ որոշակի ուղղության (օրինակ՝ ձեռք բերված գիտելիքներ, սոցիալական հմտություններ, հուզական ինտելեկտ) զարգացմանը: Նման ծրագրերը ստեղծվում են նախագծի տեսքով և նպատակահարմար է ներկայացված լինեն մեկ կամ մի քանի բաղադրիչների տեսքով՝ խնդրի նկարագրություն, հստակ ձևակերպված նպատակ, առաջադրանքներ, գործունեությունների ցանկ, ժամկետներ, իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսներ, պատասխանատու անձ/անձինք, սպասվելիք արդյունքներ, մշտադիտարկման և գնահատման գործիքներ:

Պարտադիր չէ, որ դպրոցական նպատակային ծրագրերը լինեն բարդ, համալիր փաստաթղթեր: Դպրոցում նման ծրագրեր պլանավորելիս և իրականացնելիս՝ կարևոր է հստակորեն պարզել խնդիրը, համատեղ պլանավորել դրա լուծման ուղիները և հստակ սահմանել նրանցում ներգրավված մարդկանց գործառույթներն ու աջակցության կարիքը:

Համավարակի պայմաններում դպրոցում ուսուցումը վերսկսելուց հետո այսպիսի նպատակային ծրագրերը կարող են իրականացվել աշակերտների ուսումնական արդյունքները բարելավելու, աշակերտների և/կամ ուսուցիչների մեջ հոգե-հուզական պատկերն առողջացնելու, ուսուցիչների թվային իրավունակությունները զարգացնելու, դպրոցական համայնքում համավարակի հետ կապված տեղեկացվածության որակը բարձրացնելու և դպրոցի այլ որոշակի կարիքից ելնելով։

Նպատակային ծրագրերով պլանավորված գործողությունները կարող են իրականացվել ինչպես պաշտոնական (դասի գործողություններ), այնպես էլ ոչ պաշտոնական (ակումբային, խմբակային, անհատական անհատական աշխատանք) կրթական տարածքում։

Նախագծի տեսքով ձևակերպված նպատակային ծրագրերը հեշտացնում են դոնորների և շահագրգիռ այլ կողմերի հետ շփումը և նպաստում լրացուցիչ նյութական, մտավոր և մարդկային ռեսուրսների ներգրավմանը, քանի որ այս ձևով ձևակերպված առաջարկները հեշտացնում են դոնորների և այլ շահագրգիռ կողմերի հետ հարաբերությունը (տե՛ս՝ համապատասխան գլուխը. Արտաքին հաղորդակցություն)։

ԿՐԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Ուսումնական գործընթացն արդյունավետ վարելու համար անհրաժեշտ է օգտագործել համապատասխան կրթական ռեսուրսներ: Ավանդաբար, դպրոցներն ու ուսուցիչներն օգտվում են դասագրքերից, որոնք իսկապես կարևոր դեր են խաղում այս գործընթացում: Սակայն, պետք է ասել, որ դասագրքերը, ինչպես կրթական այլ ռեսուրսները, օժանդակ գործառույթ են կատարում, և դրանց օգտագործումը չպետք է դառնա ինքնանպատակ:

Ժամանակակից դարաշրջանում, հատկապես հետհամավարակային պայմաններում, կան բավականին շատ թվային նյութեր և առցանց ռեսուրսներ, որոնց օգտագործումը կարող է օգնել ուսուցիչներին ուսումնական գործընթացի կազմակերպման հարցում: Ստորև թվարկված է դրանցից մի քանիսը.

1. Հեռուստադպրոց: Դպրոցները փակվելու պահից պետության կողմից ձեռնարկված ամենակարևոր նախագծերից մեկը Հեռուստադպրոցն էր: Հեռուստադպրոցում ի մի են բերված գրեթե բոլոր առարկաների ու ուղղությունների հեռուստադասեր: Նախագծի շարունակությունը նախատեսվում է նաև հաջորդ կիսամյակում: Ուսուցիչները կարող են իրենց համապատասխանեցված ծրագիր մշակել՝ օգտագործելով Հեռուստադպրոցի ռեսուրսները:
Կայք՝ https://1tv.ge/tv-radio/arkhebi/pirveli-arkhi-ganatleba/
Սոցիալական ցանցի էջ՝ https://www.facebook.com/1tv.ge.teleskola

2. Խանի ակադեմիա: Սա անվճար կրթական հարթակ է, որտեղ հասանելի են ինչպես տեսահոլովակներ, այնպես էլ հոդվածներ և վարժություններ դպրոցի աշակերտների համար ճշգրիտ և բնագիտական առարկաների ուղղությամբ: Բացի այդ, այստեղ տեղակայված են օժանդակ ռեսուրսներ ուսուցիչների և ծնողների համար: Այստեղ ուսուցիչները հնարավորություն ունեն ստեղծել վիրտուալ դասասենյակ և հրավիրել իրենց աշակերտներին: Նմանապես, ծնողները հնարավորություն ունեն հետևելու իրենց զավակների առաջընթացին:
Կայք՝ https://ka.khanacademy.org
Ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/KhanAcademyGeorgia

3. el.ge վեբ-պորտալ: Պորտալում տեղադրված են տարբեր կրթական և ճանաչողական ռեսուրսներ՝ դասագրքեր, հոդվածներ, տեսանյութեր, վեբինարներ: Հատկանշական են նոր կրթական ծրագրի շրջանակներում ստեղծված **համալիր առաջադրանքների փաթեթները** հետևյալ բնագավառներից՝ մաթեմատիկա, գրականություն (վրաց լեզու և գրականություն), հասարակական գիտություններ (պատմություն, աշխարհագրություն, քաղաքացիություն/քաղաքացիական կրթություն) և բնական (բնագիտություն, քիմիա, ֆիզիկա, կենսաբանություն) գիտություններ:
Կայք՝ https://el.ge/projects/iskola
Ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/El.Library.Georgia/

4. TV դպրոց - tvschool.ge. հարթակ ուսուցիչների համար տնային առաջադրանքները հեշտ ստեղծելու համար:
Կայք՝ https://www.tvschool.ge/
Ֆեյսբուքյան էջ՝ https://www.facebook.com/TVskola/

5. www.civiceducation.ge հարթակ, որտեղ կառուցքավորված տեղակայված են դասանյութեր և տեսանյութեր քաղաքացիական կրթության ուղղությամբ:

6. http://millab.ge/hy/ լրատվամիջոցների և տեղեկատվական գրագիտության լաբորատորիայի (MilLab) առցանց հարթակը օժանդակ ուսումնական ռեսուրս է, որը միտված է քննադատական

մտածողության զարգացմանը և լրատվամիջոցների գիտակցված օգտագործման խթանմանը: Հարթակը երիտասարդներին տալիս է գիտելիքներ այն մասին, թե ինչպես են գործում ժողովրդավարական համակարգում լրատվամիջոցները, ինչպես վերստուգել կեղծ տեղեկատվությունը և պարզել, թե ինչ շահեր են կանգնած կոնկրետ լրատվամիջոցների ետևում:

Պլատֆորմը միավորում է ուսումնական նյութեր, խաղեր, վարժություններ, օրինակներ հետևյալ ուղղություններով. Լրատվամիջոցների տեղեկատվություն, Քարոզչություն և վերիֆիկացիա՝ համապատասխանության ստուգում, Թափանցիկություն, Ատելության խոսք, Կիբեր, Անձնական կյանքի / անձնական տվյալների անձեռնմխելիություն:

Այս ռեսուրսը պատրաստվել է Վրաստանում Նիդերլանդների դեսպանության աջակցությամբ՝ «Մեդիա գրագիտության և քննադատական մտածողության խթանում դպրոցներում» նախագծի շրջանակներում:

ԴՊՐՈՑԻ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԵՎ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Վարչական անձնակազմ

Ինչպես նշվեց վերևում, Վրաստանում դպրոցները զգալիորեն տարբերվում են իրարից և գործում են տարբեր համատեքստերում: Տարբեր են դպրոցների մասշտաբները, հետևաբար և վարչական անձնակազմի թիվը:

Նոր մարտահրավերների, կանոնակարգերի և փոփոխությունների արդյունավետ կառավարման նպատակով միջին և մեծ չափի դպրոցներում կարևոր կլինի հստակ պատվիրակել աշխատանքը տարբեր մակարդակներին, բացի այդ, ստեղծել թեմատիկ ուղղություններով աջակցության խմբեր: Ամենակարևորը, կախված դպրոցի հնարավորություններից, անհրաժեշտ կլինի վերանայել վարչական անձնակազմի աշխատանքային պայմանները, հատկապես այն ուղղություններով, ինչպիսիք են բժշկի և հավաքարարի աշխատատեղերը:

Ուսուցիչների աջակցություն

Ուսումնառության գործընթացում ամենակարևոր դերն ունեն ուսուցիչները: Առավելապես հենց նրանցից է կախված, թե ինչպես կընթանա ուսուցման գործընթացը: Ուստի նրանց աջակցությունը պետք է առաջնահերթ լինի յուրաքանչյուր դպրոցի համար:

Նախ, կարևոր է որոշել, թե ինչ կարիք ունեն ուսուցիչները: Օրինակ՝ թվային իրավասության պակաս, տեխնոլոգիաների և ինտերնետի հասանելիության հետ կապված խնդիրներ, հուզական աջակցության կարիք և այլն: Դա կարելի է անել ինչպես հանդիպումների ընթացքում, անմիջական շփման ընթացքում, այնպես էլ՝ պարզ հարցումների կամ այլ գործիքների միջոցով:

Դրանից հետո անհրաժեշտ է նույնականացված ուղղություններով որոշակի գործողություններ իրականացնել:

1. Թվային իրավասությունների և առցանց մանկավարժության զարգացում

Հեռավար կրթությունը և խառը / հիբրիդային մոդելների օգտագործումը պահանջում են համակարգված նախապատրաստում և աստիճանական անցում դրան: Հետևաբար, զարմանալի չէ, որ դպրոցների մեծ մասում անհրաժեշտ կլինի ուսուցիչների աջակցություն ինչպես թվային տեխնոլոգիաների օգտագործման, այնպես էլ առցանց մանկավարժության ուղղությամբ:

Ելնելով ստեղծված իրավիճակից և սահմանափակ ժամանակից՝ ըստ միջազգային պրակտիկայի, հնարավոր է իրականացնել ներքին դպրոցական թրեյնինգային մոդուլներ: Դա անելու միջոցներից մեկը ուսուցիչների աջակցության խմբերի ստեղծումն է: Աջակցության խմբերում պետք է միավորվեն այնպիսի ուսուցիչներ, ովքեր լավ են հասկանում այս հարցերը և պատրաստ են իրենց ներդրումն ունենալ գործընկերների զարգացման գործում:

Նման ուսուցիչների բացակայության դեպքում կարևոր է, որ դպրոցը դիմի գործընկեր դպրոցներին, Նախարարությանը կամ Ուսուցչի տան ներկայացուցիչներին, հասարակական կազմակերպություններին, համալսարաններին, կրթության մասնագետներին, ովքեր պատրաստ կլինեն կամավոր աջակցել դպրոցին այս ուղղությամբ:

Կախված հայտնաբերված կարիքից՝ թրեյնինգային մոդուլների թեմատիկան կարող է ներառել. 1. Տեխնիկական հարցեր, ինչպիսիք են Microsoft teams-ի կամ կրթական հարթակների (www.ck12.com, www.el.ge/projects.sikola, Խանի ակադեմիա, TV դպրոց և այլն) օգտագործումը, 2. Մեթոդական հարցեր (Աշակերտների գնահատում, համալիր առաջադրանքների կազմում*. Աշակերտների պատրաստվածության ախտորոշիչ գնահատում և այլն):

Կարևոր է, որ այս դասընթացներն ունենան պաշտոնականացված և կառուցքավորված տեսք: Ցանկալի է դասընթացներն անցկացնել մինչև դպրոցական գործընթացի սկսվելը: Բացի այդ, ցանկալի է դպրոցից առանձնացնել մեկ կամ մի քանի մարդ, ում կարող են դիմել ուսուցիչները տեխնոլոգիական կամ մեթոդական աջակցության անհրաժեշտության դեպքում:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Համապատասխան գլուխ՝ «Առաջարկություններ ուսուցիչների համար»:

2. Ուսուցիչների «ուժասպառությունը» և հուզական բարեկեցությունը

Կրթական գործընթացը հաջող վարելու ամենակարևոր բաղադրիչներից մեկը ուսուցչի հուզական բարեկեցությունն է: Սթրեսը և դրա հետևանքներն ազդում են ինչպես երեխաների, այնպես էլ մեծահասակների վրա: Մեծահասակների սթրեսն իր հերթին հաճախ հանգեցնում է անցանկալի հետևանքների (հատկապես աշակերտների հետ շփվելիս): Ընդհանուր առմամբ, ուսուցչի դերը և պատասխանատվությունը կրթական գործընթացում չի սահմանվում միայն ակադեմիական տեսանկյունից, ուսուցիչը հոգ է տանում՝

- Աշակերտի ակադեմիական հմտությունների զարգացման մասին (գրել, կարդալ, զեկուցել և այլն).
- Աշակերտի ճանաչողական հմտությունների զարգացման մասին (խնդիրների վերլուծություն, խնդիրների լուծում, մտածողություն և այլն).
- Աշակերտների սոցիալական հմտությունների զարգացման մասին (թիմային աշխատանք, համատեղ ակտիվություններ, հերթի պահպանում և այլն).
- Աշակերտի հուզական բարեկեցության (տրամադրության) մասին:

Հետևաբար, այս բաղադրիչներից յուրաքանչյուրը հաջողությամբ վարելու համար ուսուցիչն ինքը պետք է զգա հուզական բարեկեցություն: Դրա հաղթահարումը բավականին սթրեսային է ուսուցիչների համար առօրյա կյանքում, և այս գործընթացը կարող է հատկապես սթրեսային լինել Covid-19-ի պայմաններում:

Փոփոխված օրվա ժամանակացույցը, ռեժիմները, գործողությունները, խստացված անվտանգության կանոնները, հեռավար ուսուցումը, - սա մի մասն են այն թվարկման, թե ինչը կարող է սթրեսային լինել ուսուցիչների համար: Այս սթրեսի պայմաններում անհրաժեշտ է, որ մանկավարժներն ունենան որոշակի, իրենց հուզական բարեկեցության վրա հաշվարկված աջակցություն դպրոցի ղեկավարության կողմից:

* Տնային առաջադրանքի արդյունավետության հարցերը քննարկված են Նիկա Մաղլափերիձեի «Տնային առաջադրանքների համալիրությունը. Դրական և բացասական կողմերը» հոդվածում, տե՛ս՝ կայքէջ «Կրթության մասին»:

Հանձնարարականներ ուսուցչի հուզական բարեկեցության պահպանման համար.

- Նախ և առաջ, կարևոր է, որ ուսուցիչներն իմանան, որ անհրաժեշտության դեպքում իրենց կլսեն: Կառուցողական երկխոսություն անհրաժեշտ է ինչպես ուսուցչի և ծնողի, այնպես էլ ուսուցչի և դպրոցի տնօրինության միջև: Օրինակ՝ ուսուցիչը պետք է հնարավորություն ունենա ասել, որ ինքը ի վիճակի չէ ինքնուրույն հաղթահարել այս կամ այն իրավիճակը և օգնության կարիք ունի (մասնագետի խորհրդատվության, վերապատրաստման կամ այլ ձևով):
- Ուսուցիչը պետք է զգա, որ իր ֆիզիկական անվտանգությունը, հոգեբանական և հուզական բարեկեցությունը նույնքան կարևոր են դպրոցի համար, որքան աշակերտների անվտանգությունն ու բարեկեցությունը: Համավարակի պայմաններում աշխատելը կարող է հանգեցնել մասնագիտական սպառման և կարևոր է առողջ հոգեբանական մթնոլորտ ստեղծել, իսկ անհրաժեշտության դեպքում հրավիրել մասնագետ (հոգեբան, դասընթացավար, որը կծանոթացնի ռազմավարություններ հոգեբանական ուժասպառությունից խուսափելու համար):
- Անկախ ծանրաբեռնված օրվա ժամանակացույցից, անհրաժեշտ է, որ դպրոցական դասացուցակն այնպես լինի կազմված, որ ուսուցիչը օրվա ընթացքում ժամանակ և հնարավորություն ունենա հանգստանալու համար:
- Կարևոր է պարբերաբար անցկացնել ուսումնական հաստատության անձնակազմի հանդիպումներ փոքր խմբերով (2 շաբաթը մեկ կամ 3 շաբաթը մեկ անգամ), որի ընթացքում ուսումնական անձնակազմը կկիսվի նորություններով ուսումնական գործընթացի պլանավորման այս կամ այն մեթոդի, ինչպես նաև փորձի և հույզերի մասին: Այս հանդիպումները պետք է դիտարկվեն որպես աշխատանքային ժամեր, որպեսզի ուսուցիչներին իրենց ազատ ժամանակում լրացուցիչ գործողություններ չառաջարկվեն:
- Ցանկալի է հանդիպում ունենալ հոգեբանների հետ, որոնք կօգնեն նրանց ինչպես դասարանը պատրաստելու, այնպես էլ խորհուրդներ կտան հուզական բարեկեցության պահպանման համար: Հոգեբանները կարող են լինել Մանդատայինի տանը կից գործող Հոգեբանական կենտրոնի կամ Բազմամասնագիտական թիմի ներկայացուցիչներ: Դպրոցը կարող է նաև դիմել մեկ այլ կազմակերպության կամ կոնկրետ հոգեբանի՝ ուսուցիչների հուզական բարեկեցությունը բարձրացնելու համար:
- Ուսումնական գործընթացի փոփոխությունների հետ կապված՝ ցանկալի է, որ ուսուցիչը որոշ ժամանակ ունենա հարմարվելու համար:
- Ուսուցիչների մոտիվացիան բարձրացնելու համար ցանկալի է, որ դպրոցի ղեկավարության հետ պարբերաբար դրական հետադարձ կապ լինի:

ՈՐԱԿԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ, ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Որակ ապահովելու համար դպրոցը կարող է առաջնորդվել Դեմինգի ցիկլով (PDCA), որը լայնորեն օգտագործվում է ամբողջ աշխարհում ինչպես կրթության, այնպես էլ այլ ոլորտներում: Որակի ապահովման այս գործիքը ցիկլային բնույթ ունի և ներառում է հետևյալ փուլերը. Plan `պլանավորում, Do` իրականացում, Check` վերստուգում, վերահսկում, Act `արձագանքում, հարմարեցում:

Plan` պլանավորում



Պլանավորման փուլում կարևոր է նույնականացնել որոշակի խնդիր, մարտահրավեր և հստակ ձևակերպել, որի լուծմանը ուղղված կլինի նշված ցիկլը: Այս փուլում օգտագործվում է վերը նշված իրավիճակի վերլուծությունից ստացված տեղեկատվությունը, կամ հավաքագրվում են նոր տվյալներ, որոնց հիման վրա հնարավոր կլինի խորությամբ նկարագրել խնդիրը և դրա պատճառները:

Խնդիրը հայտնաբերելուց հետո մշակվում է այն լուծելու համար անհրաժեշտ գործողությունների ծրագիր, որը ներառում է պատասխանատու անձանց, ժամկետների, ռեսուրսների, գործընթացների գնահատման ստուգիչների և այլ հնարավոր կարիքների սահմանում: Պլանավորման ընթացքում հատկապես կարևոր է դպրոցական համայնքի ակտիվ ներգրավումը, հատկապես այն անձանց, ովքեր անմիջական մասնակցություն կունենան այդ գործընթացներին և/կամ կլինեն այդ ակտիվությունների շահառուները:

Do` իրականացում

Այս փուլը ներառում է նախորդ փուլում ստեղծված գործողությունների ծրագրով սահմանված գործողությունների իրականացումը: Կարևոր է, որ ծրագրի իրականացման ժամանակ գործունեության մեջ ներգրավված յուրաքանչյուր անձ ունենա լավ մտածված ամբողջական գործընթաց: Անհրաժեշտ է նաև նկարագրել/փաստաթղթավորել իրականացված գործունեությունը:

Check՝ վերստուգում, վերահսկողություն

Գործունեության ստուգումից հետո արդյունքները գնահատվում են. արդյունքների գնահատման ժամանակ օգտագործվում են արդյունավետ պլանավորման փուլում մշակված ստուգիչները, իրականացման փուլում գործունեության նկարագրությունը, մշտադիտարկման արդյունքների վերլուծությունը: Լիարժեք պատկեր ստանալու համար կարող է պահանջվի նաև լրացուցիչ տվյալներ հավաքել: Գոյություն ունեցող թերությունները բացահայտելու և գործընթացը պատշաճ կերպով վարելու համար կարևոր է խնդիրները և դժվարությունները ներկայացնել բաց և անթաքույց: Այս փուլում չափվում են նաև գործունեությունը և արդյունքները, արձագանքը դրանց և պլանի մեջ համապատասխան փոփոխությունների ընդգրկումը:

Act ՝ արձագանքել, հարմարվել

Գործընթացը արդյունավետորեն կառավարելու համար կարևոր է ծրագրի իրականացման ընթացքում առաջացած թերությունները վերացնելու համար մշակված փոփոխություններ ներդնել: Տվյալ փուլում փոփոխությունները կարող են հարմարեցվել գոյություն ունեցող ծրագրին կամ հանգեցնել պլանավորման փուլի վերագործարկման:

Խնդիրների և թերությունների դեպքում հնարավոր է մի քանի անգամ կրկնել այս ցիկլը: Ցիկլը համարվում է ավարտված՝ նախանշված նպատակին հասնելու և ցանկալի արդյունք ստանալու դեպքում:

Իրավիճակի վերլուծություն

Դպրոցական ուսուցման գործընթացը վերսկսելու և դրա արդյունավետ կառավարման համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր դպրոց խորը ուսումնասիրի առկա իրավիճակը: Նման վերլուծության համար հնարավոր է հարմար լինի ռազմավարական պլանավորման ժամանակ ամենահաճախ կիրառվող SWOT վերլուծությունը: Իրավիճակի վերլուծությունը հանդիսանում է բազիսային տեղեկատվության և տվյալների համադրություն, լինի դա դպրոցական ուսումնական պլանի, նախագծերի, նպատակային ծրագրեր մշակելու կամ այլ գործողությունների առումով: Արդյունավետ է նաև իրարից սահմանազատել այն խնդիրները, որոնք դպրոցը կարող է ինքնուրույն կարգավորել, և խնդիրներ, որոնց կարգավորման համար անհրաժեշտ կլինի ներգրավել արտաքին դերակատարների: Կարևոր է, որ խնդիրների և մարտահրավերների մասին տեղեկատվությունը հնարավորինս հանրայնացվի, որպեսզի նպաստեն աջակցող արտաքին նախաձեռնություններին և դրանք խրախուսվեն:

Ծնողների ներգրավվածությունը

Համավարակի ընթացքում արտակարգ իրավիճակում ընթացող կրթական գործընթացն էլ ավելի ակնհայտ դարձրեց աշակերտների կրթության և դպրոցների աջակցության մեջ ծնողների և համայնքների ներգրավման անհրաժեշտությունը:

Կարևոր է, որ դպրոցը ձեռնարկի հետևողական միջոցառումներ ծնողներին և համայնքին ներգրավելու ուղղությամբ, ինչպիսիք են. Ծնողների և համայնքի իրազեկումը նոր կանոնակարգերի մասին (տե՛ս՝ «Դպրոցական համայնքի իրազեկումը նոր կանոնակարգերի մասին»): Մասնավոր նախաձեռնությունները խրախուսելու և աջակցելու նպատակով նկարագրել և ներկայացնել դպրոցի խնդիրները և կարիքները դպրոցական համայնքին:

Ծնողների և համայնքի ներգրավվածության աստիճանը բարձրացնելու համար կարևոր է, որ այս ուղղությամբ գործունեությունը համակարգի որոշակի անձ կամ մարդկանց խումբ: Տեղեկացվածության և ներգրավվածության մակարդակը բարձրացնելու համար արդյունավետ է նաև առաջնորդ ծնողների ռեսուրսի օգտագործումը: Պետք է նշել, որ ծնողների ներգրավվածությունն ու աջակցությունը կարևորագույնն են աշակերտների հոգեբանական-սոցիալական զարգացման համար: Տվյալ հարցի հետ կապված հանձարարականները տե՛ս՝ «Ծնողների ներգրավվածությունը և հոգեբանական-սոցիալական աջակցության կարևորությունը» գլուխը:

Միևնույն ժամանակ, արդյունավետ և համակարգված հաղորդակցության համար կարևոր է հստակորեն սահմանել այն կոնկրետ ժամանակը և ժամանակահատվածը, երբ դպրոցը ծնողներին տեղեկատվություն կտրամադրի եղած խնդիրների վերաբերյալ (օրինակ՝ ամեն երեքշաբթի, ժամը 15:00-ին): Բացի այդ, կարևոր է ծնողների կարիքի, հետաքրքրությունների և գոհունակության վերաբերյալ պարբերական հետազոտություններ անցկացնել: Ցանկալի է, որ դա արվի նաև նախապատրաստական փուլում: Ընդհանուր առմամբ, այս ուղղությամբ կարող եք օգտագործել տարբեր գործիքներ և՛ առանձին, և՛ որպես միասնական համակարգի մաս: Օրինակ՝ ծնողների հետ պարբերական հանդիպումներ՝ նրանց կարիքը պարզելու համար: Դա կարող է կատարվել ինչպես դպրոցի ներկայացուցչի, այնպես էլ (վստահելիության բարձրացման համար) դպրոցից անկախ անձի կողմից: Այս առումով հնարավոր է ակտիվորեն համագործակցել տարբեր շահագրգիռ կողմերի հետ (տե՛ս՝ համապատասխան գլուխը ՝ «Արտաքին հաղորդակցություն»):

Բացի այդ, ծնողների հետ արդյունավետ հաղորդակցման համար կարող եք օգտագործել ստանդարտացված հարցաթերթիկներ: Առկա ուսուցման առումով ծնողների հարցաշարի օրինակը տե՛ս՝ կից ֆայլում:

Եվ վերջում, որպես գործնական առաջարկություն, այդ խնդիրները լուծելու համար դպրոցը կարող է համագործակցել համայնքային տարբեր կազմակերպությունների հետ, այդ թվում՝ «Ծնողները կրթության համար»: Կազմակերպության նպատակն է բարձրացնել ծնողների ներգրավվածությունը դպրոցական կյանքում և այս առումով աջակցել կրթական համակարգին: Նրանց www.parents.ge կայքում կարող եք գտնել մի շարք օժանդակ նյութեր դպրոցի և ծնողների հարաբերությունների մասին:

Հարաբերություններ համայնքի և այլ շահագրգիռ կողմերի հետ

Համայնքի ներգրավվածության աստիճանի բարձրացման հիմնական պայմաններից մեկը նրանցում դպրոցին պատկանելու զգացողության առաջացումն է: Ծնողների և համայնքի անդամների համար կարևոր է զգալ, որ դպրոցը համայնքի մի մասն է, ծառայում է կրթության ոլորտում նրանց նպատակների իրականացմանը և հաշվի է նստում համայնքի շահերի հետ: Նման վերաբերմունք ձևավորելու համար կարևոր է, որ դպրոցը ակտիվորեն իրազեկի դպրոցական համայնքին և զեկուցի դպրոցում ընթացող գործընթացների մասին: Դպրոցական համայնքի հետ հաղորդակցություն զարգացնելու համար խորհուրդ է տրվում օգտագործել հետևյալ տակտիկական մեթոդները.

- Հաղորդակցության աղբյուրների համապատասխանեցում որոշակի դպրոցական համայնքին և այնպիսի միջոցների ընտրություն, որոնք նրանց համար առավել ընդունելի են և օգտագործման համար՝ հեշտ:
- Հանրաճանաչ հաղորդակցական բառապաշարի օգտագործում և ձեռնպահ մնալ կրթական համակարգի մասնագիտական տերմինաբանությունից:
- Որոշումներ կայացնելուն մասնակցության հնարավորություններ ստեղծել (օրինակ՝ մասնակցություն ոչ ֆորմալ կրթական ծառայությունների ընտրությանը):
- Միանվագ ներկայացվելիք տեղեկատվության քանակի նվազեցում, հետևողականություն և տրամադրման հաճախականության ավելացում:

- Պարբերական հաշվետվողականություն դպրոցում ընթացող գործընթացների, արդյունքների, հաջողությունների և խնդրահարույց հարցերի վերաբերյալ:

Այսպիսի հարաբերությունների հաստատումը դպրոցի և դպրոցական համայնքի միջև կարևոր է ինչպես համավարակի շրջանում ռիսկերը նվազագույնի հասցնելու, այնպես էլ սովորական ժամանակահատվածում դպրոցական գործընթացները հաջողությամբ վարելու համար:

Ինչ վերաբերում է այլ շահագրգիռ կողմերին, ապա ցանկալի է, մինչև ուսումնական տարվա սկսվելը դպրոցը մշակի համապատասխան հաղորդակցության ռազմավարություն, որը պետք է նախատեսի հետևյալը.

1. Շահագրգիռ կողմերի վերլուծություն. Ովքե՞ր են շահագրգիռ կողմերը, և մասնավորապես, ի՞նչն է նրանց հետաքրքրությունը ձեր դպրոցի նկատմամբ: Կարևոր է վերլուծության ընթացքում դպրոցը նախատեսի տեղական համատեքստը և շահագրգիռ կողմերի շահերը: Շահագրգիռ կողմերը կարող են լինել տեղական մունիցիպալիտետները, բարձրագույն ուսումնական հաստատությունները, արհեստագործական քոլեջները, մասնավոր կազմակերպությունները/ ընկերությունները, այլ դպրոցներ, հասարակական կազմակերպություններ, անհատ ֆիզիկական անձինք (մասնագետներ/ փորձագետներ) և այլն:
2. Հաղորդակցական ռազմավարության նպատակը. Ընդհանրապես ի՞նչ նպատակի է ծառայում հաղորդակացական ռազմավարությունը: Բացի այդ, որո՞նք են դպրոցի նպատակները՝ կապված յուրաքանչյուր թիրախային խմբի հետ: Այլ կերպ ասած, ինչո՞ւ է նա սկսում համագործակցել յուրաքանչյուր շահագրգիռ կողմի հետ, ո՞րն է նրա առաջարկը, և ի՞նչ օգուտներ կստանա նա այստեղից:
3. Ռազմավարություն և գործողությունների ծրագիր. Ինչպե՞ս է դպրոցը հաղորդակցվելու շահագրգիռ կողմերի հետ, հետաքրքրելու նրանց: Տարբեր կազմակերպություններին կամ խմբերին անհրաժեշտ է իրենց համապատասխան, հարմարեցված ռազմավարություն: Ռազմավարությունը մշակելուց հետո անհրաժեշտ է սահմանել գործողությունների հատուկ ծրագիր և յուրաքանչյուր քայլի համար պատասխանատու հատուկ անձ:
4. Վերջապես, ցանկալի է, որ տվյալ պլանն ունենա կոնկրետ ստուգիչներ, ըստ որոնց, դուք կարող եք եզրակացնել՝ նպատակը ձեռք բերված է, թե՝ ոչ:

Շահագրգիռ կողմերի հետ համագործակցելուց բացի, դպրոցին խորհուրդ է տրվում զարգացնել **համագործակցություն անհատական կամ կամավոր կազմակերպությունների հետ**: Այս առումով հնարավոր է նաև համագործակցություն համալսարանների հետ: Օրինակ՝ պրակտիկա դպրոցներում, հետդպրոցական գործունեություն (նպատակային/շարունակական ծրագրերի ժամանակ), հետազոտական գործունեության օժանդակություն և/կամ ֆինանսական ռեսուրսների ներգրավում և այլն: Այս առումով կարևոր է, որ դպրոցները լավ պատկերացնեն իրենց հնարավորությունները և այս տիպի նախաձեռնությունների ներուժը: Հետևաբար, բա՛ց եղեք նման նախաձեռնությունների համար:

Լրացուցիչ ֆինանսավորում ներգրավելու համար պետք է հաշվի առնել դպրոցի առանձնահատկությունները և այն համատեքստը, որում այն գործում է: Ընդհանրապես, լավ փորձ է տարբեր արշավներ վարելը, օրինակ, այսպես կոչված **«Crowdfunding», այսինքն՝ հանրային նվիրատվությունների արշավներ**, որոնք պետք է ունենան որոշակի նպատակ և իրականացվեն շատ հստակ ժամկետներում: Այս առումով լավ օրինակ է «**Ներգրավվի՛ր**» հասարակական նախաձեռնությունը, որը շատ աշակերտների է օգնում ինտերնետ հասանելիության կամ տեխնոլոգիայի հասանելիության տեսանկյունից:

Այս ուղղությամբ եղած միջազգային պրակտիկայի համաձայն, դպրոցները կարող են համագործակցել **իրենց շրջանավարտների հետ**: Հնարավոր է ձևավորել շրջանավարտների ցանց, ովքեր ամեն ամիս

որոշակի աջակցություն կցուցաբերեն դպրոցին: Այս համագործակցությունը կարող է ներառել ինչպես ֆինանսական աջակցություն, այնպես էլ մասնակցություն տարբեր տիպի գործողությունների:

Եվ վերջում, հնարավոր է, որ դպրոցները համագործակցեն միջազգային կազմակերպությունների, այդ թվում՝ նրանց տեղական ներկայացուցիչների հետ: Այս առումով ցանկալի է նպատակային համագործակցություն օտար լեզուների ամբիոնների հետ:

Ընդհանրապես, չկա հատուկ բաղադրատոմս, ըստ որի դպրոցը կարող է լրացուցիչ աջակցություն ստանալ: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ տարբեր են դպրոցների առանձնահատկություններն ու համատեքստը: Բացի այդ, պետք է հաշվի առնել դպրոցի ներքին մշակույթը և մարդկային ռեսուրսների առկա հնարավորությունները: Ուստի, յուրաքանչյուր դպրոց պետք է որոշումներ կայացնի՝ ելնելով իր սեփական կարիքից և հնարավորություններից, և նախանշի կոնկրետ ծրագրեր: Մեր երաշխավորությունն է այս ուղղությամբ ավելի ակտիվ լինել, քանի որ դա միշտ օգտակար է դպրոցների համար:

ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅՈՒՆԸ Covid-19-ՈՎ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Ուսուցման գործընթացի սկիզբը և դրա հետ կապված փոփոխությունները կարող են բավականին սթրեսային լինել աշակերտների համար: Հարցվող մեծահասակների առաջին սուր հիշողություններից մեկը հաճախ կապված է դպրոցական առաջին օրերի հետ: Ուսումնական տարվա սկիզբը աշակերտի կյանքում այնպիսի փոփոխություններ է առաջացնում, ինչպիսիք են՝ միջավայրի և ռեժիմի փոփոխությունը, պարտականությունների և պահանջների ավելացումը, ազատ միջավայրից ավելի կառուցքավորված միջավայր տեղափոխվելը, մեծ սպասելիքները և այլն: Վերոհիշյալ բոլորն ինչ-որ սթրեսային ազդեցություն են ունենում աշակերտ վրա:

COVID-19-ով հարուցված համավարակի պայմաններում այս նորություններին ավելանում են լրացուցիչ սթրեսային գործոններ, ինչպիսիք են ուշադրության կենտրոնացումը որոշակի հարցերի նկատմամբ (ջերմության չափում, ախտահանման լուծույթի կիրառում, հեռավորության պահպանում), ծնողների և ուսուցիչների անհանգստության ավելացում և այլն: Եթե աշակերտը ուսուցման տարրական աստիճանում է, այս դեպքում՝ Քովիդ-19-ի պայմաններում արդեն գոյություն ունեցող, ծանոթ առօրյան խախտվում է: Արդյունքում, աշակերտի համար ուսումնական գործընթացը դառնում է էլ ավելի սթրեսային է, քան այլ ժամանակներում: Հիմնական և միջնակարգ աստիճանում գտնվող աշակերտներին հաճախ բնորոշ է կանոններին չհնազանդվելը, պայքարը ինքնահաստատման համար, նրանց համար անչափ կարևոր է իրենց ընկերներին տեսնելը և նրանց հետ չափազանց շատ ժամանակ անցկացնելը, քանի որ հաճախ այս տարիքում ընկերն է նրանց համար հեղինակությունն ու ամենացանկալի անձը, այլ ոչ թե ծնողը: Պետք է նկատի ունենալ նաև, որ այս տարիքի աշակերտների համար տվյալ վիճակը կարող է կապված լինել ապագա ծրագրերի փոփոխությունների հետ: Օրինակ, աշակերտը սովորելու ունենա մեկ այլ երկիր ուսման մեկնելու ծրագիր, որն այս պահին նրա համար անհասկանալի է և անհանգստություն է առաջացնում: Հատկանշական է նաև, որ միջնակարգ և հիմնական աստիճանի աշակերտները ավելի շատ են իրազեկված հարցի վերաբերյալ, իրենք են հայթայթում տեղեկատվություն, կարդում են, դատողություն անում, քննարկում, ընտանիքի և սեփական առողջության հետ կապված անհանգստությունն էլ կարող է բավականին բարձր լինել, ինչը կարող է արտահայտվել դպրոց չգնալու ցանկությամբ:

Ստորև բերված աղյուսակում նկարագրված են արձագանքներ 6-18 տարեկան աշակերտների և դեռահասների սթրեսային վիճակին և դրանք հաղթահարելու տարբեր ռազմավարություններ: Աղյուսակում ներկայացված տեղեկատվությունը հիմնված է Կոլումբիայի համալսարանի և SAVE THE CHILDREN-ի կողմից հրատարակած փաստաթղթի վրա. «Աշակերտների (6-18) կողմից վերապրած սթրեսին արձագանքման սովորական ռեակցիաներ սթրեսից/ ճգնաժամային իրավիճակից հետո կամ և տրավմայի ժամանակ օգտագործվող հաղթահարման ռազմավարություններ»:

Տարիք	Արձագանք սթրեսին	Աջակցության ռազմավարություններ
6-11 տարեկան	• **Ռեգրեսիվ ռեակցիաներ**. չափազանցված շփում (քույր-եղբոր կամ այլ աշակերտների հետ)՝ ծնողի կամ այլ չափահասի ուշադրությունը գրավելու նպատակով, հաճախակի լաց և դժգոհություն, պահանջում է չափահասի ներգրավվածություն այնպիսի վարքի մեջ, որն ինքնուրույն էր կատարում, օրինակ ՝ պահանջում է, որ հագցնեն և կերակրեն իրեն։ • **Ֆիզիոլոգիական արձագանքներ.** գլխացավ, լսողության և տեսողության հետ կապված բողոք, հաճախակի քոր, սրտխառնոց, քնի խանգարում, գիշերային մղձավանջներ։ • **Հուզական/վարքային արձագանքներ.** դպրոցի վախ, ընկերների և փոքր խմբերից դուրս մղում, ընտանիքի անդամների հետ շփման նվազում, բարձր դյուրագրգռություն, կանոններին անհնազանդություն, վախի տարբեր տեսակներ։ Օրինակ՝ եթե ընտանիքի որևէ անդամ հիվանդանա, ինքն էլ կհիվանդանա։ Ագրեսիվ պահվածք, կրկնվող զրույցներ իր համար տրավմատիկ իրադարձությունների մասին, փաստի, փորձի, կորստի կամ հույզերի մասին։	• Լրացուցիչ ուշադրությո՛ւն դարձրեք և ապահովե՛ք նրա ֆիզիկական հարմարավետությունը։ • Դրականորեն ամրապնդե՛ք աշակերտի համար տարիքին համապատասխան վարքագիծը։ • Ժամանակավորապես կրճատե՛ք պահանջն օպտիմալ առաջադիմության նկատմամբ դպրոցում և ակտիվություններում։ • Հավաստիացրե՛ք աշակերտին, որ նրա կարողունակությունը և կատարման որակը կվերադառնան (օրինակ, եթե աշակերտը անհանգստության պատճառով դժվարանում է կենտրոնանացնել ուշադրությունը և սովորել, դրվատե՛ք նրան և ասե՛ք, որ նրա մոտ միշտ լավ է ստացվել այս կոնկրետ ակտիվությունը և համոզված եք, որ նա շուտով լավ կհաղթահարի դա)։ • Ապահովե՛ք կառուցքավորված, բայց ոչ խիստ պահանջներով առօրյա և պարտականություններ։ • Խրախուսե՛ք աշակերտին ֆիզիկական ակտիվությունների։ • Խմբում քննարկե՛ք տարբեր տեսակի հույզեր և դրանք հաղթահարելու ռազմավարություններ (օրինակ՝ քննարկե՛ք խմբում վախը և աշակերտների ներգրավվածությամբ և քննարկումով դատողությո՛ւն արեք վախի հաղթահարման ռազմավարությունների մասին)։ • Ապահովե՛ք խաղային նստաշրջաններ հասակակիցների կամ մեծահասակների հետ։ • Դերախաղի ընթացքում խաղարկե՛ք հիգիենայի պահպանման և անվտանգության կանոնները։ • Անհրաժեշտության դեպքում ծնողի հետ կիսվե՛ք աշակերտի հուզական վիճակի վերաբերյալ ձեր մտահոգություններով և խորհուրդ տվե՛ք դիմել մասնագետի։

Տարիք	Արձագանք սթրեսին	Աջակցության ռազմավարություններ
11-14 տարեկան	• **Ռեգրեսիվ ռեակցիաներ**. չափազանցված շփում (քույր-եղբոր կամ այլ աշակերտների հետ)՝ ծնողի կամ այլ չափահասի ուշադրությունը գրավելու նպատակով, առօրյա սովորական կյանքին հետևելու և պատասխանատվության կատարման դժվարություն: • **Ֆիզիոլոգիական արձագանքներ.** գլխացավ, անորոշ ցավերի բողոք, չափից ավելի ուտել կամ ախորժակի կորուստ, ստամոքսաաղիքային համակարգի բարդություններ, մաշկային խանգարումներ, քնի խանգարում: • **Հուզական/վարքային արձագանքներ.** հասակակիցների հետ ակտիվությունների մեջ ներգրավման դժվարություններ, սովորելու ձեռքբերման մակարդակի թուլացում, ոչ կառուցողական վարք, նախասիրությունների և հանգստի նկատմամբ հետաքրքրության կորուստ (չի հնազանդվում օրենքներին և կանոններին), դժվարություններ հասակակիցների, քույր-եղբայրների և ծնողների հետ հարաբերությունների ընթացքում, ձանձրույթ, ընկճախտ, հակասոցիալական վարք (օրինակ՝ գողություն, ստախոսություն և այլն):	• Լրացուցիչ ուշադրությո՛ւն դարձրեք, ինչն արտահայտվում է դրական շփման և տրամադրության մեջ, այլ ոչ թե՝ վերահսկողության: • Սովորելու նվաճումների մեջ փոփոխությունների դեպքում, համոզե՛ք աշակերտին, որ կվերադառնան իր կարողունակությունը և կատարման որակը: • Ժամանակավորապես նվազեցրե՛ք և հարմարեցրե՛ք դպրոցի և տան պահանջները: • Ապահովե՛ք կառուցքավորված, բայց ոչ խիստ պարտականություններ: • Խրախուսե՛ք աշակերտին զբաղվել ֆիզիկական գործունեությամբ: • Խրախուսե՛ք աշակերտին արտահայտել հույզերը բանավոր և գրավոր: • Խրախուսե՛ք աշակերտին ներգրավվել տարբեր խմբակային կամ դպրոցական ակտիվությունների, ինչը կօգնի նրա հուզական բարեկեցությանը: • Խրախուսե՛ք աշակերտների սոցիալական փոխգործակցությունը: • Հասակակիցների կամ մեծահասակների հետ խաղարկե՛ք անձնական հիգիենայի և անվտանգության կանոններ՝ աշակերտների տարիքային խմբին համապատասխան խաղերով: • Անհրաժեշտության դեպքում, ծնողի հետ կիսվե՛ք աշակերտի հուզական վիճակի վերաբերյալ ձեր մտահոգություններով և խորհուրդ տվե՛ք դիմել մասնագետի:
14-18 ՃԼՃ	• **Ռեգրեսիվ արձագանք**. պատասխանատու վարքի նվազեցում, տարիքային առումով համապատասխան ծնողական վերահսկողության դեմ պայքարի նվազում, սոցիալական հետաքրքրությունների և գործունեությունների նվազում: • **Ֆիզիոլոգիական արձագանքներ**. մարսողական համակարգի և միզապարկի գործողությունների բողոքներ, գլխացավ, մաշկի ցան, քնի խանգարում, անհասկանալի ֆիզիկական բողոքներ կամ հնարավոր ֆիզիկական խնդիրների հնարավոր գոյության չափազանցված վախ:	• Խրախուսե՛ք աշակերտին խոսել իր փորձի մասին ծնողների հետ: • Ժամանակավորապես նվազեցրե՛ք նվաճումների ակնկալիքները դպրոցում և տանը: • Խրախուսե՛ք ներգրավվածությունը / վերադարձը սոցիալական գործունեության: • Խրախուսե՛ք աշակերտի սոցիալական փոխգործակցությունը հասակակիցների կամ մեծահասակների հետ: • Խրախուսե՛ք աշակերտին ներգրավվել տարբեր խմբակային կամ դպրոցական

Տարիք	Արձագանք սթրեսին	Աջակցության ռազմավարություններ
	• **Զգացմունքային / վարքային արձագանք**. ֆիզիկական ակտիվության նկատելի փոփոխություն, օրինակ՝ կտրուկ աճած և նվազած ակտիվություն, անլիարժեքության և անապահովության զգացում, անօգնականության զգացում, հակասոցիալական վարք (գողություն կամ վանդալիզմ), պլանավորված ակտիվությունների նկատմամբ ուշադրության կենտրոնացվածության նվազում, ընկճվածություն:	ակտիվությունների, ինչը օգուտ կբերի նրա հուզական բարեկեցությանը: • Անհրաժեշտության դեպքում ծնողի հետ կիսվե՛ք աշակերտի հուզական վիճակի վերաբերյալ ձեր մտահոգություններով և խորհուրդ տվե՛ք դիմել մասնագետի:

Քանի որ յուրաքանչյուր աշակերտ անհատական է, այդ վարքագծերից զատ կարող են դրսևորվել վարքի այլ տեսակներ, որոնք նշված չեն ցուցակում: Հետևաբար, ուսուցիչը պետք է մշտապես ուշադիր լինի, որպեսզի չվրիպի աշակերտի վարքագծի թեկուզև փոքր փոփոխությունը:

Կարևոր է, որ հիշեք:

Վերը նշված կամ այլ վարքագծի դրսևորման ժամանակ մի՛ կռվեք աշակերտի հետ, երկխոսության, զրույցի, հաղորդակցության, տարբեր մեթոդների օգտագործմամբ փորձե՛ք պարզել նրա հուզական վիճակը և վարքի դրական կառավարումով և/կամ հույզերը կարգավորելու ռազմավարություններով փորձե՛ք օգնել նրան: Ուսուցչի կողմից արձանագրված ակնհայտ նշանների առկայության դեպքում անհրաժեշտ է, որպեսզի նա դիմի ծնողին և դպրոցում եղած մասնագետին (օրինակ ՝ հոգեբանին), որպեսզի ժամանակին միջամտեն և չվտանգվի աշակերտի բարեկեցությունը:

Ինչպե՞ս պատրաստենք աշակերտին դպրոցի համար:

Ընդհանուր հանձնարարականներ.

- Եթե աշակերտը գնում է առաջին դասարան, ուսուցիչը խրախուսում է ծնողի երկխոսությունը աշակերտի հետ: Անհրաժեշտ է հարցեր տալ դպրոցի մասին, այն մասին, թե ինչ է ակնկալում աշակերտը: Նա պետք է ունենա կանխորոշված պատկերացում միջավայրի ռեժիմի, որոշ դեպքերում փոփոխությունների մասին:
- Ուսուցիչը և/կամ ծնողը նախապես աշակերտին ծանոթացնում է դպրոցի կողմից օգտագործվող ուսուցման մոդելը (առկա, հեռավար, հիբրիդային):
- Ուսուցիչը և/կամ ծնողը աշակերտին ծանոթացնում է դասավանդման մոդելի համապատասխան առօրյան ՝ հաշվի առնելով տարբեր կարևոր կետեր, օրինակ.

Առկա ուսուցման մոդել	Հեռավար ուսուցման մոդել	Հիբրիդային ուսուցման մոդել
• Առավոտյան դպրոց ներկայանալու ժամանակը: • Դպրոց մտնելիս իրականացվելիք առօրյա գործողություններ և ընթացակարգեր (եթե աշակերտը տարրական դասարանում է, որտեղ են իրարից բաժանվում ծնողն ու աշակերտը և նմ): • Ով կլինի ուսուցիչը (ցանկալի է անցկացնել նախնական հանդիպում ծնողների հետ շփման կամ ինտերնետի միջոցով): • Մոտավորապես քանի աշակերտ կլինի դասարանում: • Ինչպիսին կլինի դասարանի առօրյան և գործունեությունը: • Ինչպես կանցկացվեն այնպիսի դասերը, ինչպիսին է, օրինակ, ֆիզկուլտուրան: • Ձեռքերը լվանալու և ջերմությունը չափելու հետ կապված ընթացակարգեր: • Գնալու ժամանակը և ընթացակարգերը:	• Ինչ տիպի առցանց հանդիպումներ կլինեն (անհատական, թե միավորված): • Հրահանգներ առցանց միացումների մասին: • Հրահանգներ օֆլայն ստացած ռեսուրսների կամ հեռուստադպրոցի դասերի մասին: • Որ հարթակն է օգտագործում կոնկրետ դպրոցը առցանց հանդիպումների համար: • Աշակերտներին ինչպես են տրամադրվելու առաջադրանքները (մոտավորապես ինչ տիպի ակտիվությունների տրամադրում է պլանավորվում, և ինչպես է տեղի ունենալու առաջադրանքների հանձնումը): • Աշակերտն ինչպես պետք է ներգրավվի առցանց գործողություններում, և ինչ դեր ունի ծնողն այս գործընթացում: • Ինչպես պետք է ստանա ուսուցչի կողմից առցանց մատուցված ռեուրսները: • Ինչպիսին կլինի դասացուցակը (ինչպես առցանց, այնպես էլ առկա ուսուցման ժամանակ:)	• Կրթական գործընթացը առկա և հեռավար ձևերի միջոցով իրականացման բաշխման ժամանակացույց (շաբաթվա օրեր կամ օրվա հատվածներ): • Առկա ձևի օրերի վերաբերյալ տեղեկատվություն համապատասխան դասացուցակից: • Հեռավար ուսուցման օրերի ժամանակ՝ տեղեկատվություն հեռավար դասացուցակից:

- Ուսուցիչը ծնողին տալիս է մի շարք ռազմավարություններ, թե ինչպես կարելի է աշակերտի հետ խոսել վիրուսների, բակտերիաների և դրա հետ կապված ընթացակարգերի մասին՝ նրա տարիքային խմբի համար հասկանալի լեզվով և միջոցներով: Ասվածը հատկապես վերաբերում է տարրական դասարանի աշակերտներին: Այս դեպքում ևս հնարավոր է օգտագործել վերը նշված ռազմավարությունները: Ցանկալի է, որ ուսուցիչը ծնողին տրամադրի աշակերտի տարիքին և զարգացմանը համապատասխան գրականություն տվյալ թեմայի մասին կամ մատնանշի կայք, որտեղ տեղադրված են նմանատիպ նյութեր (նկարներ, էլեկտրոնային գիրք, տեսանյութ և այլն):
- Կարևոր է, որ ուսուցիչը և ծնողը աշակերտին տրամադրեն դպրոցի և դպրոցում իրականացված փոփոխությունների հետ կապված իրականությանը հնարավորինս մոտ տեղեկատվություն, հակառակ դեպքում աշակերտի սպասելիքները տարբեր կլինեն, և նա կհիասթափվի, ինչն իր հերթին կարտացոլվի աշակերտի ներգրավվածության և վարքի վրա: Համապատասխան սպասումը նպաստում է աշակերտի ներգրավվածությանը, դրական վարքին և կանոնների և ռեժիմի նկատմամբ դրական վերաբեմունքի գոյությանը:
- Հիմնական և միջնակարգ աստիճանների աշակերտների հետ կապված՝ ցանկալի է ուսուցիչը ծնողին երաշխավորություն տրամադրի, թե ինչի վրա է անհրաժեշտ կենտրոնանալ (օրինակ՝ քաղաքացիական պատասխանատվություն), և որքան կարևոր է պահպանել կանոնները, որպեսզի պաշտպանված լինի ընտանիքի տարեց անդամների կամ հարազատների առողջությունը:

Ուսումնական գործընթացի սկիզբը

Հանձնարարականներ ուսուցիչների համար.

- Ուսումնական տարվա առաջին դասերը ցանկալի է տրամադրել դասարանում այնպիսի ակտիվությունների, ինչպիսիք են՝ ուսանման և ուսուցման ձևաչափի հետ կապված փոփոխությունների քննարկումը, խմբային քննարկումները անձնական հիգիենայի, անվտանգության վերաբերյալ (ինչու է կարևոր պահպանել կանոնները, ինչպես ենք պաշտպանվում բակտերիաներից և վիրուսներից): Նշվածների համար տարրական դասարաններում կարող են օգտագործվել մուլտֆիլմեր, անիմացիաներ, պատմություններ: Դեռահասների հետ ցանկալի է իրականացնել խմբային քննարկումներ, անհատական զրույցներ, ուղղորդում մասնագետի մոտ (անհրաժեշտության դեպքում):
- Հիմնական և միջնակարգ աստիճանների աշակերտների մոտ կարևոր է կենտրոնանալ քաղաքացիական պատասխանատվության, այլընտրանքների վրա, թե ինչպես է հնարավոր, որ աշակերտները աջակցեն տարեցներին: Հնարավոր է պլանավորել որոշակի նախագծեր, որոնք կապված կլինեն այս թեմայի հետ:
- Կարևոր է, որ ուսուցիչները հիմնական և միջնակարգ աստիճանների աշակերտների մոտ շեշտադրումն անեն այնպիսի թեմաների վրա, ինչպիսիք են աջակցությունը, ուրիշներին օգնելը, տարբեր իրավիճակներում արձագանքելը (օրինակ ՝ ընկերը հիվանդացել է, դպրոցում ինչ-որ մեկը ջերմություն ունի և այլն):
- Հիմնական և միջնակարգ աստիճանի աշակերտները, ինչպես վերը նշվեց, կարող են բողոքարկել կանոնների պահպանումն այն հիմնավորմամբ, թե՝ «ինձ ոչինչ չի պատահի, եթե նույնիսկ վարակվեմ», «իմ ընտանիքում բոլորը երիտասարդ են» և այլն: Նրանց հետ անհրաժեշտ են քննարկումներ, որ չնայած նման համոզմունքներին, անհրաժեշտ է պահպանել առկա կանոններն ու ռեժիմները բազմաթիվ մարդկանց անվտանգության համար:
- Ուսումնական գործընթացի սկզբնական փուլում խորհուրդ է տրվում ժամանակ տրամադրել դասարանում փորձի փոխանակման, խմբային քննարկումների թեմաներին՝ «Անվտանգության պահպանում», «Սթրեսը հաղթահարելու ռազմավարություններ» (աշակերտների ռազմավարություններ), բայց հարկ է նշել, որ դասարանում բուլիինգի նվազեցման և ուսուցչի կողմից պատշաճ ֆասիլիտացիայի համար լավ կլինի, որ նա խորհրդատվություն անցնի համապատասխան մասնագետի մոտ, օրինակ՝ դպրոցի հոգեբանի, Մանդատային ծառայությանը կից գործող Հոգեբանական օգնության հոգեբանների, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բազմամասնագիտական թիմի հոգեբանների մոտ: Նպատակահարմար է տվյալ հանդիպումների ֆասիլիտացիան այս մասնագետների կողմից, ուսուցչի ներգրավվածությամբ:
- Ցանկալի է, որ ուսուցիչները խորհրդատվություն ստանան հոգեբաններից (դպրոցի հոգեբան, Մանդատային ծառայությանը կից գործող Հոգեբանական օգնության հոգեբաններ, Նախարարության բազմամասնագիտական թիմի հոգեբաններ), որպեսզի տիրապետեն աշակերտների մոտ սթրեսի նշաններ հայտնաբերելու և դրանց դիմակայելու որոշ մարտավարությունների, կամ անհրաժեշտության դեպքում աշակերտին և ծնողին ուղղորդեն համապատասխան մասնագետի մոտ:
- Կարևոր է, որ դպրոցի ժամանակացույցի, դպրոցի կանոնների և ռեժիմի մասին ուսուցչի կողմից տրամադրված տեղեկատվությանը տարրական դասարանների աշակերտները և նրանց ծնողները միասին ծանոթանան: Այս տեղեկատվությունը կարող է ներառել հետևյալը՝ առավոտյան արթնանալու ժամ, առավոտյան ռեժիմ, դպրոց գնալու ժամանակ, դպրոց մտնելու ընթացակարգեր, ով է լինելու ուսուցիչը (լուսանկար, հեռախոսային կամ ինտերնետային հանդիպում նախօրոք), դասարանի աշակերտների քանակ (նախընտրելի է՝ մի քանիսը նախապես միմյանց հետ ծանոթանան), դասասենյակ և դպրոցի կանոններ, բակ դուրս գնալու, ձեռքերը լվանալու ընթացակարգեր: Ծնողի ներգրավումը հատկապես կարևոր է տարրական դասարանների և հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների համար:

Ծնողների ներգրավվածությունը և հոգեբանական-սոցիալական աջակցության կարևորությունը

Ծնողները հատկապես անհանգստանում են, երբ աշակերտն առաջին անգամ է դպրոց գնում: Այս պահին ծնողը չգիտի, թե ինչպես կհամակերպվի աշակերտն ուսուցչին, ուսումնական գործընթացին, հասակակիցներին, արդյոք նա կկարողանա հաղթահարել ուսումնական ծրագիրը և այլն: COVID-19-ի համավարակով հարուցված վիճակի պատճառով հիշյալ սթրեսի հարցերին գումարվում է նաև աշակերտի ֆիզիկական և հուզական անվտանգությունը: Ծնողն անհանգստանում է այն բանի համար, թե որքանով է իր երեխան պաշտպանված դպրոցում ֆիզիկապես և հուզականորեն: Հետևաբար, յուրաքանչյուր ծնող, որի երեխան պատրաստվում է նոր ուսումնական տարվան, որոշակի աջակցության կարիք ունի, որպեսզի նախապես ծանոթանա մի շարք հարցերի, համապատասխան սպասելիքներ ստեղծի՝ կապված ուսումնական գործընթացի հետ, և պատրաստակամություն՝ համավարակի պատճառով ստեղծված անսովոր կանոնների և կանոնակարգերի շրջանակներում գործելու առումով:

Ծնողների ավելացած ներգրավվածության համար դպրոցի ղեկավարությունը պետք է նրան տեղեկացնի ուսուցման ընտրված ձևի և ռազմավարության ընդհանուր կանոնների, փոփոխված ռեժիմի (որը հիմնված է Առողջապահության նախարարության կողմից մշակված հանձնարարականների և կանոնակարգերի վրա) մասին: Կարևոր է, որ ապագա աշակերտը և / կամ նրա մասին հոգացող անձինք պատշաճ կերպով տեղեկացված լինեն ինչպես առկա, այնպես էլ սպասվող փոփոխությունների մասին, ինչն ավելի կանխատեսելի է դարձնում առօրյան և ձևավորում ինչպես աշակերտի ընտանիքի անդամների, այնպես էլ դպրոցի անձնակազմի պատշաճ պատրաստվածությունն ու մոբիլիզացումը:

Ինչպե՞ս է աշակերտը դպրոցի համար պատրաստվում ծնողի աջակցությամբ:

Հուզական բարեկեցությունը աշակերտի կյանքի բոլոր փուլերում նրա զարգացման համար ամենակարևոր բաղադրիչներից մեկն է: Աջակցության, անվտանգության, երջանկության զգացողության առկայության դեպքում ավելանում է աշակերտի մոտիվացիան ներգրավվել այս կամ այն գործունեությանը, իրեն անվտանգ զգալ տարբեր միջավայրերում, փորձեր անցկացնել, լինել հետաքրքրասեր և հետաքրքրված նորությունների նկատմամբ: Եթե աշակերտն ունի անվտանգության և նոր միջավայրին պատկանելության զգացողություն, իրեն հարմարավետ է զգում և ունի բարեկեցության զգացողություն, նա բարյացակամություն է ցուցաբերում ինչպես ուսուցիչների, այնպես էլ հասակակիցների նկատմամբ և պատրաստ է ներգրավվել առաջարկվող ակտիվություններին:

Կարևոր է, որ հուզական բարեկեցության, անվտանգության և պատկանելության զգացողություն ստեղծելու համար սկսել հոգ տանել նախքան դպրոց գնալը: Դպրոցի նկատմամբ առկա նախատրամադրվածությունը ու պատրաստվածությունը ուսումնական հաստատության և դրա ռեժիմի նկատմամբ ոչ միայն նպաստում են աշակերտի հուզական բարեկեցությանը, այլև ուղղակիորեն արտացոլվում են ուսումնական գործընթացի մեջ նրա ներգրավվածության վրա: Որքան ավելի պատրաստված է աշակերտը, գիտի ռեժիմը, սպասվող գործողությունները, գիտի, թե ովքեր կլինեն գործընթացում ներգրավված մարդիկ և ինչ ակնկալիքներ գոյություն ունեն միջավայրի համար, այնքան ավելի արագ և առանց ցավի է նա հարմարվում նոր միջավայրին, նվազում է նորությամբ (միջավայր, մարդիկ) առաջացած սթրեսը, հաճույքով է ներգրավվում ուսումնական գործընթացի մեջ: COVID-19-ով հարուցված վիճակի պայմաններում էլ ավելի կարևոր է աշակերտի իրազեկումը, թե ուսումնական հաստատությունում ինչ միջավայր, ակտիվություններ, ռեժիմ և ընթացակարգեր են սպասվում նրան: Դրա համար դպրոցի ներկայացուցիչը պետք է մանրամասն տեղեկություններ տրամադրի ծնողին և օգնի նրան նախապատրաստել աշակերտին:

Կրթական գործընթացում ինչպե՞ս ստեղծենք առավելագույնս բարյացակամ հուզական միջավայր:

Անհրաժեշտ է հիշել, որ դպրոցի նպատակը ոչ միայն ակադեմիական գիտելիք տալն է, այլ նաև, տարբեր ճանաչողական, գործառնական և, առաջին հերթին, աշակերտի հուզական բարեկեցության և սոցիալական հմտությունների խթանումը: Հետևաբար, չնայած առկա իրավիճակի պատճառով առաջացած ֆիզիկական հեռավորությանը, դպրոցի հիմնական խնդիրներից մեկը աշակերտների միջև սոցիալական փոխգործակցության և հաղորդակցության պահպանումն ու խրախուսումն է: Խմբին պատկանելու զգացողությունը մեծացնելու համար անհրաժեշտ է, որ աշակերտը սոցիալական փոխգործողություն հաստատի հասակակիցների հետ: Պատկանելության զգացողությունը բազիսային և գլխավոր զգացողություններից մեկն է, որը որոշում է աշակերտի հուզական բարեկեցությունը որոշակի համատեքստում: Հիմնական և ավագ դպրոցի աշակերտները մեծ ցանկություն ունեն սոցիալական փոխգործակցության, նրանց համար հատկապես կարևոր է հասակակիցների հետ ակտիվ շփումը: Այս առումով դպրոցի դերը լինելու է անվտանգ փոխագործակցության և հաղորդակցման հմտությունների զարգացումը, հատկապես դպրոցի շրջանակներում:

Հանձնարարականներ ուսուցիչների համար

- Տարրական դասարաններում պատին փակցրե՛ք օրվա ռեժիմն ու կանոնները պատկերող պատկերներ (օրինակ՝ մուտքի մոտ ջերմաստիճանն են չափում, ապա ախտահանող լուծույթ օգտագործում, ուտելուց առաջ և հետո լվանում են ձեռքերը և այլն), քանի որ տեսողական օժանդակ միջոցներն օգնում են աշակերտին տեղեկատվության յուրացման մեջ: Տվյալ նյութն ավելի հիշարժան կլինի, եթե այն ստեղծեք աշակերտի հետ գունավոր թերթերի, մատիտների ու նկարների միջոցով: Այսպիսով, աշակերտն ինքը կներգրավվի կանոնների ստեղծման ու մշակման գործընթացում և ավելի շատ նկատի կունենա դրանք: Ավելի ավագ աշակերտների մոտ կիրառե՛ք գրավոր ձևով պատին փակցված կանոններ, որոնք նույնպես կստեղծեք նրանց հետ մեկտեղ:
- Խրախուսե՛ք աշակերտներին, որ բանավոր հաղորդակցություն հաստատեն: Դասարանում փոքր խմբերում կատարե՛ք գործողություններ, որտեղ աշակերտները հնարավորություն կունենան պահպանելու հերթը, հաշվի առնելու այլոց դիրքորոշումը, արտահայտելու իրենց սեփական դիրքորոշումը, սերտելու կանոնների պահպանումը: Ավագ տարիքի աշակերտների մոտ օգտագործե՛ք տարբեր նախագծեր փոքր խմբերում, որոնք նրանց կօգնեն իրար հետ դրական շփման հաստատման մեջ:
- Աշակերտին տվե՛ք հույզեր արտահայտելու հնարավորություն: Պատասխանե՛ք, եթե նա պարբերաբար հարց է տալիս ձեռքերը լվանալու և ջերմաստիճանը չափելու մասին: Միևնույն հարցը հաճախ տալը կարող է նշանակել բարձր անհանգստություն, և ձեր պատասխանները, բարյացակամությունը, հուզական փոխանակումն ու ապրումակցումը այս պահին հանգստացնող ազդեցություն կունենան նրա վրա:
- Ավագ տարիքի աշակերտների մոտ ի հայտ եկած տարբեր դժվար վարքագծի դեպքում, փորձե՛ք նրանց հետ դրական հաղորդակցություն հաստատել, լսել նրանց: COVID-19-ով հարուցված անհանգստության հետ կապված՝ դուք կարող եք ստեղծել անանուն տուփ, որտեղ աշակերտները կգցեն իրենց վախերը, սթրեսները, հույզերը, որոնց մեխանիզմները քննարկում է ամբողջ դասարանը (այդ գործունեության համար պատասխանատվությունը կարող է ստանձնել դպրոցի հոգեբանը, եթե այդպիսին կա):
- Ավագ տարիքի աշակերտների հետ քննարկե՛ք այնպիսի հարցեր, ինչպիսիք են ապրումակցումը, կարեկցանքը, աջակցությունը տարբեր իրավիճակներում (օրինակ, եթե ուսման ընթացքում աշակերտներից մեկի մոտ ի հայտ է եկել COVID-19-ի կամ վիրուսի մեկ այլ տեսակ):

Եթե դպրոցում գտնվելու ժամանակ աշակերտի մոտ արձանագրվել է բարձր ջերմություն (37⁰ կամ ավելի)

Վրաստանի առողջապահական կանոնակարգերի համաձայն, եթե դպրոցում գտնվող աշակերտի մոտ ջերմություն է արձանագրվում, ուսուցիչը պարտավոր է նրան տեղափոխել մեկուսացման սենյակ: Մեկուսացման ժամանակ նկատի՛ ունեցեք հետևյալը.

- Աշակերտին դասարանից դո՛ւրս հանեք հանդարտ գործողություններով և հանգիստ վարվելակերպով:
- Աշակերտին բացատրե՛ք, որ իրեն սենյակից դուրս տանելու պատճառն այն է, որ նորից պետք է վերստուգվի ջերմությունը: Դասարանում, մնացած աշակերտների կողմից հարցեր տալու դեպքում, անում եք նույն պարզաբանումը:
- Եթե ավելի ավագ աշակերտ ունի ջերմություն, հիշե՛ք, որ նրա վարքագիծը, երբ առաջարկվում է դուրս գալ դասարանից, կարող է հակասական լինել, կարող է բողոքել, պատասխանել ձեզ և այլն: Եղե՛ք համբերատար, հիշեցրե՛ք նրան դպրոցի կանոնների, դասարանից դուրս գնալու անհրաժեշտության մասին, փորձե՛ք լինել դրական և աջակցող (աշակերտին կարող է տիրել վախի, տագնապի զգացողություն՝ արձանագրված ջերմության ֆոնին):
- Մեկուսացման սենյակում որոշ ժամանակ մնալուց հետո հնարավոր է աշակերտը խնդրի սենյակից կամ դպրոցից ինքնուրույն դուրս գնալ: Այս դեպքում նրան կրկին բացատրե՛ք դպրոցի և Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կողմից կազմված կանոնները, հիշեցրե՛ք նրա, որպես քաղաքացու, պարտավորությունները, եղե՛ք ապրումակցող, սրտացավ և խնդրե՛ք ձեզ հետ միասին սպասել ծնողին:
- Փորձե՛ք աշակերտի մասին տեղեկությունը ծնողին հաղորդել առանց աշակերտի, սակայն, եթե աշակերտը խնդրում է ձեզ կապ հաստատել և զրուցել ծնողի հետ, նրան տվե՛ք դրա հնարավորություն:
- Ծնողին տեղեկատվություն տրամադրելիս՝ պահպանե՛ք հանգստություն:
- Աշակերտի հետ հանգիստ սպասե՛ք ծնողին:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՀԱՏՈՒԿ ԿՐԹԱԿԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՇԱԿԵՐՏՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՀԱՄԱՐ

Ուղեցույցի տվյալ մասում վերլուծված են լրացուցիչ հանձնարարականներ, որոնց նախատեսումը նպատակահարմար է երկրում ստեղծված համաճարակաբանական իրավիճակի պայմաններում հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների ուսումնական գործընթացն արդյունավետ և անվտանգ կազմակերպելու համար:

Ուղեցույցում վերլուծված են ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման հանգուցային խնդիրները.
(ա) առկա ուսուցման վերադառնալու դեպքում.
(բ) հեռավար ուսուցման դեպքում՝ լինի դա ամբողջովին առցանց, տարաժամանակյա թե հիբրիդային ձևով ընթացող կրթական գործընթաց:*

Որոշումն այն մասին, թե կրթության որ ձևը պետք է իրականացվի տվյալ պահին, հիմնվում է երկրում առկա իրավիճակի նախատեսմամբ Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման հանձնարարականներին (տե՛ս՝. . Վրաստանի հանրակրթական հաստատություններում ուսումնական գործընթացը հեռավար վարելու և ստացված արդյունքները գնահատելու կարգ):

(ա) Վերադարձ առկա ուսուցման

Այսօր Վրաստանի հանրային դպրոցները վերադառնում են առկա ուսումնական գործընթացի: Նրա նախատեսմամբ, որ հանրային դպրոցները պարտավոր են ուսումնական միջավայրում և գործընթացներում նոր կանոնակարգեր և կանոններ հաստատել, առանձնահատուկ նշանակություն է ձեռք բերում նախապատրաստական փուլը նախքան կրթության մեկնարկը:

Այս փուլի բաղկացուցիչ է դպրոցում նույնականացված հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների կարիքի խորքային վերլուծությունը և առկա ուսումնական գործընթացի անհատական պլանավորումը/կազմակերպումը:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող յուրաքանչյուր աշակերտի հարցի անհատական քննարկման համար կարևոր է, որ դպրոցի ղեկավարությունը կազմի ժամանակացույց և կազմակերպի աշխատանքային խմբի հանդիպումներ ուսումնառության մեկնարկից առնվազն մեկ շաբաթ առաջ: Այս հանդիպումներին պետք է մասնակցեն աշակերտի դասղեկը, առարկայի ուսուցիչները, հատուկ մանկավարժը/հոգեբանը, ծնողը և աշակերտի ուսման գործընթացում ներգրավված այլ մասնագետներ:

Հանդիպումները կարող են անցկացվել ինչպես առկա, այնպես էլ հեռավար կարգով ՝ օգտագործելով էլեկտրոնային հարթակներ (օրինակ՝ եթե ծնողը տեղում չէ, մինչ ուսումնական տարվա մեկնարկը):

* Վրաստանի հանրակրթական հաստատություններում ուսումնական գործընթացը հեռավար վարելու և ստացված արդյունքները գնահատելու կարգ:

Առանձնահատուկ կարևորություն ունի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող այն աշակերտների ուսման գործընթացի պլանավորումը, որոնք սկսում են իրենց ուսումը: Առաջին դասարանցիները և նրանց ծնողները կարող են ավելի շատ աջակցության և նախապատրաստման կարիք ունենալ այս ուսումնական տարվա համար: Ծնողները փորձի բացակայության պատճառով ունեն հետևյալ հարցերը. ինչպես կկարողանա զավակը հարմարվել նոր միջավայրին և կյանքի նոր փուլին, ինչ աջակցություն կստանա, ով կլինի նրա աջակիցը, որքանով է դպրոցը անվտանգ նրա համար և այլն:

Համավարակի պայմաններում դպրոցում արդյունավետ անցումային հարցերի մանրամասն ծանոթանալու համար ծանոթացեք ուղեցույցին. «Ես գնում եմ դպրոց. Ինչպես պատրաստվել անցումին դպրոց»:*

Հանդիպումների նպատակն է քննարկել անվտանգության խնդիրները, աշակերտի հոգեբանական-հուզական վիճակը, ակադեմիական առաջընթացը և մշակել ուսումնական գործընթացի անվտանգ և աշակերտակենտրոն մեկնարկի ու իրականացման գործողությունների համաձայնեցված ծրագիր:

Քննարկումը կվերաբերի հետևյալ հարցերին.

- Անվտանգության հարցեր
- Անվտանգության կանոնակարգերի ծանոթացում ծնողներին:**

Նպատակահարմար է առկա հանդիպման ժամանակ ծնողներին մանրամասն տեղեկատվություն տրամադրել նոր լրացուցիչ կանոնակարգերի վերաբերյալ և դրանք մշակել քննարկման ձևաչափով:

Որպեսզի ծնողների համար սահմանված կանոնակարգերը մատչելի լինեն, կարևոր է, որ դպրոցը լրացուցիչ ապահովի նշված կանոնակարգերի հարմարեցում ծնողի համար հասանելի տեղեկատվական տեքստի տեսքով: Նախապատվությունը տրվում է տեքստի էլեկտրոնային տարբերակը տարածելուն: Եթե ծնողը չունի էլեկտրոնային փոստ, նրան կտրվի տպագիր փաստաթուղթ:

Հանդիպմանը դպրոցի ներկայացուցիչները պետք է կենտրոնացված լինեն ոչ միայն տեղեկատվության փոխանցման, այլ նաև վերստուգման վրա, որպեսզի ծնողին տրամադրվող տեղեկատվությունը հասկանալի և ընդունելի լինի: Կարևոր է, որ ծնողն ունենա իր համար հրատապ հարցեր տալու և սպառիչ պատասխաններ ստանալու հնարավորություն: Եթե ծնողի կողմից տրված հարցերը դուրս են դպրոցի ներկայացուցիչների իրավասությունից, ապա նպատակահարմար է որոշել նախադպրոցական հաստատության այն աշխատողին, որն ակտիվորեն կճշտի ծնողին հետաքրքրող հարցերը և սահմանված ժամկետում կտրամադրի պատասխաններ:

Աշակերտի առողջության հետ կապված հարցերի քննարկում

Նպատակահարմար է, որ դպրոցը վերստուգի. արդյոք աշակերտը պատկանում է բարձր ռիսկի խմբի՝ առողջական վիճակի նախատեսմամբ: Արդյոք չեն սահմանվել անվտանգության պահպանման հատուկ հանձնարարականներ աշակերտի բուժող բժշկի կողմից, որոնք պետք է նկատի առնվեն դպրոցի կողմից: Ծնողը չի պահանջում արդյոք աշակերտին տեղափոխել տանը սովորելու/հեռավար ձևաչափի, եթե պահանջում է, ապա ինչն է դրա պատճառը և այլն:

* http://inclusion.ge/res/docs/2020071518513480506.pdf

** Վրաստանի գրավյալ տարածքներից տեղահանված անձանց, աշխատանքի, առողջապահության և սոցապահովման նախարարության կանոնակարգեր. Նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) հարուցված վարակի հետ (COVID-19) կապված ընդհանուր հանձնարարականներ հանրակրթական հաստատությունների համար:

Հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի համար, ելնելով նրա անհատական կարիքից, հնարավոր է օգտագործել հեռավար կամ տնային ուսուցման մոդելը՝ անկախ այն բանից, որ դպրոցը առկա ուսուցման է կողմնորոշված: Այս դեպքում որոշումը պետք է հիմնված լինի աշակերտի կարիքի և առողջության վիճակի համապարփակ ուսումնասիրության վրա, և որոշումը պետք է ընդունի դպրոցը բուժող բժշկի հանձնարարականների հիման վրա՝ ներառական կրթության բազմամասնագիտական թիմի մասնակցությամբ:

Աջակցող մասնագետի որոշում

Կրթական գործընթացի պլանավորման ժամանակ նպատակահարմար է, որ մասնագետները և ծնողները գնահատեն աշակերտի հնարավորությունները և սահմանեն, թե կանոնակարգերի պահպանման ժամանակ որքանով ունի աշակերտը հասակակիցների համեմատ ավել աջակցության կարիք:

Անհրաժեշտության դեպքում կարևոր է նույնականացնել այն մասնագետներին, որոնք կաջակցեն աշակերտին անվտանգ հեռավորության պահպանման, հիգիենիկ ընթացակարգերի, վարվելակերպի կանոնների պահպանման գործընթացում և/կամ կմշտադիտարկեն աշակերտի կողմից հիշյալ ընթացակարգերի պահպանումը:

Եթե աշակերտին նշանակվի հատուկ կրթական կարիք ունեցող անձի օգնական, վերջինս հոգ կտանի դպրոցում գտնվելու ընթացքում աշակերտի՝ հեռավորության և հիգիենիկ ընթացակարգերի պահպանման մասին ոչ միայն դասարանում (դասի ժամանակ), այլև առհասարակ:

Այլ դեպքերում խորհուրդ է տրվում, որ դպրոցը ծնողի հետ որոշում կայացնի, թե ով կստանձնի այդ պատասխանատվությունը՝ դասղեկը, որևէ առարկայի ուսուցիչ կամ հատուկ մանկավարժ / հոգեբան: Եթե դպրոցում կան մի քանի հատուկ մանկավարժներ, այդ խնդիրները համակարգելու համար խորհուրդ է տրվում ապահովել նրանց կապը կոնկրետ աշակերտի հետ: Միևնույն ժամանակ, եթե դպրոցում կան հատուկ կրթության կարիք ունեցող մեծ թվով աշակերտներ, և նրանց մեծ մասը ինտենսիվ աջակցության կարիք ունի, այդ խնդիրները լուծելու համար դպրոցի ղեկավարությունը կարող է օգտագործել այլ ուսուցիչների (կամ այլ աշակերտի անհատական օգնականի) ռեսուրսները:

Միևնույն ժամանակ, հիգիենիկ ընթացակարգերի և դրանց հաճախականությունը որոշելու համար պետք է նկատի առնվի օժանդակ սարքերի (անվասայլակ, քայլակ, ակնոցներ) օգտագործման հարցը: Լրացուցիչ ախտահանման համար կարող են պահանջվել նաև օժանդակ նյութեր: Որոշ աշակերտների կարող է անհրաժեշտ լինի ավելի ինտենսիվ ֆիզիկական շփում շրջապատի հետ (տեղաշարժման կամ/և տեսողության դժվարության պատճառով ինտենսիվ կերպով հենվել կամ շոշափելով դիպչել մակերեսներին): Ստորև նմուշի տեսքով ներկայացված է աղյուսակ, որի նման կարելի է ստեղծել հիգիենիկ ընթացակարգերի պահպանման նշումների ձև, որը կօգնի ուսուցչին/հկկու անձի օգնականին կազմակերպված տեսք հաղորդել աշակերտի անձնական հիգիենայի պահպանմանը:

Իհարկե, նման աղյուսակ ստեղծվում է աշխատանքային խմբի կողմից՝ աշակերտների կարիքը տեսողականորեն տեսնելու և ռեսուրսները խելամիտ կերպով բաշխելու նպատակով: Կարևոր է, որ աղյուսակը պահվի ամբողջությամբ գաղտնի:

Ծնողին պետք է փոխանցվեն այն անձի կոնտակտային տվյալները, ով աշակերտին ցուցաբերում է տվյալ աջակցությունը:

Աշակերտ	Հիգիենիկ ընթացակարգերի պահպանմանն աջակցելու համար պատասխանատու անձ՝ պաշտոնը, անունը/ազգանունը	Ծանոթություն
Ա.Բ		Նկատվում է առատ թքարտադրություն, անհրաժեշտ է 20 րոպեն մեկ ձեռքերի ախտահանում:
Գ.Դ.		Տեղաշարժվում է անվասայլակով, անհրաժեշտ է սայլակի ախտահանում ձեռքով դիպչելու տեղերում:
Է.Վ.		....

Աշակերտի իրազեկում նոր կանոններին մասին և նրա նախապատրաստում

Նպատակահարմար է, որ աշխատանքային հանդիպումների ժամանակ համաձայնեցվի, թե ինչ ռազմավարությամբ, ինչ ձևով և ում կողմից տեղի կունենա աշակերտի իրազեկումնոր կանոնակարգերի և վարքի կանոնների մասին և նրա նախապատրաստում:

Բացի նոր կանոնները սովորելուց, աշակերտին պետք է բացատրել, որ նրա հետ աշխատող մասնագետը (հկկու անձի օգնական, հատուկ մանկավարժ կամ հոգեբան) կօգտագործի դիմակ, եթե աշխատանքը պահանջում է մեկ մետրից ավելի մոտենալ, իսկ ձեռքերով շփման անհրաժեշտության դեպքում կօգտագործի մեկանգամյա ձեռնոցներ (Տե՛ս «Նոր կորոնավիրուսով (SARS-CoV-2) հարուցված վարակի (COVID-19) հետ կապված ընդհանուր հանձնարարականներ հանրակրթական դպրոցների համար): Կարևոր է, որ իրազեկման արդյունքում աշակերտի մոտ այս փոփոխություններն ընդունելու համար պատրաստակամություն առաջանա (հնարավոր է դա անել տարատեսակ գործողությունների միջոցով, օգտագործելով տեսողական նյութ):

Աշակերտի իրազեկվածության համար պատասխանատվությունը կարող է ստանձնել ինքը՝ ծնողը, դասղեկը կամ հատուկ մանկավարժը/հոգեբանը: Կարևորն է, որ աշակերտը նախապես ստանա տեղեկություններ դպրոցում հաստատված նոր կանոնների մասին և պատշաճ կերպով տեղեկացված լինի:

- Աշակերտին պետք է տեղեկատվությունը տրամադրվի՝ նկատի առնելով նրա տեղեկատվության ընկալման և գիտակցման առանձնահատկությունները:
- Նոր վարք սովորելը կարող է սկսվել տնային պայմաններում և ամրապնդվել այն միջավայրում, որտեղ այն պետք է կիրառվի:
- Մինչև կրթական գործընթացի սկսվելը հնարավոր է անհրաժեշտ դառնա, որ աշակերտը մի քանի անգամ այցելի դպրոց ՝ ախտահանիչ գորգիկի, հեռավորության գծանշումների նույնականացման, ջերմության չափման ընթացակարգի և այլն ծանոթանալու համար:
- Առաջարկվում է նաև, որ դպրոցն աշակերտների համար մատչելի ձևով ունենա կազմած անվտանգության կանոնների վերաբերյալ տեղեկատվական գրքույկ, որը կփոխանցի ծնողին՝ աշակերտին ծանոթացնելու նպատակով:
- Որոշ դեպքերում հնարավոր է անհրաժեշտ լինի աշակերտի համար անհատապես կազմել այս տեղեկատվական գրքույկը (օրինակ՝ նկարների փոխարեն օգտագործել լուսանկարներ, տառատեսակը մեծացնել, բրայլով տպել և այլն):

Կոնտակտային անձի նույնականացում

Դպրոցի կողմից կազմակերպված հանդիպումներին անհրաժեշտ է, որ ծնողը որոշի երկու անձի, որոնց հետ կկապվեն այն դեպքում, եթե աշակերտը դպրոցում գտնվելու ընթացքում որոշակի ախտանիշներ է ունենում: Երկու անձի նույնականացումը կարևոր է նրա համար, որ մեկ անձի անհասանելի լինելու դեպքում կապվեն երկրորդ անձի հետ:

Հեռավար ուսուցման մոդելների հնարավորությունների քննարկում

Տվյալ հանդիպման ժամանակ հնարավոր է նաև սկսել զրուցել, թե ինչպես կկազմակերպվի կրթական գործընթացն այն դեպքում, եթե աշակերտը ստիպված լինի տեղափոխվել կրթության հեռավար ձևի, արդյոք ընտանիքի անդամները կարիք ունեն վերապատրաստվելու թվային տեխնոլոգիաների օգտագործման համար, կրթական գործընթացի կազմակերպման, հրահանգների տրամադրման, վարվելակերպի կառավարման առումով:

Հարցերը, որոնք պետք է վերլուծվեն հեռավար ուսումնական գործընթացի պլանավորման համար տրված են Ուղեցույցի հաջորդ գլխում:

Աշխատանքային հանդիպման ժամանակ անհրաժեշտ է անդրադարձ կատարել նրան, թե ինչպես է տեղի ունեցել անցյալ կիսամյակի ճգնաժամային իրավիճակում կրթական գործընթացը և վերլուծել ինչպես աշակերտի համամասնակցությունն ու առաջընթացը, այնպես էլ նրա հոգեբանական-հուզական վիճակը:

Իդեալական դեպքում, այս խնդիրները պետք է գնահատվեին աշակերտների հետ աշխատող թիմի կողմից անցյալ տարվա վերջին: Հետևաբար, եթե դպրոցին հայտնի են այս հարցերը, ապա այս փուլում նրանց համար կարևոր կլինի պարզել, թե ինչպես է ընթացել արձակուրդների գործընթացը, արդյոք աշակերտը որոշակի փոփոխություններ չի կրել զարգացման դինամիկայի և հոգեբանական-հուզական վիճակի առումով. ստացած գիտելիքներն արդյոք տեղափոխվել են առօրյա կյանք (գործառնական օգտագործում), արդյոք ձեռք են բերվել նոր հմտություններ ու կարողություններ, կամ հակառակը՝ որոշակի հմտություններ չեն կորել/մոռացվել: Ինչպիսին էր աշակերտի հոգեբանական-հուզական վիճակն ու պահվածքը, կարգավորվել է արդյոք և եթե՝ այո, ապա այս ճգնաժամային իրավիճակի պատճառով վերջինս ինչ փոփոխության է ենթարկվել և ինչ ռազմավարությունների օգտագործմամբ: Միևնույն ժամանակ, կարևոր է լսել ծնողին և կիսվել նրա տեսլականով. Արդյոք տվյալ պահին աշակերտը կարիք ունի հոգեբանական-հուզական աջակցության և/կամ վարքի կարգավորման, կամ ծնողը կարիք ունի այս հարցերի վերաբերյալ հանձնարարականների:

Եթե անհրաժեշտությունը բացահայտվի, կարևոր է, որ դպրոցը գործնականում սկսի աշխատել աշակերտին և ծնողին աջակցելու համար: Դա անելու համար նա նախ պետք է փորձի լուծել խնդիրը՝ ելնելով դպրոցի ներքին ռեսուրսներից (հոգեբան, հատուկ մանկավարժ): Եթե դպրոցը չունի համապատասխան կորողունակությամբ աշխատակից կամ նրանց միջամտությունը բավարար չի եղել, նպատակահարմար է աշակերտին և ծնողին ուղղորդել համապատասխան իրավասություն ունեցող կազմակերպություններ: Ուստի նպատակահարմար է ունենալ համապատասխան ծառայություններ մատուցող կազմակերպությունների տվյալների շտեմարան, որոնք կարող են նման ծառայություն մատուցել: Ընտանիքը կարող է նաև աջակցություն ստանալ այն սոցիալական ծառայություններից որտեղ աշակերտը ներգրավված է:

Միևնույն ժամանակ, ուշագրավ է հետևյալ հանգամանքը. Եթե անցած ուսումնական տարում ճգնաժամային իրավիճակի պատճառով աշակերտի անհատական ուսումնական ծրագրի մեջ

փոփոխություններ են կատարվել և, իրավիճակից ելնելով, նրա համար որպես առաջնահերթություն են սահմանվել նոր և ժամանակավոր կարճաժամկետ նպատակներ*, ապա ծնողի հետ պետք է քննարկվի սովորական անհատական ուսումնական պլանի վերադառնալու հարցը:

Բնականաբար, անհատական ուսումնական պլանը կմշակվի համապատասխան ստանդարտ ընթացակարգերի պահպանմամբ, ինչը ենթադրում է, որ պետք է աշակերտին խորը գնահատել այն առարկայական ծրագրերի համեմատ, որոնք նա անցնում է, որոշել նրա գիտելիքների ակտուալ մակարդակը, որոշում կայացնել անհատական ուսումնական ծրագրի անհրաժեշտության մասին, կազմել ծրագիր (ճշգրտել երկարաժամկետ և կարճաժամկետ նպատակները) և այս գործընթացում նախատեսել ծնողի հեռանկարը:

Կրթական միջավայրի, նյութերի և հիգիենայի պարագաների կազմակերպում կրթական հատուկ կարիք ունեցող աշակերտի համար

Եթե հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտը ներգրավված է առանձին՝ մեկը մեկի հետ կամ փոքր խմբերում կազմակերպված ուսումնական գործընթացի մեջ, դպրոցի ղեկավարությունը և աշակերտի անհատական ուսումնական գործընթացի համար պատասխանատու անձը պետք է մշակեն այն իրերի անվտանգ օգտագործման կանոններ, որոնք աշակերտն օգտագործում է այդ գործընթացում (հատկապես, եթե օգտագործված պարագաներն ու իրերը բազմակի օգտագործման են, և դրանք կարող են աշակերտների կողմից ընդհանուր օգտագործվել փոքր խմբերում կամ առանձին հանդիպումների ժամանակ):

Հատուկ մանկավարժին / հոգեբանին առաջարկվում է.

- Կազմել այն աշակերտների ամբողջական ցուցակ, ովքեր օգտվում են ռեսուրս-սենյակից և այնտեղ առկա իրերից ու պարագաներից:
- Սահմանել այն իրերն ու պարագաները, որ կիրառվում է կոնկրետ աշակերտի համար (իհարկե, դա որոշվելու է՝ հաշվի առնելով աշակերտի համար սահմանված նպատակներն ու շահերը):
- Սահմանել անհատական զետեղարան յուրաքանչյուր հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի համար և այնտեղ զետեղել նշված իրերը՝ զետեղարանի վրա գրվի աշակերտի անունը, փակցվի նրա լուսանկարը կամ խորհրդանիշ, որի միջոցով աշակերտը կկարողանա նույնականացնել իր իրերի գտնվելու տեղը:
- Աշակերտին սովորեցնել, թե որտեղ են պահվում իր իրերը, ինչպես նաև սեփական իրերն օգտագործելու կանոնները:
- Այն դեպքում, եթե մի քանի աշակերտ է օգտվում տվյալ պարագաներից ու իրերից.
  - ա) Խելամտորեն բաշխել պարագաներն ու իրերը աշակերտների միջև, փորձել, որ տարբեր աշակերտների կողմից նույն պարագաներն ու իրերը չօգտագործվեն:
  - բ) Առանձին զետեղարան տրամադրել ընդհանուր օգտագործման իրերի համար և ապահովել, որ իրերն ախտահանվեն յուրաքանչյուր օգտագործումից հետո, եթե այն նյութը, որից պատրաստված են դրանք, տալիս է դրա հնարավորություն: Այն իրերը կամ պարագաները, որոնք հնարավոր չէ ախտահանել, պետք է հանվեն սպառումից (օրինակ՝ փափուկ, գործվածքից պատրաստված դիդակտիկ նյութերը) կամ օգտագործվեն միայն աշակերտի կողմից անհատապես, այլ ոչ թե ընդհանուր օգտագործմամբ (օրինակ՝ գունավոր թերթեր):
  - գ) Որոշել այն վայրը, որտեղ հավաքվում են օգտագործված ընդհանուր իրերը և պարագաները ախտահանման համար, և տեղադրվի այնտեղ յուրաքանչյուր օգտագործումից հետո: Ախտահանելուց հետո դրանք կարող են վերադարձվել իրենց տեղը:

* Հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների հեռավար կրթական ուսուցման մեջ ներգրավվելու աջակցություն, Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

դ) Ստեղծել տեսողական քարտեր (նախընտրելի է լամինացված) և ռեսուրս-սենյակում վարվելակերպի կանոնների հետ կապված պաստառներ և տեղադրել դրանք տեսանելի տեղում:
ե) Աշակերտի հետ առաջին հանդիպումները տրամադրվեն տվյալ կանոնները ծանոթացնելուն (լամինացված քարտերի օգտագործմամբ) և սերտելուն:
զ) Կազմել այն իրերի և պարագաների ցուցակը, որոնք մի քանի աշակերտների անհրաժեշտ են միաժամանակ և դիմել դպրոցի ղեկավարությանը՝ պարագաներն ու իրերը ձեռք բերելու համար:

Դրա հետ մեկտեղ, պետք է.

- Սահմանել ռեսուրս-սենյակից օգտվելու համար նախատեսված խելամիտ ժամանակացույց, որպեսզի հասցվի աշխատանքային մակերեսների և նյութերի ախտահանում ըստ աշակերտների հերթափոխի, և տարածքն օդափոխվի:
- Սահմանել և տեղադրել ախտահանման ամենօրյա գրառման թերթիկը տեսանելի տեղում, ախտահանումն իրականացվի աշակերտների հերթափոխի ժամանակ: Ախտահանման համար պատասխանատու սահմանվի այն անձը, ով աշխատել է հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների հետ: Տե՛ս՝ Հավելված N5:
- Ախտահանման գործընթացի համար պատասխանատու կարող է նշանակվել հկկու անձի օգնականը (նման աշխատակից լինելու դեպքում):
- Նպատակահարմար է սույն կետն ավելացնել տվյալ աշխատակցի աշխատանքի նկարագրության մեջ և նրան ու այլ մասնագետի հրահանգավորել՝ կապված ախտահանման ընթացակարգերի և կանոնների հետ: Տվյալ աշխատակիցը պետք է վերապատրաստում անցնի՝ կապված ախտահանման ընթացակարգերի և կանոնների հետ (տե՛ս՝ «Նոր կորոնավարակով (SARS-CoV-2) հարուցված վարակի (COVID-19) հետ կապված ընդհանուր հանձնարարականներ հանրակրթական հաստատությունների համար:

(բ) Հեռավար ուսուցման պլանավորում և իրականացում

Կրթական գործընթացի հեռավար ձևով վարումն էլ ավելի շատ կազմակերպում, երկարատև պլանավորում և ընթացակարգերին անդրադարձում է պահանջում:

Չնայած նրան, որ այսօր Վրաստանի հանրային դպրոցները առկա ձևով են վերադառնում ուսումնական գործընթացին, նպատակահարմար է, որ դպրոցի վարչությունը հետևողականորեն ձեռնարկի պարտադիր միջոցառումների իրականացում, որպեսզի պատրաստ լինի, եթե արտակարգ իրավիճակի նախատեսմամբ անհրաժեշտ լինի անցնել ուսուցման հեռավարի մոդելի:

Ուստի նպատակահարմար է, որ դպրոցի վարչակազմը ուսումնական տարվա մեկնարկից անմիջապես հետո սկսի մշակել հեռավար ուսուցման անցնելու պլան (օրինակ, երբ դպրոցի ներկայացուցիչները կհարմարվեն առկա կրթական գործընթացի կանոնակարգերին): Տվյալ պլանի բաղադրիչ է հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների՝ հեռավար կրթական գործընթացի մեջ ներգրավման հնարավորությունը և դրա հետ կապված մարտահրավերների անհատական քննարկումը:

Հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների դեպքերի անհատական քննարկման գործընթացում անհրաժեշտ է ներգրավել ծնողին, անխտիր բոլոր ուսուցիչներին, հատուկ մանկավարժին/հոգեբանին և դպրոցում եղած այն աջակցող մասնագետներին, ովքեր կանոնավոր իրավիճակում ներգրավված են տվյալ աշակերտի կրթական գործընթացում:

Հեռավար ձևի անցնելու պլանի քննարկմանը կարող է տրամադրվել մի քանի խմբային հանդիպում: Նպատակահարմար է, որ այս հանդիպումներն անցկացվեն գործող մանկավարժների և ծնողների համար հարմար ձևաչափով՝առերես հանդիպումների տեսքով (եթե առկա կանոնակարգերը չեն

սահմանափակում այս ձևաչափը) կամ հեռավար կարգով և օգտագործելով ձևաչափ, որը մատչելի է բոլոր կողմերի համար:

Այս հանդիպումների արդյունքում ներգրավված բոլոր կողմերի համար հստակ պետք է դառնան իրենց գործառույթներն ու պարտականությունները և այն ռազմավարությունները, որոնք ավելի արդյունավետ կդարձնեն հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի մասնակցությունը հեռավար կրթական գործընթացում:

Հանդիպումների արդյունքում կհստակեցվեն՝

- Աշակերտի ուսումնական ժամանակացույցը.
- Ուսումնական նպատակները.
- Ուսման գործընթացում անհրաժեշտ աջակցությունը, ներգրավված մասնագետները և նրանց պարտականությունները.
- Ծնողի դերը և նրա կողմից ցուցաբերվող աջակցության ձևը.
- Ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ և տնային պայմաններում հասանելի ուսումնական ռեսուրսները.
- Աշակերտի՝ ուսումնական գործընթացում ներգրավվելու հնարավորությունները (կարելի է ընտրել ուսուցման մեկ կամ մի քանի ձև):

Հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման վերաբերյալ որոշում կայացնելու համար կարևոր է, որ աշակերտը, ծնողները և ուսուցիչները անդրադառնան նախորդ ուսումնական տարվա փորձին: Դա անելու համար թիմը կարող է առաջնորդվել հարցաթերթիկով. **Աշակերտի պատրաստակամությունը հեռավար ուսուցման համար** (տե՛ս՝ Հավելված N 6) և հետևողականորեն հստակեցնել հիմնական խնդիրները՝հիմնվելով իրենց սեփական փորձի և ծնողների հետադարձ կապի վրա, ինչի արդյունքում կկազմակերպվի պատշաճ հեռավար ուսումնական գործընթաց: Հարցաշարի վարման համար պատասխանատվությունը կարող է ստանձնել հատուկ մանկավարժը կամ հոգեբանը:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի հեռավար ուսուցման ձևերն ու կարիքը

Հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի հեռավար ուսուցման հնարավորությունները/ձևերը

- ☐ Աշակերտն ինքնուրույն (առանց աջակցող ղեկավարի) ակտիվորեն մասնակցում է համաժամանակյա ուսուցման գործընթացին:
- ☐ Աշակերտին անհրաժեշտ է օժանդակ ղեկավարի ներկայություն՝համաժամանակյա ուսուցման գործընթացին ակտիվորեն մասնակցելու համար:
- ☐ Աշակերտը համաժամանակյա ուսումնական գործընթացին մասնակցում է միայն պասիվ (չնայած ավագի աջակցությանը):
- ☐ Աշակերտն ինքնուրույն և ակտիվորեն (առանց աջակցող ավագի) մասնակցում է մեկը մեկի հետ համաժամանակյա ուսումնական գործընթացին, որը վարում է համապատասխան առարկայի ուսուցիչը:
- ☐ Աշակերտին մեկը մեկի հետ համաժամանակյա ուսումնական գործընթացում անհրաժեշտ է աջակցող ավագ անձի օգնություն:
- ☐ Աշակերտը ակտիվորեն մասնակցում է տարաժամանակյա ուսուցման գործընթացին, որը դեմ առ դեմ շփմամբ վարում է աջակցող ավագը:

Աշակերտի համար հնարավոր է ընտրվի ոչ թե մեկ, այլ ուսման մի քանի ձևաչափ, և այն փոխվի տարբեր առարկաների հետ կապված: Օրինակ՝ հնարավոր է, որ աշակերտը դասընկերների հետ համաժամանակյա հաճախի մեկ դասի (օրինակ՝ երաժշտություն և նկարչություն), իսկ այլ առարկայի (օրինակ ՝ մաթեմատիկա) տիրապետի ուսուցչի հետ մեկը մեկի հետ հանդիպումների հիման վրա: Չի բացառվում նաև, որ նույն աշակերտը որոշ առարկայական ծրագրեր անցնի տարաժամանակյա ուսումնական մոդելով և ծնողի ինտենսիվ աջակցությամբ:

Աշակերտի համար հեռավար ուսուցման ձևաչափը պետք է ընտրվի՝ նրա հնարավորությունների խորքային վերլուծության և ուսումնական ծրագրի առանձնահատկությունների նախատեսմամբ: Աշակերտի հեռավար ուսուցման ձևաչափը պետք է դիտարկվի առանձին-առանձին՝ յուրաքանչյուր ուսումնական ծրագրի (առարկայի) համար:

Հեռավար ուսուցման ձև ընտրելիս որոշիչ կլինեն.

- Աշակերտի հնարավորությունները հեռավար առցանց հարթակի միջոցով շփում հաստատել ուսուցիչների ու դասընկերների հետ և արձագանքել տրամադրված հրահանգներին ու նյութերին:
- Լրացուցիչ մասնագետի կամ աջակցող մեծահասակի օգնության անհրաժեշտությունը և ազդեցությունը տվյալ գործընթացին:
- Հատուկ մանկավարժի/հոգեբանի հետ անհատական ուսուցումը շարունակելու կամ ավելացնելու անհրաժեշտությունը այս կամ այն հմտությունը բարելավելու կամ վարժելու նպատակով:

Չնայած նրան, թե հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի համար հեռավար ուսուցման որ ձևաչափն է ընտրվելու, առաջնահերթությունը պետք է լինի այն, որ աշակերտը ներգրավվի դասընկերների հետ խմբային համաժամանակյա ուսուցման գործընթացում, մեկը մեկի հետ և ծնողի հետ տարաժամանակյա ուսուցումը պետք է դիտվի որպես լրացուցիչ, փոխհատուցող մոտեցում, և ոչ թե ուսուցման միակ և առաջատար ձև:

Միևնույն ժամանակ, աշակերտի ուսումնական ժամանակացույցը կազմակերպելիս կարևոր է, որ փոխհատուցող ծառայությունները աշակերտին դուրս չթողնեն խմբային ուսուցման գործընթացից, եթե մեկը մեկի հետ կամ տարաժամանակյա ուսուցման գործընթացը խմբային ուսուցման գործընթացին զուգահեռ պլանավորվի:

Ավելին, նույնիսկ եթե հաշվի առնելով աշակերտի կարողությունը, հնարավոր չէ նրա ակտիվ ներգրավում հեռավար համաժամանակյա ուսումնական գործընթացի մեջ կամ հնարավոր է միայն օժանդակող ավագի աջակցությամբ (ինչը երբեմն խափանվում է ծնողների զբաղվածության պատճառով), ցանկալի է, որ աշակերտը թեկուզ պասիվ մասնակցի հեռավար ուսուցման գործընթացներին: Դա անհրաժեշտ է նրա հոգե-հուզական կայունության, սոցիալական կապերի շարունակականության և պատկանելության զգացողության համար:

Ծնողի դերը ուսումնական գործընթացի կազմակերպման և իրականացման գործընթացում

Հեռավար կրթական գործընթացի տրամադրման ժամանակ որոշիչ է ծնողի մասնակցությունը: Աշակերտների ակադեմիական առաջընթացը տվյալ պահին այնպես է ստեղծված իրավիճակում կախված ծնողների ներգրավվածությունից, ինչպես երբեք: Առկա հեռավար կրթական գործընթացն ավելացրել է ծնողների պարտավորությունները, ինչը նրանից ավելի է, ինչ ծնողները մինչև համավարակն իրականացնում էին իրենց զավակների համար կրթական գործընթացի համակարգման, թե մշտադիտարկման նպատակով:

Միևնույն ժամանակ, հեռավար ձևով կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպումը էապես կախված է ծնողի և ուսուցիչների համագործակցությունից: Ուստի կարևոր է, որ դպրոցի ներկայացուցիչները (վարչակազմը, դասղեկը, հատուկ մանկավարժը/հոգեբանը) գիտակցեն և պատրաստակամություն ստեղծեն նրա համար, որ իրենք ստիպված կլինեն ծնողների հետ ավելի ինտենսիվ, համակարգված և տարբեր միջոցներով շփվել:

Այն, թե ինչ ձևով ու ինտենսիվությամբ կլինի ծնողը ներգրավված իր զավակի կրթական գործընթացում, կախված է հենց աշակերտի հնարավորություններից, կրթական ծրագրի պահանջներից և նույնիսկ ծնողի ունեցած ժամանակի չափից: Ծնողների ներգրավվածության հարցերը պարզելու համար թիմին կօգնի հարցարանը՝ Աշակերտի պատրաստակամությունը ուսումնական գործընթացի նկատմամբ (տե՛ս Հավելված №6)

Այս հարցաշարի հիման վրա կհստակեցվի հետևյալը.

- Ծնողների հետադարձ կապը անցած տարվա, իր սեփական դերի և արդյունավետության վերաբերյալ:
- Ընտանիքում հասանելի տեխնոլոգիաներն ու ռեսուրսները:
- Ծնողների կարողունակությունները թվային տեխնոլոգիաների օգտագործման մեջ:
- Ծնողների ծանրաբեռնվածությունը և կրթական գործընթացում ակտիվորեն մասնակցելու հնարավորությունը (հրատապ է այն դեպքում, եթե աշակերտն անմիջական աջակցողի կարիք ունի ուսումնական գործընթացին մասնակցելու համար):

Հնարավոր է բավական լինի ծնողի կողմից ուսումնական գործընթացի համակարգումը և մշտադիտարկումը, սակայն, որոշ դեպքերում կարող է նրան անհրաժեշտ լինի անմիջականորեն մասնակցել ուսումնական գործընթացին և իրականացնել այն:

Ցանկացած դեպքում, նախապատրաստական փուլում անհրաժեշտ կլինի, որ դպրոցի ղեկավարությունը ծնողներին տեղեկացնի հեռավար կրթական գործընթացին անցնելու կանոնակարգերը, առաջարկի և, անհրաժեշտության դեպքում, անցկացնի թվային տեխնոլոգիաների օգտագործման դասընթաց:

Ստորև բերված աղյուսակն արտացոլում է հեռավար կրթական գործընթացում ծնողի ներգրավման ձևերը.

Ծնողի դերը հեռավար ուսումնական գործընթացի իրականացման մեջ

☐ Ծնողը մշտադիտարկում է աշակերտի մասնակցությունը համաժամանակյա և տարաժամանակյա ուսումնական գործընթացում:

☐ Ծնողը ներկա է գտնվում անհատական՝ մեկը մեկի հետ ընթացող կրթական գործընթացին և աջակցում աշակերտին այս գործընթացում.

- նրա ուշադրությունն ուղղորդում է դեպի կրթական գործընթաց,
- ուսուցչի ցուցումով առաջարկում համապատասխան կրթական ակտիվություն,
- օգնության ցուցաբերման համապատասխան ձևերի պահպանմամբ, օգնում է կատարելիս:

☐ Ծնողը վարում է / անմիջականորեն իրականացնում է աշակերտի տարաժամանակյա կրթական գործընթաց՝ հիմնվելով ուսուցչի հրահանգների վրա:

Անկախ նրանից, թե ինչ տեսքով տեղի կունենա ծնողի ներգրավվածություն հեռավար կրթական գործընթացում, անհրաժեշտ է, որ ծնողը ճշգրիտ պատկերացում և գիտելիք ունենա հետևյալ հարցերի վերաբերյալ

- **Ինչ սպասում ունեն իրենից:**
- **Ինչ նպատակներ են նախանշված իր զավակի համար:**

- **Ինչպիսի առաջադրանքներ են կատարվելու:**
- **Ինչ հրահանգներ պետք է տրվեն:**
- **Որ նյութի օգտագործումն է տեղին:**
- **Որն է աշակերտի ցանկալի կատարումը:**

Ծանոթություն. *Ցանկալի կատարման մեջ ենթադրվում է աշակերտի վարքը, որը նա պետք է դրսևորի՝ ելնելով տրամադրվող նյութից և ցուցումներից, կամ այն արդյունքը, որը նա պետք է ստեղծի՝ տրամադրված նյութի և ցուցումների հիման վրա:*

Անհրաժեշտ է, որ ծնողը ակտիվորեն ներգրավվի կրթության և զարգացման համապատասխան նպատակների համաձայնեցման (վերագնահատում, վերանայում) գործընթացում: Որոշիչ է, որ ծնողը տեսնի կապը աշակերտին առաջարկվող գործողությունների և սահմանված կրթական նպատակի միջև: Խորհուրդ չի տրվում, որ ծնողը, առանց վերջինս հասկանալու, իր զավակին միայն մեխանիկորեն ներգրավի ուսուցչի կողմից սահմանված ակտիվությունների մեջ: Սա էլ ավելի հրատապ է այն դեպքում, եթե ծնողը ստիպված է ինքը վարել զավակի ուսումնական գործընթացը:

Արդյունավետ է, եթե ուսուցիչը նախապես սահմանում է հրատապ նպատակին համապատասխան բազմազան ակտիվություններ (օրինակ՝ գրի է առնում այն ակտիվությունները, որոնք երաշխավորվում են աշակերտի համար ընթացիկ շաբաթվա ընթացքում), կիսվում է դրանցով ծնողի հետ և հեռավար հանդիպման ձևաչափով մանրամասնորեն քննարկում յուրաքանչյուր ակտիվությունը, դրանց կարևորությունը, կրթական նպատակի հետ կապը, անհրաժեշտ նյութերը, հրահանգը, ցանկալի / ակնկալվող կատարումը, օժանդակության և գործունեության ձևափոխման հնարավորությունները և այլն:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է, որ ուսուցիչը մանրամասն տեղեկություններ ստանա աշակերտի կողմից ակտիվության փաստացի կատարման վերաբերյալ, քանի որ միայն այդ տեղեկատվության հիման վրա կարելի է որոշել աշակերտի ձեռքբերման հրատապ մակարդակը, հետագա զարգացման գործողությունները: Համապատասխանաբար, զավակին գործունեությունը ներկայացնելուց հետո ծնողը պետք է ուշադիր հետևի աշակերտի կատարմանը և ուսուցչի հետ կիսվի գործընթացի ընթացքով և ստացված արդյունքով: Դրա համար ծնողը կարող է կատարել գրավոր կամ աուդիո կամ տեսաձայնագրություններ և դրանք քննարկել մանկավարժի, հատուկ մանկավարժի կամ հոգեբանի հետ:

Միևնույն ժամանակ կարևոր է, որ ուսուցիչը ճշգրիտ պատկերացում կազմի, թե ինչպիսին է ծնող-աշակերտ փոխներգործությունը: Հետևաբար, նպատակահարմար է, որ նա հետևի ծնողի կողմից իրականացված կրթական գործընթացին և հետադարձ կապ տրամադրի ինչպես աշակերտին, այնպես էլ՝ ծնողին (ծնողին հետադարձ կապի տրամադրումը երաշխավորվում է հեռավար դասից հետո):

Կարևոր է ճշգրիտ կերպով սահմանել ծնողի՝ կրթական գործընթացում մասնակցության ինտենսիվությունը և նրա պատասխանատվությունը: Անթույլատրելի է, որ ուսուցիչը ուսուցման գործընթացի ողջ պատասխանատվությունը տեղափոխի ծնողի վրա և այդպիսով նվազեցնի սեփական պատասխանատվությունը և ներգրավվածությունը: Կարևոր է, որ ծնողն ընկալվի որպես կրթական գործընթացի աջակցող, այլ ոչ թե՝ հիմնական վարող:

Անհրաժեշտ է նաև վերլուծել ծնողների ներգրավվածությունը. Արդյոք նրանք ժամանակ և ռեսուրսներ ունեն, որպեսզի կարողանան անհրաժեշտ ինտենսիվությամբ և կանոնավորությամբ մասնակցել ուսումնական գործընթացին: Կարևոր է դա օբյեկտիվորեն և անկողմնակալ գնահատել, և եթե օբյեկտիվ պատճառներով ծնողի օպտիմալ ներգրավվածությունը (ծնողի աշխատանքային գրաֆիկի անհամատեղելիությունը դպրոցական գրաֆիկի հետ) հնարավոր չէ, նրան չպետք է մեղադրել, այլ պետք է նկատի առնվեն ուսումնառության գործընթացի կազմակերպման և իրականացման այլ հնարավորություններ և ձևեր:

Հատուկ մանկավարժի/հոգեբանի դերը հեռավար կրթական գործընթացի կազմակերպման և իրականացման ժամանակ

Հեռավար կրթական գործընթացի պլանավորման և իրականացման գործընթացում պետք է զգուշորեն սահմանվի հատուկ մանկավարժի/հոգեբանի դերը: Ինչպես սովորական կրթական գործընթացում, հատուկ կրթության մանկավարժների/հոգեբանների դերն ու պարտականությունները կարող են փոխվել և այլ կերպ ճշգրտվել տարբեր աշակերտների համար: Բնականաբար, դա էապես սահմանում են հենց աշակերտի կարիքները:

Ստորև բերված աղյուսակը ցույց է տալիս հատուկ մանկավարժի/հոգեբանի ներգրավվածության ձևերը.

Հատուկ մանկավարժի/հոգեբանի ներգրավվածության ձևերը.

- ☐ Ուսուցչի և հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի աջակցություն խմբում կրթական գործընթացի իրականացման ժամանակ:
- ☐ Մեկը մեկի հետ անհատական պարապմունքներ աշակերտի հետ՝ ուսուցչի սահմանված նպատակների և ակտիվությունների վրա:
- ☐ Մեկը մեկի հետ անհատական պարապմունքներ աշակերտի հետ՝ ճանաչողական և գործառնական նպատակների վրա:
- ☐ Մանկավարժի աջակցություն աշակերտին՝ կրթական նպատակների, ակտիվությունների էլեկտրոնային կրթական ռեսուրսի ընտրության և հրահանգների ձևակերպման գործընթացում:
- ☐ Ուսուցչի հետ կամ ինքնուրույն ծնողին հանձնարարականներ և հրահանգներ տալ՝ կրթական գործընթացի պլանավորման-իրականացման հարցերի վերաբերյալ:
- ☐ Աշակերտի և նրա ծնողի դիտարկում տարաժամանակյա ուսումնական գործընթացի ժամանակ (հնարավոր է իրականացվի կենդանի (live) ռեժիմում կամ ձայնագրության վերլուծության հիման վրա), ծնողին հետադարձ կապի տրամադրում:

Եթե դպրոցում աշխատում է հոգեբան՝ հատուկ մանկավարժի հետ համատեղ, այդ գործողությունները կարող են վերաբաշխվել նրա և հոգեբանի միջև՝ հաշվի առնելով նրանց հատուկ կարողունակությունը: Եթե դպրոցն ունի միայն հոգեբան, ապա նա ստիպված կլինի ակտիվորեն մասնակցել տվյալ գործողությունների իրականացմանը: Անհրաժեշտության դեպքում (օրինակ՝ աշակերտին անհրաժեշտ է անհատական ուսուցում՝ ակադեմիական հմտություններ զարգացնելու, առարկայական ուսուցչի աջակցություն առարկայական ծրագրերը հարմարեցնելու համար, ծնողին անհրաժեշտ է ակտիվությունների հավաքածու առարկայական ծրագրի համար՝ տանը աշակերտի հետ առարկայի նպատակների վրա աշխատելու համար, ինչը կարող է դուրս գալ հոգեբանի իրավասությունից) դպրոցի ղեկավարությունը հիմնավորված փաստարկի հիման վրա պետք է քննարկի հարցը՝ կապված հատուկ մանկավարժ ավելացնելու հետ:

Հեռավար կրթական մոդելի պայմաններում հատուկ մանկավարժի համար կարևոր է ունենալ հստակ և հնարավորինս ֆիքսված աշխատանքային ժամանակացույց և դասացուցակ, որն ամբողջությամբ արտացոլում է նրա մասնակցությունն այն հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների կրթական գործընթացին, որոնց հետ կապված է: Միևնույն ժամանակ, ցանկալի է, որ ժամանակացույցը հստակ ցույց տա ժամերը.

- Երբ և ում հետ է հատուկ մանկավարժը/հոգեբանը մասնակցում համաժամանակյա ուսումնական գործընթացին:
- Երբ և ում հետ է աշխատում տարաժամանակյա:
- Երբ է ներգրավված է ծնողի, ուսուցչի խորհրդատվության գործընթացում:
- Երբ է պլանավորում ուսումնական գործընթացը:

Հանձնարարականներ հատուկ մանկավարժի/հոգեբանի աշխատանքային ծանրաբեռնվածության սահմանման համար լրիվ հեռավար ուսուցման ժամանակ

Հատուկ մանկավարժի/հոգեբանի օրվա ժամանակացույցի նմուշ

Ժամանակ	Աշակերտ	Դաս	Ուսուցման ձևը
9:00-9:30	Ա.Բ.	Վրացերեն	համաժամանակյա, խմբում, հատուկ մանկավարժը/հոգեբանը դիտարկում է / աջակցում է
9:30-10:00	Գ.Դ.	Վրացերեն	համաժամանակյա, խմբում, հատուկ մանկավարժը/հոգեբանը դիտարկում է / աջակցում է
10:00-10:30	Է.Վ.	Կենսաբանություն	համաժամանակյա, խմբում, հատուկ մանկավարժը/հոգեբանը դիտարկում է / աջակցում է
11:00-11:30	Զ.Թ.	Մաթեմատիկա	համաժամանակյա, խմբում, հատուկ մանկավարժը/հոգեբանը դիտարկում է / աջակցում է
11:30-12:00	Ի.Կ.	Բնություն	համաժամանակյա, խմբում, հատուկ մանկավարժը/հոգեբանը դիտարկում է / աջակցում է
12:00-13:00 ընդմիջում			
13:00-13:30	Ա.Բ.	հատուկ մանկավարժի/հոգեբանի մեկը մեկի հետ անհատական աշխատանք աշակերտի հետ	
13:30-14:00	Գ.Դ.	հատուկ մանկավարժի/հոգեբանի մեկը մեկի հետ անհատական աշխատանք աշակերտի հետ	
14:00-14:30	Է.Վ.	վրացերեն	առարկայի ուսուցչի մեկը մեկի հետ անհատական աշխատանք աշակերտի հետ, հատուկ մանկավարժը/հոգեբանը դիտարկում է
14:30-15:00	Զ.Թ.	վրացերեն	առարկայի ուսուցչի մեկը մեկի հետ անհատական աշխատանք աշակերտի հետ, հատուկ մանկավարժը/հոգեբանը դիտարկում է
15:00-15:30	Ի.Կ.	Ծնողի մեկը մեկի հետ անհատական աշխատանք աշակերտի հետ, հատուկ մանկավարժը/հոգեբանը դիտարկում է	
15:30-16:00			
16:00-18:00	Ուսումնական գործընթացի պլանավորում և անհատական խորհրդատվություններ ծնողների և ուսուցիչների հետ:		

Ներկայացված աղյուսակն արտացոլում է հատուկ մանկավարժի/հոգեբանի աշխատանքի մեկ օրվա աշխատանքի բաշխումը, որը կազմվել է նրա միջին ծանրաբեռնվածության նախատեսմամբ (երբ մեկ հատուկ մանկավարժը / հոգեբանը առանց գործընկերոջ համակարգում է հատուկ կրթության կարիք ունեցող հինգ աշակերտների ուսումնառության գործընթացը):

Եթե մեկ հատուկ մանկավարժի / հոգեբանի ռեսուրսներն անբավարար լինեն հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտների ուսումնական գործընթացը հիմնավոր համակարգելու համար, նպատակահարմար է նա հիմնավորված փաստարկ ներկայացնի դպրոցի ղեկավարությանը՝ լրացուցիչ հատուկ մանկավարժի/հոգեբանի կամ այլ մասնագետի անհրաժեշտության մասին, և դպրոցի ղեկավարության հետ քննարկի հաստիքի ավելացման հարցը:

Հատուկ մանկավարժի / հոգեբանի գործունեությունը հիմնականում հետևյալ տիպի ակտիվություններ է ենթադրում՝

- Խմբում շարունակական ուսուցման գործընթացի դիտարկում, համաժամանակյա ուսուցման ընթացքում ուսուցչի աջակցություն.
- Մեկը մեկի հետ անհատական աշխատանք աշակերտի հետ.
- Առարկայի ուսուցչի / ծնողի անհատական աշխատանքի աջակցում աշակերտի հետ.
- Ծնողի կամ ուսուցչի խորհրդատվություն.
- Ուսումնական գործընթացի պլանավորում.

Քննարկենք դրանցից յուրաքանչյուրն առանձին-առանձին.

- **Աշակերտների խմբում ընթացիկ կրթական գործընթացի դիտարկում / մանկավարժի աջակցություն.** Հատուկ մանկավարժը/հոգեբանը ներկա է գտնվում հեռավար համաժամանակյա ուսումնական գործընթացին, երբ ուսուցիչը դաս է անցկացնում խմբում:

  Եթե նշված դասերն անցկացվում են օրվա առաջին կեսին, հատուկ մանկավարժը/հոգեբանը տվյալ ժամանակը լրացնում է և իր ժամանակացույցն այնպես է բաշխում, որ շաբաթվա ընթացքում կարողանա բոլոր հկկու աշակերտների բոլոր դասերին առնվազն մեկ անգամ ներկա գտնվել: Կարևոր է, որ հատուկ մանկավարժը նախադպրոցական հաստատությունում ներկա գտնվի հատուկ կրթական կարիք ունեցող բոլոր աշակերտների հեռավար ուսուցման խմբային կրթական գործընթացին:

  Այս կերպ ուսուցիչը/հոգեբանը պատկերացում է կազմում այն մասին, թե որ առարկայից ունի աշակերտը օգնության կարիք, և ինքը որտեղ կարող է աջակցել նրան:

  Դրա համար հատուկ մանկավարժը/հոգեբանը պետք է ունենա աշակերտների դասացուցակը և դրա հիման վրա հատուկ մանկավարժը կստեղծի ուսումնական գործընթացին ներկա գտնվելու և դիտարկելու իր սեփական ժամանակացույցը:

  Աշակերտների ուսումնական գործընթացը հատուկ մանկավարժը/ հոգեբանը հատկապես ինտենսիվորեն կդիտարկի ուսումնական տարվա սկզբին, բայց նրանից հետո, երբ յուրաքանչյուր աշակերտի ուսումնական գործընթացը կդիտարկի բոլոր դասերին, նա կկարողանա փոխել ժամանակացույցը՝ միայն այն աշակերտների դասերը կշարունակի դիտարկել, որտեղ դրա անհրաժեշտությունը կլինի:

- **Մեկը մեկի հետ անհատական աշխատանք՝ հկկու աշակերտի անհատական նպատակի վրա կամ առարկայական ծրագրի նպատակի վրա**

  Հատուկ մանկավարժը/հոգեբանը այդ նպատակով կոնկրետ աշակերտի համար որոշում է անհատական ժամանակ: Կարևոր է, որ աշակերտի համար մեկը մեկի հետ աշխատելու համար սահմանված ժամանակը չհամընկնի խմբում ընթացող համաժամանակյա ուսուցման գործընթացի հետ:

  Ուստի նպատակահարմար է, որ հատուկ մանկավարժը / հոգեբանը աշակերտի հետ մեկը մեկի հետ աշխատի նրանից հետո, երբ կավարտվի աշակերտի համար համաժամանակյա ուսումնական գործընթացը:

  Տվյալ ծանրաբեռնվածությունը մենք չենք կարող դիտարկել որպես լրացուցիչ ծանրաբեռնվածություն միայն հկկու աշակերտի համար, քանի որ հատուկ մանկավարժի / հոգեբանի հետ այսպիսի հանդիպումները դիտարկվում են որպես այլ աշակերտների ինքնուրույն, տնային առաջադրանքների վրա աշխատանքի համօրինակ, որոնք նույնպես նախատեսված են օրվա երկրորդ կեսին:

  Մեկը մեկի հետ հատուկ մանկավարժը/հոգեբանը աշխատում է յուրաքանչյուր աշակերտի հետ օրը մեկ անգամ 30 րոպեի ընթացքում:

  Այն հազվադեպ դեպքում, երբ կոնկրետ հկկու աշակերտի համար ոչ ռելևանտ է խմբում համաժամանակյա ընթացող ուսումնական գործընթացին մասնակցելը, և հատուկ մանկավարժի/ հոգեբանի օրվա առաջին կեսը ամբողջությամբ չի լրացված, նա կարող է տվյալ աշակերտի հետ հանդիպել համաժամանակյա ընթացող ուսումնական գործընթացին զուգահեռ, որն իրականացվում է իր դասարանի հետ:

- **Ծնողի կամ ուսուցչի հետ մեկը մեկի հետ ընթացող ուսումնական գործընթացի դիտարկում: Ուսուցչի, ծնողի աջակցություն**

  Այս տիպի դասերն անցկացվում են նաև օրվա երկրորդ կեսին, որպեսզի առարկայի ուսուցչի կամ ծնողի կողմից անցկացվող անհատական դասերը չհամընկնեն խմբում համաժամանակյա ընթացող ուսուցման գործընթացի հետ: Հետևաբար, նման տիպի պարապմունքներ կիրականացվեն նրանից հետո, երբ աշակերտի համար համաժամանակյա ուսուցման գործընթացը կավարտվի:

  Նմանապես, տվյալ ծանրաբեռնվածությունը մենք չենք կարող դիտարկել որպես լրացուցիչ ծանրաբեռնվածություն միայն հկկու աշակերտի համար, քանի որ հատուկ մանկավարժի / հոգեբանի հետ այսպիսի հանդիպումները դիտարկվում են որպես այլ աշակերտների ինքնուրույն, տնային առաջադրանքների վրա աշխատանքի համօրինակներ, որոնք նույնպես նախատեսված են օրվա երկրորդ կեսին: Ավելին, դա չի կարող գնահատվել որպես ծանրաբեռնվածություն, եթե դասի այս տեսակը նախատեսված է աշակերտի համար, որը համաժամանակյա չի մասնակցում խմբային ուսուցման գործընթացին, տարբեր օրերին հկկու աշակերտը կարող է հանդիպել տարբեր առարկայի ուսուցիչների հետ: Տարրական աստիճանի դեպքում հնարավոր է, որ ուսուցիչը լինի մեկը, չնայած փոխվեն առարկայական ծրագրերն ու աշխատանքային նպատակները:

  Հազվադեպ, եթե կոնկրետ հկկու աշակերտի համար ոչ ռելևանտ է խմբում համաժամանակյա ընթացող ուսումնական գործընթացին մասնակցելը, և թե՛ հատուկ մանկավարժը, թե՛ առարկայի ուսուցիչը կամ ծնողը ազատ են օրվա համապատասխան հատվածում, դասի այս տեսակը կարող է պլանավորվել օրվա առաջին կեսին՝ համաժամանակյա ընթացող ուսումնական գործընթացին զուգահեռ:

- **Անհատական խորհրդատվություններ ծնողների և առարկայի ուսուցիչների հետ**
  Նպատակահարմար է հատուկ մանկավարժը/հոգեբանը առնվազն շաբաթը մեկ անհատական խորհրդատվություն ունենա հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի ծնողի կամ այն ուսուցիչների հետ, որոնք դասավանդում են այս աշակերտին:

  Անհատական խորհրդատվության ընթացքում հատուկ մանկավարժը/հոգեբանը ծնողի կամ ուսուցիչների հետ անդրադարձ կկատարի ընթացիկ շաբաթվա մասին (ժամանակահատվածի վերջին հանդիպումից) և կբացատրի առաջիկա շաբաթվա (կամ հանդիպմանը նախորդող ժամանակահատվածի) աշխատանքային նպատակները, միևնույն ժամանակ, եթե ծնողն անձամբ է աշխատում աշակերտի հետ, կծանոթացնի կատարվելիք ակտիվությունները, դրանց նպատակը և ակտիվության կատարման հետ կապված այլ հարցեր:

  Հետևաբար, հատուկ մանկավարժը/հոգեբանը տվյալ գործունեության համար կարող է սահմանել օրվա վերջը:

  Օրվա ընթացքում հնարավոր է խորհրդատվություն առնվազն երկու ծնողի և երկու ուսուցչի հետ:

- **Կրթական գործընթացի պլանավորում**
  Նշվածը հատուկ մանկավարժի/հոգեբանի գործունեության կարևոր բաղադրիչն է: Ուստի, նպատակահարմար է հատուկ մանկավարժը որոշակի ժամանակ հատկացնի տվյալ գործունեության համար: (Հնարավոր է շաբաթը մեկ օր հատկացնել յուրաքանչյուր աշակերտի ուսուցման գործընթացին անդրադառնալուն, նրա հաջորդ ուսումնական փուլի պլանավորմանը, նույն աշակերտի ուսուցիչների և ծնողների հետ հարցազրույցի անցկացմանը:) Կախված տվյալ աշակերտի կարիքից, հատուկ մանկավարժը/հոգեբանը որոշում է, թե որ առարկայի ուսուցչի հետ հանդիպումն է առաջնային: Սա նա որոշում է՝ ուսուցչի կողմից հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտի հետ անհատական և/կամ խմբային ուսուցման գործընթացի դիտարկման արդյունքում:

  Պլանավորման գործընթացում հատուկ մանկավարժը/հոգեբանը որոշում է հետևյալը.
  - Աշակերտի անհատական ուսումնական նպատակները, ակտիվությունները, նյութերը, որոնց հիման վրա նա պետք է աշխատի աշակերտի հետ:
  - Աշակերտի անհատական կրթական նպատակները, ակտիվությունները, նյութերը, որոնք կարող է առաջարկել առարկայի ուսուցչին՝ աշակերտի հետ աշխատելու համար:
  - Հանձնարարականներ ուսուցչին՝ ինչպես առաջնորդել ուսումնական գործընթացը, նպաստել աշակերտի ներգրավմանը և կառավարել նրա վարքը:
  - Հնարավոր է, տվյալ հարցերը հատուկ մանկավարժը լուծի ոչ թե ինքնուրույն, այլ հենց սկզբից մշակի առարկայի ուսուցչի հետ:
  - Աշակերտի զարգացման անհատական նպատակները, գործողությունները, նյութերը, որոնք կարող են առաջարկվել ծնողին՝ աշակերտի հետ աշխատելու համար, հանձնարարականներ ծնողի համար՝ ինչպես վարել աշակերտի հետ աշխատանքի գործընթացը, ներգրավվածությունը և վարքը, աշակերտի հոգեբանական-հուզական վիճակի վերաբերյալ մտորումները և այլն:

Իհարկե, անհրաժեշտ է, որ հատուկ մանկավարժը/հոգեբանը մշակված ծրագիրն ու հանձնարարականները գրավոր և մանրամասնորեն արտացոլի յուրաքանչյուր աշակերտի անհատական ուսումնական պլանում և այն հասանելի դարձնի համապատասխան կողմի՝ ուսուցչի և/ կամ ծնողի համար:

Ելնելով վերոնշյալից՝ խորհուրդ է տրվում, որ հատուկ մանկավարժը/հոգեբանը իր յուրաքանչյուր աշակերտի համար ստեղծի անհատական դասացուցակ՝ որտեղ կնշի տվյալ աշակերտի հետ կապված ակտիվությունները:

Տվյալ դեպքում.

- Խմբում աշակերտի դիտարկում, ուսուցչի աջակցություն համաժամանակյա ուսուցման ժամանակ
- Մեկը մեկի հետ աշխատանք աշակերտի հետ
- Աշակերտի հետ առարկայի (վրացերենի) ուսուցչի մեկը մեկի հետ աշխատանքի աջակցություն
- Ծնողին խորհրդատվության տրամադրում

Աշակերտի շաբաթվա ժամանակացույցը

Աշակերտ՝ Ա.Բ.

Ժամանակը	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ
09:00-09:30	վրացերեն	վրացերեն	վրացերեն	վրացերեն	մաթեմատիկա
09:30-10:00	մաթեմատիկա	օտար լեզու	մաթեմատիկա	օտար լեզու	վրացերեն
10:00-10:30	կենսաբանություն	մաթեմատիկա	կենսաբանություն	աշխարհագրություն	կենսաբանություն
11:00-11:30	արվեստ	պատմություն	արվեստ	պատմություն	օտար լեզու
11:30-12:00	օտար լեզու	աշխարհագրություն	օտար լեզու		քաղաքացիական կրթություն
Ընդմիջում					
12:00-13:00	մեկը մեկի հետ աշխատանք հատուկ մանկավարժի/ հոգեբանի հետ	մեկը մեկի հետ աշխատանք հատուկ մանկավարժի/ հոգեբանի հետ		մեկը մեկի հետ աշխատանք առարկայի (վրացերենի) ուսուցչի հետ /	
17:00-17:30			հատուկ մանկավարժի/ հոգեբանի և ուսուցչի անհատական խորհրդատվություն ծնողի հետ		

Լրացուցիչ ծառայության մատուցման անհրաժեշտություն

Մինչև ուսուցման հեռավար մոդելին անցնելը կամ դրանից հետո կարող է անհրաժեշտ համարվել ծնողի խորհրդատվություն աշակերտի հոգե-հուզական աջակցության և/կամ վարքի կարգավորման հարցերով, որոնք կարող են սրվել ֆիզիկական հեռավորության պայմաններում: Կարող է անհրաժեշտ լինի աշխատել նաև աշակերտի հետ:

Հետևաբար, կարևոր է աշակերտի հետ կապված՝ հատուկ մանկավարժը/հոգեբանը հեռավար ուսուցման մոդելի տեղափոխվելուց առաջ աշակերտի և ծնողի հետ ինտերակցիայի հետևանքով որոշի աշակերտի հոգեբանական-հուզական կարիքը և տրամադրի համապատասխան հանձնարարականներ կամ վարքի կարգավորման մասին խորհուրդներ ինչպես ֆիզիկական մեկուսացման պայմաններում, այնպես էլ այն ավարտվելուց հետո: Միևնույն ժամանակ, հեռավար կրթական գործընթացում աշակերտների հոգեբանական-հուզական վիճակի շուրջ մտորումները պետք է շարունակաբար ընթանան:

Հետևաբար, հատուկ մանկավարժը/հոգեբանը պետք է ուշադիր դիտարկի աշակերտին հեռավար հանդիպումների ժամանակ, կապ հաստատի նրա և նրա ծնողի հետ, որպեսզի ժամանակին նույնականացվի աջակցության անհրաժեշտությունը:

Անհրաժեշտության դեպքում կարևոր է, որ ինչպես աշակերտը, այնպես էլ ծնողը ստանան համապատասխան աջակցություն, որը պետք է իրականացվի դպրոցի ներքին ռեսուրսով կամ համապատասխան մասնագետների հրավիրմամբ (եթե դպրոցի ներքին կադրը չունի նման որակավորում):

Դա անելու համար նպատակահարմար է, Կրթության նախարարության Ներառական կրթության բազմամասնագիտական թիմի անդամների շրջանում նույնականացվեն այն մասնագետները, ովքեր իրավասու են խորությամբ գնահատել աշակերտի հոգեբանական-հուզական և վարքային կարգավորման հարցերը և համապատասխան խորհրդատվություն տրամադրել նրան և նրա ծնողներին: Հատուկ մանկավարժը պետք է տեղեկատվություն ունենա անձնակազմի մասին և պետք է կարողանա դիմել համապատասխան աջակցություն ստանալու համար (նույնիսկ եթե թիմի անդամը չի գործում այդ տարածքում): Հնարավոր է նաև, որ աշակերտը և ծնողը համապատասխան աջակցություն ստանան այն սոցիալական ծառայություններից, որոնցում ներգրավված է աշակերտը:

Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման գործիքը

Հեռավար ուսուցման գործընթացի կազմակերպման համար օգտակար գործիք է Հեռավար ինտերակտիվ անհատական ուսումնական ծրագրի փաստաթուղթը, որը պետք է հասանելի լինի դպրոցի ղեկավարությանը, ուսուցիչներին, հատուկ մանկավարժին / հոգեբանին և ծնողին:

Այս փաստաթղթում պետք է հստակորեն և բոլորի համար տեսանելի արտացոլված լինեն աշակերտի համար սահմանված ուսումնական նպատակները բոլոր առարկաներից:

Ընդհանուր փաստաթղթի միջոցով ուսուցիչները և հատուկ մանկավարժները / հոգեբանները հնարավորություն կունենան հետևելու աշակերտի ուսումնական գործընթացին, նպատակներին և նույնիսկ առաջընթացին: Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է ծնողին տեղեկացնել անհատական ծրագրի յուրաքանչյուր թարմացման մասին: Էլեկտրոնային անհատական ուսուցման փաստաթուղթն էլ ավելի է կարևորվում, եթե ծնողը ստիպված է անմիջականորեն իրականացնել աշակերտի ուսուցման գործընթացը: Դա անելու համար նա պետք է հստակ տեսնի այն գործողությունները, հրահանգները

և ուսումնական նյութերը, որոնք ինքը պետք է տրամադրի իր զավակին: Այս փաստաթուղթը պետք է հստակ ցույց տա ուսումնական ակտիվությունների և նպատակների կապը: Նույն փաստաթղթի միջոցով հնարավոր է, որ ծնողը գրավոր հրահանգներ ստանա, թե ինչպես աշխատի իր զավակի հետ: Փաստաթուղթը պետք է նաև հնարավորություն տա, որ ծնողը մեկնաբանություն թողնի կոնկրետ նպատակի և գործունեության վերաբերյալ, նկարագրի աշակերտի աշխատանքը, փաստաթղթին կցի աշակերտի կողմից կատարված աշխատանքը/ առաջադրանքը:

Նախապատրաստում հեռավար ուսուցման մոդելի անցնելու համար

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է նախապատրաստական փուլը և այն ակտիվությունների բաշխումը ժամանակի մեջ, որոնք դպրոցը պետք է իրականացնի՝ հատուկ կրթական կարիք ունեցող աշակերտներին հեռավար ուսուցման մոդելի տեղափոխելու համար:

Ակտիվություն
Հեռավար ուսումնական մոդելի անցնելու կանոնակարգերի ծանոթացում ծնողներին
Ծնողների հետադարձ կապի ընդունում. - Աշակերտի առաջընթացը - Աշակերտի լրացուցիչ կարիքները հեռավար ուսուցման ժամանակ - Ընտանիքում հասանելի տեխնոլոգիաներ և ռեսուրսներ - Ծնողի ծանրաբեռնվածությունը - Իրավասություններ թվային տեխնոլոգիաների օգտագործման մեջ
- Ծնողների թրեյնինգավորում - Թվային տեխնոլոգիաներ - Հեռավար ինտերկտիվ անհատական ուսումնական պլան
- Աշակերտների կարիքի սահմանում - Ուսուցման ձևաչափի սահմանում - Ուսուցման ժամանակացույցի կազմում - Ուսումնական պլանի կազմում, քննարկում
Հեռավար ուսումնական մոդելի անցման կանոնակարգերի ծանոթացում աշակերտին
Աշակերտի թրեյնինգավորում թվային տեխնոլոգիաների կիրառման մեջ

Միևնույն ժամանակ, նախապատրաստական փուլը չպետք է դիտվի որպես միանվագ գործընթաց, որը մենք ունենք հեռավար ուսուցման գործընթացի սկզբնական փուլում: Այն պահպանում է արդիականությունը հեռավար ուսուցման ժամանակահատվածում: Այս պարագայում այն դիտվում է որպես յուրաքանչյուր հաջորդ ամսվա (կամ երկու ամսվա) նախապատրաստական փուլ, որի ընթացքում կատարվում է ռեֆլեքսիա ընթացիկ գործընթացների վերաբերյալ, և որոշում կայացվում գործընթացը փոխելու / հարմարեցնելու կամ անփոփոխ շարունակելու մասին:

Այս ժամանակ կարևոր է, որ հատուկ մանկավարժը հոգեբանը և աշակերտի ուսուցման գործընթացում ներգրավված ուսուցիչները կրկին կապվեն ծնողի հետ և քննարկեն հրատապ խնդիրները.

Աշակերտի առաջընթաց

- ☐ Լրացուցիչ կարիքները՝ աշակերտի հոգե-հուզական վիճակ, վարքի կարգավորում, աջակցության անհրաժեշտություն
- ☐ Ընտանիքում հասանելի ռեսուրսները
- ☐ Ծնողի ծանրաբեռնվածությունը
- ☐ Ուսումնական ժամանակացույցի փոփոխության անհրաժեշտություն
- ☐ Ուսումնական նպատակների փոփոխություն
- ☐ Հավաքված հարցեր և այլն։

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

Հավելված 1.
Հանրակրթական հաստատությունը մաքրելու պրոտոկոլ

Նոր կորոնավիրուսի (COVID-19) համաճարակային վիճակի սրման ժամանակահատվածում աշխատելու համար

Նորմատիվային հիմք. _____
Պատասխանատու անձինք. _____

Մաքրելը.
- Որ զետեղարանները (սենյակները) ինչ ինտենսիվությամբ են մաքրվում
- Որ զետեղարանները մաքրելու համար որ մեթոդներն են օգտագործվում (թաց մաքրում, փոշին սրբել ...)
- Որ զետեղարաններում որ մակերեսներն են մաքրվում
- Որ զետեղարաններում որ մաքրման / լվանալու միջոցներն են օգտագործվում
- Ինչպես է տեղի ունենում թափոնների կառավարումը (պահանջներ՝ կապված տարաների հետ)

Մաքրելու համար հատկացված գույք և միջոցներ.
- հատակի մաքրման փայտ՝ թաց մշակման համար,
- երկու բաժին ունեցող դույլ՝ մաքուր ջուր/լվացնող հեղուկ,
- աղբահավաք և ավել,
- ձեռնոց և պահեստային ձեռնոց,
- մոմլաթե գոգնոց սանհանգույցում օգտագործման համար,
- լաթեր, այս թվում հատակի, ապակիների և կահույքի համար,
- լաթ զուգարանները մաքրելու համար,
- մաքրող սպունգ, խոզանակ, փափուկ մետաղական պարույր,
- օդի դեզոդորանտ,
- փայտե կահույքի մշակման միջոց (անհրաժեշտության դեպքում),
- կաշվե մակերևույթների մշակման միջոց (այսպիսինի առկայության դեպքում),
- լաթերը լվանալու համար լվացքի փոշի,
- մակերեսները մաքրելու փոշի կամ կրեմ,
- հեղուկ՝ հատակի մաքրման և փայլեցման համար, ըստ հատակի տեսակի (փայտ, սալիկ, լինոլեում և այլն),
- զուգարանակոնքի մշակման հեղուկ,
- ապակու մաքրման միջոց,
- նիկելի, արույրի և այլ մետաղական մակերևույթների մշակման միջոց,
- տրապների և կոլեկտորների մշակման միջոց,
- մեծ և փոքր աղբի տոպրակներ,
- մաքրման գործընթացն ավարտելուց հետո մաքրման գույքի մշակման համար ախտահանիչ լուծույթ:

Հավքարարի հանդերձանք (անձնական պաշտպանիչ միջոցներ).
- դիմակ
- դիմավահան
- մեկանգամյա խալաթ

- ձեռնոց
- փակ կոշիկներ

Նախապատրաստում մաքրելու համար.
Հանդերձավորման փուլերը և հաջորդականությունը.
- Ձեռքերի ախտահանում։
- Մեկանգամյա անջրաթափանց խալաթ հագնել՝ ետին մասում կոճկվող։
- Դիմակ և դեմքի վահան կրել։
- Ձեռնոցներ հագնել այնպես, որպեսզի խալաթի թևքերը ծածկվեն։

Մաքրելն ավարտելուց հետո
- Ձեռնոցները հանել՝ շրջելու սկզբունքով։
- Խալաթը հանել։
- Հանել դիմակը և դեմքի վահանը
- Ձեռքերի կրկնակի ախտահանում։



Հավելված 2.
Ցուցադրական գործողությունների ծրագիր

Ակտիվություն	I. կիսամյակ														Պատասխանատու անձ
	Շաբաթ														
	1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	12.	13.	14.	
Նոր կանոնակարգերը ծանոթացնել դպրոցական համայնքին															Անուն, ազգանուն
Աշակերտների մեջ փոխհատուցման կարիքների որոշում															Անուն, ազգանուն
Փոխհատուցման պլանի կազմում, քննարկում և դպրոցական ուսումնական պլանի փոփոխություն															Անուն, ազգանուն
Փոխհատուցման պլանի իրականացում															Անուն, ազգանուն
...															Անուն, ազգանուն
															Անուն, ազգանուն
															Անուն, ազգանուն

Հավելված 3.
Ուսուցման կազմակերպում. տարբեր տարբերակներ

1. Մեկ հերթով դպրոցներն անցնեն երկու հերթի և տարբեր աստիճանների աշակերտները հաճախեն հերթերով:

	Աստիճան/հերթ	Տարրական I-IV	Տարրական V-VI	Հիմնական	Միջնակարգ
Տարբերակ I	**Առավոտվա հերթ**	**X**	**X**		
	Կեսօրվա հերթ			X	X
Տարբերակ II	**Առավոտվա հերթ**	**X**			X
	Կեսօրվա հերթ		X	X	

2. Տարբեր աստիճանների աշակերտները հաճախեն օրերի հերթագայությամբ, իսկ միջնակարգ աստիճանի աշակերտներն ավելի շատ ժամանակ տրամադրեն հեռավար ուսուցման ձևաչափին:

	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ
Տարրական	**X**	**X**	**Հեռավար**	X	X
Հիմնական	X	Հեռավար	X	**Հեռավար**	**X**
Միջնակարգ	**X**	**Հեռավար**	Հեռավար	X	Հեռավար

3. Ստորև ներկայացված մոդելը կարող է կիրառվել մեկ հերթով և երկու հերթով դպրոցների համար, երբ զուգահեռ դասարանները տարբեր օրեր են հաճախում դպրոց:

Շաբաթ	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ
I	**VIIա**	**VIIա**	**VIIա**	VIIբ	VIIբ
II	VIIբ	VIIբ	VIIբ	**VIIա**	**VIIա**
III	**VIIա**	**VIIա**	VIIա	VIIբ	VIIբ
IV	VIIբ	VIIբ	VIIբ	VIIա	VIIա

4. Այս առաջարկը կարող են կիրառել միայն մեկ հերթով դպրոցները, երբ և՛ հերթ է ավելացված, և՛ բոլոր դասարանները միասին չեն հաճախում: Նման դեպքում աշակերտների քանակն ավելի նվազեցված է:

	Աստիճան/ հերթ	Երկուշաբթի	Երեքշաբթի	Չորեքշաբթի	Հինգշաբթի	Ուրբաթ
I շաբաթ	Առաջին հերթ	I-IV	IV	IV	V-VI	VI
	Երկրորդ հերթ	VII-IX	VII-IX	VII-IX	X-XII	X-XII
II շաբաթ	Առաջին հերթ	V-VI	V-VI	V-VI	I-IV	I-IV
	Երկրորդ հերթ	X-XII	X-XII	X-XII	VII-IX	VII-IX
III շաբաթ	Առաջին հերթ	I-IV	IV	IV	V-VI	VI
	Երկրորդ հերթ	VII-IX	VII-IX	VII-IX	X-XII	X-XII

Հավելված 4.
Նախապատրաստական փուլ հեռավար ուսումնական գործընթացի համար

Ակտիվություն	Նախապատրաստական փուլ հեռավար ուսումնական գործընթացի համար															
	1.օր	2.օր	3.օր	4.օր	5.օր	1.օր	2.օր	3.օր	4.օր	5.օր	1.օր	2.օր	3.օր	4.օր	5.օր	Պատասխանատու անձ
Հեռավար կրթական մոդելի անցնելու կանոնակարգերի ծանոթացում ծնողներին																
Ծնողների հետադարձ կապի ընդունում. - Աշակերտի առաջընթաց - Աշակերտի լրացուցիչ կարիքը հեռավար ուսուցման ժամանակ - Ընտանիքում հասանելի տեխնոլոգիաներ և ռեսուրսներ - Ծնողի ծանրաբեռնվածություն - Կարողունակությունը թվային տեխնոլոգիաների կիրառման մեջ																
Ծնողների թրեյնինգավորում - Թվային տեխնոլոգիաներ - Հեռավար ինտերկտիվ անհատական ուսումնական պլան																
- Աշակերտների կարիքի սահմանում - Ուսուցման ձևաչափի սահմանում - Ուսուցման ժամանակացույցի կազմում - Ուսումնական պլանի կազմում, քննարկում																
Հեռավար ուսումնական մոդելի անցման կանոնակարգերի ծանոթացում աշակերտներին																
Աշակերտի թրեյնինգավորում թվային տեխնոլոգիաների կիրառման մեջ																

Հավելված 5.
Ռեսուրս-սենյակում ախտահանման ամենօրյա հաշվառման թերթիկ

Երկուշաբթի						
Աշակերտ	**Մտնելու ժամանակը**	**Դուրս գնալու ժամանակը**	**Աշակերտն անցավ հիգիենայի ընթացակարգեր**	**Մշակվեցին**	**Պատասխանատու անձ**	**Ստորագրություն**
Ա.Բ.	09:00	09:30	V	• Անձնական օգտագործման իրերը • Ընդհանուր օգտագործման իրերը • Աշխատանքային մակերեսները, բռնակները, աթոռը • Օդափոխվեց սենյակը • Այլ _____	Հկկու անձի օգնական՝ Վ.Ս.	
Գ.Դ.	10:00	10:30	V	• Անձնական օգտագործման իրերը • Ընդհանուր օգտագործման իրերը • Աշխատանքային մակերեսները, բռնակները, աթոռը • Օդափոխվեց սենյակը • Այլ _____	Հատուկ մանկավարժ/ հոգեբան՝ Լ.Կ.	

Հավելված 6:
Հարցարան. Աշակերտի պատրաստակամությունը հեռավար ուսումնական գործընթացի նկատմամբ

Այստեղ դպրոցը կարող է կիրառել ենթադրյալ պատասխաններ, օրինակ՝ լավ, միջին, վատ կամ օգտագործվի 5 միավորանոց սանդղակ

Աշակերտի պատրաստակամություն հեռավար ուսումնական գործընթացի նկատմամբ *Տեղեկությունները հավաքվում են ծնողի, ուսուցչի/հատուկ մանկավարժի/հոգեբանի կողմից*	
Ինչպես է աշակերտն արձագանքում ուսուցչի և դասընկերների հետ հեռավար հանդիպմանը:	
Որքանով է ընկալում և ինչպես է արձագանքում աշակերտը հրահանգների հեռավար տրամադրմանը:	
Որքանով է ընկալում և ինչպես է արձագանքում աշակերտը ուսումնական նյութի էլեկտրոնային եղանակով տրամադրմանը:	
Աշակերտը որքանով է մտնում ուսուցչի հետ ինտերակցիայի մեջ հեռավար մեկը մեկի հետ հանդիպման ժամանակ:	
Աշակերտը որքանով է մտնում ինտերակցիայի մեջ դասընկերների հետ հեռավար հանդիպման ժամանակ:	
Որքանով է տարբերվում աշակերտի ինտերակցիան ուսուցչի հետ՝ խմբում եղած ժամանակվա համեմատ:	
Աշակերտը որքան ժամանակ կարող է անցկացնել էկրանի մոտ առանց ուշադրությունը ցրվելու:	
Որ ռազմավարություններն են օգնում աշակերտի ուշադրության կենտրոնացմանը հեռավար ուսուցման ժամանակ:	
Որքանով է աշակերտին օգնում հանգիստը ուշադրության կենտրոնացնելու, վերականգնելու համար:	
Աշակերտն ինքնուրույն կներգրավվի և կլինի համամասնակիցն այն հեռավար դասերի, որոնք կսահմանվեն դասարանի համար:	☐ Այո ☐ Ոչ
Հեռավար դասերին ներգրավվելու համար աշակերտին անհրաժեշտ է հետևյալ աջակցությունը.	☐ Ծնողի աջակցություն/կողքին լինել ☐ Հատուկ մանկավարժի/հոգեբանի ներկա գտնվելը դասին աշակերտի հետ ☐ Հատուկ մանկավարժի/հոգեբանի կողմից դասին հետևել (follow up) և աշակերտի հետ մեկը մեկի հետ աշխատանք՝ դասի թեմայի և աշակերտի ուսումնական նպատակին համապատասխան

Ուսումնական նպատակների ճշգրտումը ուսուցման ձևաչափի նախատեսմամբ *Տեղեկությունները հավաքագրվում են ծնողից, դաստիարակից և հատուկ մանկավարժից*	
Աշակերտը կազմած ուներ անհատական ուսումնական պլան հետևյալ առարկայական ծրագրերից.	1. _____ 2. _____ 3. _____ 4. _____ 5. _____ 6. _____
Աշակերտը շարունակում է մասնակցել հեռավար դասերին՝ հետևյալ առարկայական ծրագրերից. *Սահմանվում է ծնողի առաջնահերթության և ուսուցիչների տեսլականի նախատեսմամբ։*	1. _____ 2. _____ 3. _____ 4. _____ 5. _____ 6. _____
Աշակերտն ունի ուսումնական նպատակների ճշգրտման կարիք՝ հետագա ուսումնական ծրագրերում հեռավար ձևի նախատեսմամբ։	1. _____ 2. _____ 3. _____ 4. _____ 5. _____ 6. _____
Աշակերտն ուներ ուսումնական նպատակներ, որոնց վրա հատուկ մանկավարժի/հոգեբանի հետ մեկը մեկի հետ էր աշխատում։	☐ Այո ☐ Ոչ
Աշակերտը կշարունակի հեռավար մեկը մեկի հետ հանդիպումները հատուկ մանկավարժի/հոգեբանի հետ։	☐ Այո ☐ Ոչ
Աշակերտի մեկը մեկի հետ ուսումնական նպատակները ձևափոխման կարիք ունեն՝ ուսուցման հեռավար ձևի նախատեսմամբ։	☐ Այո ☐ Ոչ
Ծնողի դերը և ընտանիքի ռեսուրսները աշակերտի հեռավար ուսուցման ժամանակ	
Ծնողին ծանոթ են աշակերտի ուսումնական նպատակները։	☐ Այո ☐ Ոչ
Ծնողը կանոնավոր կերպով տեղեկատվություն է ստանում աշակերտի ընթացիկ ուսումնական նպատակների և ձեռքբերումների մասին։	☐ Այո ☐ Ոչ
Տեղեկատվությունը ծնողին տրամադրվում է հետևյալ ձևաչափի միջոցով։	☐ Բանավոր ուսուցչի/հատուկ մանկավարժի/ հոգեբանի կողմից ☐ Գրավոր
Ծնողը մասնակցում է աշակերտի տարաժամանակյա ուսումնական գործընթացին։	☐ Այո ☐ Ոչ
Ծնողը մասնակցում է աշակերտի համաժամանակյա ուսումնական գործընթացին։	☐ Այո ☐ Ոչ
Ընտանիքում կա ուսումնական ռեսուրս, ինչը հնարավորություն է տալիս աշխատել աշակերտի ուսումնական նպատակների վրա։	☐ Այո ☐ Ոչ

Օգտագործված գրականություն

1. Bergmann, J. and Sams, A., *Flip Your Classroom: Reach Every Student in Every Class Every Day*. 2012
2. Center for Global Development. Planning for School Reopening and Recovery After COVID-19. 2020
3. Centers for Disease Control and Prevention. Operating schools during COVID-19: CDC's Considerations. 2020
4. Education Endowment Foundation. COVID-19 Support Guide for Schools. 2020
5. International Task Force on Teachers for Education 2030. Supporting Teachers in Back-to-school Efforts: Guidance for Policy-makers. 2020
6. International Task Force on Teachers for Education 2030. Supporting Teachers in Back-to-school Efforts: A Toolkit for School Leaders. 2020
7. OECD. Supporting the continuation of teaching and learning during the COVID-19 Pandemic: Annotated resources for online learning. 2020
8. UK Department for Education. Guidance for full opening: schools. 2020
9. UNESCO. Framework for Reopening Schools. 2020
10. University of Washington. COVID-19 Literature Report Team. Summary of School Re-Opening Models and Implementation Approaches During the COVID 19 Pandemic. July, 6, 2020
11. Washington Office of Superintendent of Public Instruction. Reopening Washington Schools 2020: District Planning Guide. 2020
12. Washington Office of Superintendent of Public Instruction. Reopening Washington Schools 2020: Special Education Guidance. 2020
13. Կրթության կոալիցիա, Տարբերակման մոտեցման քաղաքականությունը կրթության մեջ, 2015։
14. Կրթության կոալիցիա, Ինչ պետք է նկատի ունենանք 2020-2021 ակադեմիական տարվա համար, Հանձնարարականներ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությանը, 2020։
15. Չիքոբավա Մարիամ, Վրաստանի կրթական համակարգը և համավարակի մարտահրավերները, Ամսագիր «Դպրոցի կառավարումը», N2, 2020։
16. Ուսուցիչների մասնագիտական զարգացման ազգային կենտրոն, Օժանդակ ձեռնարկ դպրոցի տնօրենների համար, 2010։

WORLD VISION ՎՐԱՍՏԱՆ

+995 32 215 75 15

Դ. Ուզնաձեի 78, 0102, Թբիլիսի

www.wvi.org/Georgia

www.bavshvebistvis.org.ge

info_georgia@wvi.org

/WorldVisionGeorgia